AZG NEW SHABAT.QXD 29/03/2018 21:38 Page 1

Ազգ
Azg
30 ՄԱՐՏ 2018 ՈՒՐԲԱԹ 12(5508)
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ISSN: 1829-1651

# Google Maps-ը՝ հայերեն



Հայերից, ով մեկ անգամ օգտվել է Google Maps- ի ծառայություններից, կհամաձայնի, որ 14 տարի առաջ ստեղծված այդ հարթակն անգլերեն կամ ռուսերեն գործածելն որքան էլ անխոչընդոտ եղած լինի, հայերեն տարբերակի կարիքն անշուշտ կա, իսկ անփոխարինելի է այն շերտի համար, որ միայն հայերենին է տիրապետում: Ըստ գերմանական աղբյուրների, Google Maps-ի արտադրության մենեջեր **Աթգուկո Յամագամին** իր բլոգում նշել է, թե ճանապարհաորոնողական այս ծրագիրն արդեն իր ծառայություններն է մատուցում 39 նոր լեզվով, որոնցով խոսում է 1, 25 միլիարդ մարդ, այդ թվում՝ հայերեն, վրացերեն, ադրբեջաներեն, թուրքերեն, եբրայերեն եւ այլ լեզուներով:

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ

ՕՐԵՐԻ ՀԵՏ

# Այսուհետեւ ուղիղ գծով՝ վարչապետին

Համենայնդեպս, նոր վարչաձեւը, որը Հայաստանում կիրառվելու է առաջիկա ապրիլի 16-ից սկսյալ, ունի մի շարք առավելություններ, որոնցից ամենակարեւորը, ըստ ինձ, մեկ եւ միակ կառավարական մարմին, ավելի պարզ՝ մեկ եւ միակ կառավարություն ունենալն է: Ասածս առաջին հայացքից կարող է արտառոց թվալ– հապա քանի՞ կառավարություն ունենք ներկայիս: Պատասխանեմ անմիջապես՝ երկուսը, ավելի ճիշտ՝ իրար մեջ ագուցված զույգ կառավարություններ, որոնցից գլխավորը հանրապետության նախագահինն է, որը Սերժ Սարգսյանի պարագայում փաստացի կշարունակի գործել մինչեւ առաջիկա ապրիլի 9-ը որպես բացարձակ իշխանություն՝ գործնականում գերազանցելով սահմանադրական իր իրավասությունները, անտեսելով օրենսդիր, գործադիր ու դատական իշխանությունների միջեւ հակակշռության սկզբունքը, մամուլի վերահսկողական իշխանությունն էլ՝ վրադիր:

Մերկապարանոց չթվալու համար ցանկանում եմ այստեղ բերել անձնական փորձառությունից ընդամենը մեկ դրվագ: Երկու տարի առաջ Ռամկավար Ազատական կուսակցության կենտրոնական վարչությունը կուսակցության 95-ամյակը նշելու համար որոշել էր վարձակալել Օպերայի դահլիճը տոնական համերգի համար, որին մասնակցելու հրավիրվել էին մեր լավագույն պարախմբերը: Բնականաբար պաշտոնական դիմում ներկայացվեց մշակույթի նախարարությանը, որին ենթակա է Օպերայի դահլիճը: Դիմումը անպատասխան մնաց ամբողջ 5 շաբաթ: Կողմնակի հետաքրքրությունների արդյունքում պարզվեց, որ կուսակցության դիմումը գտնվում է նախագահականում: Հարկ եղավ վերջինիս բացատրություն տալ, որ համերգը քաղաքական-կուսակցական բնույթ չի կրելու, այլ պարզապես գեղարվեստական ելույթներ են լինելու 95-ամյակի վերտառության ներքո: Փոխադարձ պայմանավորումից հետո դահլիճը ի վերջո տրամադրվեց եւ կայացավ համերգը՝ ի մեծ բավականություն հանդիսատես բազմության: Հատկանշական է նաեւ, որ պետական ներկայացուցիչներից որեւէ մեկը, ներքին կատարյալ կարգապահությամբ, ներկա չգտնվեց համերգին: Միակ բացառությունը կազմելու էր արտաքին գործոց նախարարը, որ նույնպես պաշտոնապես հրավիրվել էր միջոցառմանը, սակայն համերգի սկսվելուց կես ժամ առաջ ցավ էր արտահայտել, որ «անակնկալ զբաղվածության» պատճառով չի կարող ներկա գտնվել: Համերգը բոյկոտելու հրահանգը ըստ երեւույթին նրան ուշ էր հասել:

Առակս զի՞նչ ցուցանէ: Ոլորտների պատասխանատուները, այս պարագայում՝ նախարարները, իրականության մեջ անձամբ պատասխանատու չեն ոչ մի բանի համար: Երկրորդ՝ կառավարության անդամները ենթակա են ոչ թե իրենց անմիջական ղեկավարին՝ վարչապետին, այլ, առնվազն «քաղաքական» հարցերում, ինչպիսին է, ասենք, որեւէ համերգի ներկա գտնվելը կամ չգտնվելը, հանրապետության նախագահությանը: Երրորդ՝ համատարած անպատասխանատվության այս վիճակը համենայնդեպս ղեկավարվում է մեկ անձի կամ կենտրոնի կողմից: Չորրորդ եւ ամենահատկանշականը՝ անպատասխանատու պատասխանատուների կամ անիրավասու իրավասուների մի բազմություն է բազմած մեր երկրի կառավարման աթոռներին: Նրանք ստիպված են անել այն՝ ինչը թելադրվում է իրենց՝ առանց անձնական կատարման հնարավորության, հատկապես քաղաքական հարցերում:

Նման պայմաններում, իրավամբ պիտի հարց տա ընթերցողը, ո՞րն է լինելու առավելությունը նոր կամ վերանորոգ սահմանադրությամբ նախատեսվող եւ ապրիլի 16-ից գործադրության դրվելիք վարչաձեւի: Ասեմ պարզ ու մեկին՝ մեր երկիրը այդպիսով ձերբազատվելու է երկու կառավարություն ունենալու, յուրաքանչյուրն իր ուռճացված աշխատակազմը պահելու, պետական բյուջեն մսխելու ստիպողությունից: Իսկ ամենակարեւորը՝ պետական գործունեությունը քաղաքական, տնտեսական եւ հասարակական բոլոր ոլորտներում լինելու է ուղիղ եւ ուղղահայաց՝ առանց լաբիրինթոսային խարխափումների եւ շեղումների: Այսինքն, օրինակ, այսուհետեւ ոչ մի կուսակցություն ստիպված չի լինի– թող ինձ ների այս հեգնանքը- Օպերայի դահլիճը վարձակալելու համար դիմել պետական մի կառույցի, իսկ պատասխանն ստանալ մեկ այլ կառույցից: Այսուհետ՝ ուղիղ վարչապետին եւ ուղիղ վարչապետից:

Արդարեւ, պետական կառավարման այս ձեւը, ուր մուտք ենք գործելու ընդամենը 16 օրից, իմ կարծիքով շատ ավելի ձեռնտու է մեր երկրին, քան գոյություն ունեցողը: Ճիշտ է, խորքում դրանք նույնն են՝ անձնավորված-միապետական, սակայն նոր վարչաձեւը բոլոր պարագաներում նախընտրելի է:

Ի վերջո ե՛ս չէ, որ պիտի ապացուցեմ հայտնի ախիոման՝ երկու կետերի միջեւ ամենակարճը ուղիղ գիծն է:

ՀԱԿՈԲ ԱՎԵՏԻՔՅԱՆ

# Անպատասխան հարցեր՝ անվտանգության թեմաներով

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ




Այս շաբաթ ակնառու դարձավ մի քանի նշանային իրավիճակների համընկնումը՝ Հայաստանում իշխանության փոփոխության առաջիկա իրադարձություններին ընդառաջ:

Ռուս պաշտոնյաների իրար հերթագայող մի քանի այցելություններ՝ տարատեսակ բազմիմաստ հայտարարություններով, Կեմերովոյի առեւտրի կենտրոնում տեղի ունեցած դժբախտության զգայուն արձագանք Հայաստանից՝ վտանգի սրված զգացողությամբ նաեւ Հայաստանի համանման հաստատությունների համար, Իրանի նախագահ Ռոհանիի հանդիպում Ալիեւի հետ՝ Արցախի հարցի դիվանագիտական լուծման անհրաժեշտության եւ... երկրների տարածքային ամբողջականության կարեւորման հակասականությամբ, ռուս-վրացական բանակցությունների հերթական ձախողում Ժնեւում՝ Հայաստանի հեռահաղորդակցման հեռանկարի տխուր անդրադարձով: Մոտակայում՝ ապրիլյան պատերազմի երկրորդ տարելիցն է՝ Հայաստանին դաշնակիցների չաջակցման անուրախ հուշերով, դրան նախորդելու է Զատիկը, որ այս անգամ համընկել է ապրիլի մեկին, ավանդաբար խաբելու օր համարվող ամսաթվին՝ ակամա գաղտնուղերձով, թե ընդհանրապես ինչպիսի սարքովի ու սուտ կյանքով է ապրում մեր հասարակությունը՝ առերեւույթ ձու ներկելով ու քրիստոնյա ձեւանալով, իրականում ոչ քրիստոնեական բարքերով կյանքին ու ինքն իրեն խաբս տալով: Թող ների ինձ Աստված՝ նշանների տրամաբանությունն այս ուղերձն է ինձ փոխանցում: Ընդամենը մի հայացք գցեք մեր երկրի ապրելակերպին ու պնդեք հակառակը, եթե կարող եք. թղթի վրա ունենք խորհրդարանական հանրապետություն, սակայն խորհրդարանը երկրորդական-երրորդական դեր ունի որոշումների կայացման սկզբնափուլում, պատգամավորներն էլ այնտեղ են միջնորդավորված քվեով, երկրի վարչապետին ու նախագահին նշանակում են այդ միջնորրդավորված քվեն ստացողները՝ վերին որոշումներով, ու այս ամենի հետ ժողովուրդը կապ չունի: Մանավանդ՝ այդ միջնորդավորված քվեն ստացողների մի մասը, ասենք՝ «Ծառուկյան դաշինքը» խոստացել է իշխանության այլընտրանքը լինել, բայց եթե վարչապետի ընտրությանը աջակցի եւ նախարարական պորտֆելներ ստանա՝ կդառնա իրեն քվե տվողների ընդդիմությունը, ինչքան էլ որ դա անհավատալի թվա առաջին հայացքից: Սա՝ որպես քրիստոնեականի եւ ոչ քրիստոնեականի առօրյա բախման նկարագրություն:

Վերադառնանք նշանային իրադարձություններին՝ սրանք դիտարկելով Հայաստանի համար մոտակա ժամանակի պատուհանից:

Շաբաթասկզբին Ազգային ժողովում տեղի ունեցավ Հայաստանի ԱԺ արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի եւ ՌԴ Պետական դումայի ԱՊՀ գործերով, եվրասիական ինտեգրման եւ հայրենակիցների հետ կապերի կոմիտեի համատեղ նիստը, որը համանախագահեցին **Արմեն Աշոտյանը** եւ **Կոնստանտին Զատուլինը**: Նիստի հայ-ռուսական քաղաքական օրակարգն ու հետագայում հնչած հայտարարությունները, եթե հետ նայենք ու զուգահեռենք նաեւ մի որոշ ժամանակ առաջ ռուս խորհրդարանական մի այլ պատվիրակության այցի ու հնչեցրած հայտարարությունների հետ, ուրվագծում են Հայաստանի նկատմամբ ռուսական քաղաքականության ակտիվացման մասին այս ժամանակահատվածում՝ Հայաստանում իշխանության փոփոխությանն ընդառաջ, անկախ այն հանգամանքից, որ դրանք շատ վաղուց են նախապատրաստվել եւ պլանավորվել: Դե՝ Հայաստանում իշխանության փոփոխության ամսաթվերն էլ նոր չեն, սինքրոնացումը երկու կողմին էլ երեւի հարկավոր է եղել:

Հայաստանի համար շաբաթասկզբի այդ նիստը մի նոր հնարավորություն դարձավ, օրակարգային հարցերի համատեքստում, Ադրբեջանին Ռուսաստանի զենք վաճառելու վերաբերյալ անհանգստությունը մեկից ավելի անգամ բարձրաձայնելու: Միաժամանակ այդ հանդիպումները դարձան ռուսական կողմից հնչող նոր հավաստիացումների եւ կարծես թե մեղայականների առիթ առ այն, որ Ադրբեջանին վաճառվող զենքի ծավալն այլեւս առաջվանը չէ, բացի այդ՝ հնացած զենք է այդ երկրին վաճառվել, Հայաստանը ռուսների ամենաառաջին դաշնակիցն է տարածաշրջանում, վստահելի գործընկեր եւ այլն, եւ այլն:

«Չպետք է թույլ տալ խնդրի ռազմական ճանապարհով լուծում», չգիտես թե ում, կամ միգուցե հենց Ռուսաստանին հավաստիացրել էր Զատուլինը:

Մենք չենք կրկնի այն գեղեցիկ խոսքերը, որոնք սովորաբար ասվում են այդպիսի նիստերում եւ հանդիպումներում՝ «երկու եղբայրական ժողովուրդների դաշնակցային հարաբերություններին համահունչ», դա բավարար չափով արել են իշխանական ԶԼՄ-ները:

⇨12



Հայաստանի դիվանագիտական նախաձեռնությունները...

էջ 4



ԶԱՊԵԼ ԵՍԱՅԱՆ «Մահվան քավարանեն կուգամ, աղջիկս»

էջ Ա,Բ



Կապտահեր կինը՝ «սեւ այգում»

էջ 5

ՅԱԿՈԲ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

## Յառաջդիմութիւն դէպի ե՞տ

Աշխարհն ու մարդկութիւնը ատենը անգամ մը փոփոխութեան, վերափոխուելու կարիքը կը զգան, վերանորոգուելու եւ նոր թափ տալու համար իրենց կեանքին: Յաճախ փոփոխութիւնը կ՚ըլլայ հեզասահ ու հեշընթաց, երբեմն ալ, ճիշդ հակառակը՝ հինին դէմ պայքարելով ու ոտնատակ ընելով հինին հետ կապուած ամէն ինչ, ինչպէս որ Գրիգոր Լուսաւորիչ եւ հետեւորդները վարուեցան, երբ Քրիստոնէութիւնը տարածելու սիրոյն, աշխատեցան հինին հետքը չձգել: (Մենք պատմութեան հմուտ եւ դասագիրքերու հեղինակ ուսուցիչ մը ունէինք, որ «Գրիգոր Խաւարիչ» կ՚անուանէր Լուսաւորիչը, քանի որ ան մեր հարուստ հեթանոսական մշակոյթը ոչնչացուցած էր, ըստ իրեն):

Նոյնպէս վարուեցան նախկին Սովետական Միութեան անդամ երկիրները, 1990ական թուականներուն, ոչնչացնելով ամէն ինչ, որ Համայնավարութեան խորհրդանիշ էր, իսկ Երեւանի մէջ գլխաւոր հրապարակի Մերկուրովի ձեռակերտ Լենինի արձանը տապալեցին, երբ կրնային զայն թանգարան դնել որպէս պատմական արժէք:

Այսպէս ալ պատահեցաւ ու կը շարունակուի պատահիլ գրեթէ բոլոր ասպարէզներու մէջ ալ, սկսեալ քաղաքականութենէ, մինչեւ կենցաղ, արուեստ եւ նոյնիսկ կրօն:

Աշխարհի բոլոր երկիրներուն մէջ ալ գրանցուած յեղափոխութիւններն ու յեղաշրջումները միեւնոյն նպատակին ծառայած են՝ վերանորոգում: Նկարչութեան, գրականութեան, երաժշտութեան, պարարուեստի, թատրոնի եւ այլ ասպարէզներու մէջ վերացականի, գերիրապաշտի եւ անհեթեթի շարժումները միեւնոյն բացատրութիւնը ունին:

Մարդոց կենցաղին մէջ անարդուկ, պատառոտած զգեստները, նիստուկացի անյարգալից վիճակները, անխնամ, խռիւ մազերն ու մօրուքները, նոյնիսկ ճաշատեսակները, բոլոր-բոլորը յեղաշրջումի արդիւնք են, յեղաշրջում՝ երբեմն հինին վերադառնալով եւ երբեմն ալ՝ հինին, օրինաւորին, գեղեցիկին դէմ պայքարելով: Վարակը հասած է աւանդապաշտ Անգլիոյ, մինչեւ իսկ անոնց արտաքին գործոց նախարար Պորիս Ճոնսընի մազերուն...

Հայերս, որ ընդօրինակելու վարպետ ենք, վերջերս սկսած ենք, յանուն փոփոխութեան, յառաջ երթալու փոխարէն ետ երթալ: Սկսած ենք Հեթանոսական Հայաստանի ու Արեւապաշտութեան մասին գրառումներ կատարել, ոչ միայն գրառումներ կատարել, այլեւ ընդունիլ, որ Արեւապաշտներու հաւաքականութիւն կայ Հայաստանի մէջ, քումերով, հետեւորդներով, ծիսակատարութիւններով...

Բնութիւնը ինք ալ ինքզինք կը վերանորոգէ ամէն տարի, սակայն տիեզերական կարգ ու կանոնով, ոչ թէ կամայական ու անմիտ: Բնութիւնը նոր զարթօնք կ՚արձանագրէ ամէն տարի: Զարթօ՛նք՝ ողջունելու նորը, ոչ թէ նահանջելու եւ վերադառնալու հինին:

Աշխարհը անդադար յառաջընթացի մէջ է, տեղքայլն ու ետդարձը դէպի մահ կ՚առաջնորդեն: Մարդիկ հարկ է հասկնան, թէ ինչ կ՚ընեն, տասը չափեն, մէկ կտրեն, թէ ոչ կամաց-կամաց սղոցած պիտի ըլլան իրենց իսկ նստած ճիւղը:

Փոփոխութիւնը պէտք է ըլլայ դէպի առաջ, քայլ պահելով գիտութեան եւ ճարտարագիտութեան սրարշաւ յառաջընթացին հետ: Հինին վերադարձը ոչ միայն նորը մերժել է, կամ կարօտի մղում է, այլ՝ սնանկութեան ցուցանիշ, նոր միտք, նոր խօսք, նոր շարժում, նոր հեռանկար չունենալու փաստ:

Շատ հետաքրքրական գիտաերեւակայական, արկածախնդրական շարժանկար մը կայ՝ Back To The Future (Վերադարձ դէպի ապագայ), ուր ժամանակի մէջ ինքնաշարժով դէպի անցեալ ճամբորդողը կ՚ուզէ վերադառնալ դէպի ապագայ, այսինքն դէպի ներկայ: Իսկ ի՞նչ կոչելու ենք մերը, Forward To The Past ? (Յառաջընթաց դէպի անցե՞ալ):

Կարծեմ տարածուեցանք: Փորձեմ ամփոփել. ամբողջ տիեզերական համակարգը եւ անոր մէջ մեր աշխարհը անդադար վերափոխման ու վերանորոգման գործընթացի մէջ են, պէտք է քայլ պահել զարգացումի ու յառաջդիմութեան հետ, ոչ թէ հոսանքն ի վեր թիավարել: Ներկայէն դժգոհելով անցեալ չեն վերադառնար, կը դիմեն դէպի ապագայ:

## ՀՀ կառավարությունից պահանջում են վերանորոգել Վրաստանում գտնվող հայկական եկեղեցիները

Ծաղկազարդի օրը՝ մարտի 25-ին, այցելեցինք Թբիլիսի: Էքսկուրսիոն ծրագիրը բավականին հագեցած էր: Այցելեցինք Խոջիվանքի պանթեոն, Հավլաբար, եղանք հայկական եկեղեցիներում (Նոր Էջմիածին, Սուրբ Գեւորգ), տեսանք ժամանակին Թիֆլիսի ամենաբարձր շինության՝ Շամքորեցոց կամ Կարմիր Ավետարան հայկական եկեղեցու ավերակները:

Ըստ արխիվային վկայագրությունների՝ ուշ միջնադարում Թիֆլիսում եղել են 24 հայկական եկեղեցի ու վանք: Հայկական գործող եկեղեցիներ են եղել Թիֆլիսի բոլոր թաղամասերում: Ներկայումս պահպանվել է կեսը, մնացածները քանդվել են: XVIII դարում Թիֆլիսի 20000 բնակիչներից 14500-ը եղել են հայեր, 2000-ը վրացիներ: 19-րդ դարի սկզբում քաղաքի 2000 բնակելի տներից 1800-ը պատկանել են հայերին, այդ թվում՝ քաղաքի մշակութային ու վարչական կարեւորագույն շենքերի մեծամասնությունը:

Այցելությունների ընթացքում տեսանք հայկական եկեղեցիների բակերում վրացիք սեղաններ էին դրել եւ ստորագրահավաք էին կազմակերպել: Ինչ-որ մի տպագիր թուղթ էր դրված սեղանների, որ իբր իրենք թույլտվություն ունեն ստորագրահավաքի: Մեզնից մեկը ուզեց նկարել այդ թուղթը՝ չթողեցին:

Իմացանք, որ ստորագրահավաքը նրա համար էր, որ դիմեն Հայաստանի Հանրապետության նախագահին՝ Վրաստանի հայկական եկեղեցիները նորոգելու պահանջ-առաջարկով:

Ճիշտն ասած ինձ համար դա շատ զարմանալի էր: Հայկական եկեղեցիները սփռված են ամբողջ աշխարհով: Ինձ հայտնի չէ որեւէ երկիր, որն այդպիսի հարցով դիմել է մեր իշխանություններին: Ընդհակառակն: Օրինակ՝ Իրանում գտնվող մեր եկեղեցիների ու վանքերի վերանորոգման ու բարեզարդման աշխատանքներն ստանձնել է կառավարությունը, մահմեդակա՛ն կառավարությունը: Հայերն իրենց ավանդն են ներդնում իրենց բնակած յուրաքանչյուր երկրի բարգավաճման գործում եւ տվյալ երկիրն էլ նորոգում է հայկական եկեղեցիները: Իսկ թե Վրաստանում որոշ պաշտոնյաներ ինչպե՞ս են նորոգում, դրան ծանոթ են բոլորը: Երբ սովետական ժամանակներում գնացել էի Վրաստան հայկական դպրոցում դասավանդելու՝ տանիքը կաթում էր: Տնօրենն ասաց, որ 2 տարի առաջ են նորոգել: Պարզվեց, որ հատկացված գումարի չնչին մասն են ծախսել դպրոցի նորոգման վրա, մնացածը յուրացրել են: Շատ եռանդո՜ւն կերպով նորոգում էին նաեւ հայկական եկեղեցիներն ու վանքերը: Դռները փակում էին նորոգման համար: Քանդում էին հայկական եկեղեցուն բնորոշ տարրերը (ավազան, բեմ, որմնաքանդակներ եւ այլն), ավելացնում էին վրացականին բնորոշ ճարտարապետական տարրերը, ջնջում էին արձանագրությունները եւ վերաբացում էին որպես վրացական եկեղեցի: Եթե երկու բառով ասենք՝ եկեղեցու գողություն: Օրինակները բազմաթիվ են:

Ծաղկազարդի օրը կազմակերպված ստորագրահավաքն ինչպիսի՞ «նորոգումների» համար էին՝ չգիտեմ:

Հայերն ու վրացիները ապրել են կողք-կողքի դարերով: Այս փոթորկահույզ, անկայուն աշխարհում կուզենայի, որ հետեւեինք պատվիրանին՝ «սիրեցէք զմիմեանս»: Ուրիշ ճար չունենք:

Հարգանքով եմ վերաբերում վրաց ազգին եւ շատ կուզենայի, որ վաշխառուական, չարչիական հարաբերությունները բացառվեին մեր միջեւ:

Է. ԵՐԵՎԱՆՑԻ

## Հայուն միտքի թռիչքները

ԱՆԺԻԿ ՅԱԿՈԲԵԱՆ-ԿԱՆԻՄԵԱՆ

Եգիպտոս

Ընդունուած է, որ աշխարհի ամէնէն մարդասիրական մասնագիտութիւնը բժշկութիւնն է: Այս գիտութեան յառաջացումն ու զարգացումն ընթացած է մարդկութեան զարգացումին զուգընթաց: Քանզի մարդն իր ծնած օրէն խնամքի պահանջք ունի բժիշկի ու բժշկութեան անհրաժեշտութիւն:

Հայոց բժշկութեան արմատները դարերու խորերը կը ձգուին: Աշխարհի հնագոյն ազգերէն մին ըլլալով, դեռեւս Քրիստոսէ առաջ, աշխարհին յայտնի էր հայ բժիշկներու համբաւը: Հռոմէական պատմիչներն իրենց աշխատութիւններուն մէջ շատ անգամ նշած են հայոց բազմահմուտ եւ իմաստուն բժիշկներու մասին:

Վստահ եմ, որ ժամանակակից բժշկութեան մէջ ալ հայ բժիշկները իրենց կարեւոր եւ կայուն տեղն ունին: Ունի՛ն, քանզի մեր թշնամիները չկրցան հանճարն ու պայծառ միտքը խլել հայէն:

Տակաւին միջնադարու հայ մեծ բժշկապետ Ամիրտովլաթ Ամասիացին ըսած է, որ բժիշկը պէտք է պրպտուն միտք , բուժելու ձիրք, նուրբ եւ ճկուն ձեռքեր, սուր եւ ամենատես աչք ունենայ: Հնարամիտ, ստեղծագործ միտքը միայն կրնայ մտածել, ստեղծել եւ իր մտքի պայծառ թռիչքները, գաղափարները կեանքի կոչել:

Մարդկութեան մեծագոյն մասը իր սորվածով, գիտցածով կը գոհանայ: Սակայն մարդոց խումբ մը կայ (ցաւօք՝ շատ սակաւաթիւ), որ անդադար կը մտածէ կեանքը աւելի դիւրին ու թեթեւ դարձնելու մասին: Մարդոց այս տեսակը աշխարհ եկած է արդէն դժուարին մեր կեանքը կրցածին չափ թեթեւցնելու, գեղեցկացնելու, աշխարհին բան մը տալու առաքելութեամբ:

Արարիչն իր ստեղծած արարածներէն միայն մարդը օժտած է արարելու կարողութեամբ: Միայն մարդկային ուղեղն է ստեղծագործելու ընդունակ:

Աստուծոյ շնորհած ստեղծագործ, պրպտող, միշտ նորը փնտռող ուղեղով օժտուած է մեր քովը ապրող, աշխատող, բայց նաեւ արարող՝ բժիշկ, ակնաբոյժ, վիրաբոյժ, դոկտոր փրոֆեսոր **Տիգրան Յովակիմեանը**: Դոկտոր Տիգրան միքրովիրաբուժութեան մէջ գործածուող գործիքներ ստեղծած է, որոնք իսկական դիւրութիւն կ՚ընձեռեն վիրաբոյժին վիրահատութեան ընթացքին: Գործիքներ, որոնք միքրովիրաբուժութեան մէջ բազմաթիւ գործողութիւններ կրնան կատարել: Իւրաքանչիւր գործիք կը միաւորէ մինչ այսօր եղած՝ երկու-երեք, երբեմն նաեւ չորս միքրովիրաբուժական գործիք եւ ունի կառավարման երկբեւեռային առաւելութիւն: Անոնք ունին երկու ծայր, որոնք իրարմէ անկախ կրնան աշխատիլ: Կառուցուած է չժանգոտող պողպատէ: Կըներկառավարուի բազմաթիւ գործողութիւններ կատարող համընդհանուր կարգաւորիչով: Կրնայ աշխատիլ ժամացոյցի սլաքին ուղղութեամբ եւ հակառակը: Ձախլիկ վիրաբոյժներու համար պարզապէս յայտնութիւն մըն է այս գործիքը: Ակնավիրաբոյժը առանց գործիքը փոխելու՝ միայն մէկ նոր գործիքով, կը կատարէ քանի մը գործողութիւն: Միայն մէկ անգամ կը ներխուժէ աչքը եւ բազմաթիւ խնդիրներ կատարելով՝ կ՚արագացնէ գործողութեան ընթացքը եւ կը խնայէ ժամանակը: Գործիքը նաեւ առաւել առողջապահական եւ շատ յարմար է:

Մէկ անգամ գործածուող այս գործիքները դոկտոր Տիգրան իր ձեռքով պատրաստած է, փորձարկած՝ իր կատարած վիրահատութիւններու ընթացքին մէջ եւ առաջարկած է բարեկամ եւ ո՛չ բարեկամ գործընկերներուն:

Բազմաթիւ վիրաբոյժներ գործածած եւ մեծ հաւանութիւն տուած են այս գործիքներուն, որոնք ազատ կրնան գործածել նաեւ այլ միքրովիրաբոյժներ: Իսկ միջազգային բժշկական ամսաթերթ մը գրած է, որ մինչեւ իսկ կանացի բժիշկները այս գործիքին համար պիտի շնորհակալ ըլլան դոկտոր Տիգրանին:

Եգիպտոսի մէջ ընդհանուր բժիշկներու, ապա երկու-երեք անգամ ակնաբոյժներուն կոնֆերանսներուն մէջ քննարկուած եւ մեծ հաւանութեան արժանացած են այդ գործիքները: Միքրովիրաբուժական գործիքներ, որ ամիսը անգամ մը յայտնագործողի անուն եւ հեղինակային իրաւունք կը պարգեւեն դոկտ. Տիգրանին:

Եգիպտոսի բարձրագոյն կրթութեան նախարարութեան գիտական հետազօտութիւններու եւ գիտական նուաճումներու ակադեմիան այս գիւտը ընդունած եւ հաստատած է: «Journal of the Egyptian Society - Wolters Kluwer Publication.» ամսաթերթի մէջ տպագրուած եւ ընդունուած է որպէս՝ գիւտարարական նորութիւն: Հպարտութեամբ կը լեցուի հոգիդ, որ գիւտ-նորութիւն ստեղծողը մեր ազգակիցն է, եւ հեղինակային իրաւունքը՝ բժիշկ, ակնավիրաբոյժ, բժշկական գիտութիւններու դոկտոր-փրոֆեսոր Տիգրան Յովակիմեանինն է:

Կը շնորհաւորենք դոկտ. Տիգրանը մեծ յաջողութեան առթիւ եւ կը մաղթենք նո՛ր յաղթանակներ:

Երբ կը զրուցէի դոկտ. Տիգրանին հետ, կարծես կախարդական տուփ մը յայտնուեցաւ եւ մէջէն սկսաւ նոր գործիքներու շքերթը: Հասկցայ, որ այս գիւտերէն իւրաքանչիւրը իր կարգին կը սպասէ: Իսկ Տիգրանը սիրով կը բացատրէ, թէ ատոնցմէ որը ինչի համար է եւ որ գործը կը դիւրացնէ:

Կը դիտէի այդ գործիքները եւ ակամայ յիշեցի մեծ մտածողներէն մէկուն խօսքը. «Միայն մարդն է գործիքներ հնարող, ան տեխնոլոգիական էակ է...»: Այո՛, մարդն է, որ կը մտածէ աւելի դիւրին եւ յարմարաւէտ դարձնել իր ձեռքի գործիքները, շրջապատող աշխարհը:

Քանի դեռ կը ծրագրէի գրել այս յօդուածը, տեղեկացայ որ եւս վեց - եօթը նոր գործիք ընդունուած եւ հաստատուած է հեղինակաւոր բժշկական կազմակերպութեանց կողմէ: Անշուշտ հաճելի է եւ հպարտանալու տեղիք կու տայ: Բայց մինչեւ ե՞րբ եւ որքա՞ն կրնայ բժիշկը ի՛նք պատրաստել այս գործիքները:

Կըմնայ միայն մասսայական արտադրութիւն կազմակերպել, որ աշխարհն ալ առիթը ունենայ օգտուելու եւ գործածելու հայորդիին միտքի թռիչքները:

AZG NEW SHABAT.QXD 29/03/2018 21:38 Page 3



# Որոշ նկատառումներ ՀՀ զինված ուժերի արդիականացման ծրագրի շուրջը

ԱՐՄԵՆ ՄԱՆՎԵԼՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու

«ԱԶԳ»ում բազմիցս անդրադարձել ենք տարածաշրջանում տիրող ռազմաքաղաքական իրավիճակին եւ այդ պայմաններում համապատասխան պաշտպանական ռազմավարության մշակման անհրաժեշտությանը: Պաշտպանության նախարարի պաշտոնում Վիգեն Սարգսյանի նշանակումից հետո առաջ քաշվեց ազգ-բանակ հայտնի գաղափարը, որը, կարելի է ասել, գրավոր ձեւաչափ ստացավ «Հայաստանի Հանրապետության զինված ուժերի 2018-2024թթ. արդիականացման ծրագիր» փաստաթղթով, որը հրապարակվեց օրերս:

Ուղիղ մեկ տարի առաջ «ԱԶԳ» թերթում «Անվտանգություն» ընդհանուր վերնագրով հոդվածաշար տպագրվեց (հինգ հոդված), որտեղ մանրամասն կանգ առանք ազգային անվտանգային ու պաշտպանական ռազմավարությունների վերանայման անհրաժեշտության վրա: Այդ հոդվածներում շեշտում էինք, որ ապրիլյան իրադարձությունները պարզ կերպով ցույց տվեցին այն բացթողումները, որոնք



կան պետության անվտանգային ռազմավարության՝ մասնավորապես պետական այրերի կողմից անվտանգային մտածելակերպի բացակայության եւ դրա վտանգների մասին:

Սա է պատճառներից մեկը, որ ազգ-բանակ գաղափարի շրջանառությունից հետո «ԱԶԳ» թերթը ուշադիր հետեւում է այն բոլոր զարգացումներին, որոնք տեղի են ունենում դրա շուրջը, փորձելով վերլուծել եւ ներկայացնել այն ամենը, ինչ կապված է այդ նոր գաղափարի շուրջ տեղի ունեցող իրադարձություններին: Վերը նշված փաստաթղթի՝ յոթամյա զարգացման ու արդիականացման ծրագրի հրապարակումը լավ առիթ է այն քննարկելու ու հասկանալու, թե ինչ ուղղությամբ է պատրաստվում զարգացնել հայկական զինված ուժերը ՊՆ նոր ղեկավարությունը:

Քանի որ փաստաթուղթը ներկայացվում է որպես Զինված ուժերի արդիականացման ռազմավարություն, հետեւաբար հենց այդ տեսակետով էլ պետք է քննարկել այն: Ռազմավարական ծրագրավորման համար թերեւս կարեւորագույնը թիրախի, նպատակի հստակեցումն է, ինչը հնարավորություն կտա հետագայում մշակել դրան հասնելու ուղիները, եւ այս առումով թերեւս այս փաստաթուղթը աչքի է ընկնում այդ նպատակների մատնանշման հստակությամբ, ինչը որոշակի առավելություն է տալիս նրան (վերջին տարիներին Հայաստանում շրջանառության մեջ դրված եւ ռազմավարություն կոչվող բազմաթիվ փաստաթղթեր կան, որտեղ շատ հազվադեպ են հստակ կերպով նշել այն նպատակները, որոնց նրանք ձգտում են հասնել), այս առումով դրանք էականորեն տարբերվում են մինչ այդ հրապարակված այլ «ռազմավարություններից»:

Չորս մասից բաղկացած փաստաթղթի հենց առաջին գլխում՝ **Ընդհանուր դրույթներ**, շեշտվում է արդիականացման ծրագրի ընդհանուր նպատակները, որոնք ավելի մանրամասն, ներկայացվում են փաստաթղթի չորրորդ մասում՝ **Արդիականացման նպատակները եւ դրանց հասնելու ուղիները**: Ընդհանրապես ռազմավարական փաստաթղթեր ընթերցելիս հարկավոր է նախ եւ առաջ կարդալ, թե ինչ նպատակներ է այն հետապնդում եւ դա հասկանալուց հետո միայն կարելի կլինի ընկալել, թե ինչքանով է առաջարկվող փաստաթուղթը գործնական եւ իրատեսական:

Հաջորդը, նմանատիպ փաստաթղթերում, առկա ու հնարավոր ռիսկերի եւ վտանգների գնահատումը եւ ապա դրանց հաղթահարման ուղիների նախանշումն է: Այս ամենը հեղինակները ներառել են փաստաթղթի 2-րդ գլխում՝ **Ռազմավարական պլանավորման նկատառումներ** անվան տակ: Ընդհանրապես, ճիշտ կլիներ այս երկու մասերը իրարից առանձնացնել, սակայն հեղինակները այն փորձել են մեկ մասով ներկայացնել, ինչը զուտ տեխնիկական խնդիր է:

Ռիսկերի գնահատումը բավականին գրագետ եւ սթափ է ներկայացված, չնայած ոչ ամբողջական, մասնավորապես ԼՂ հակամարտության վերջնական կարգավորման «ցածր հնարավորություն»-ը կարեւոր գնահատում է, քանի որ այսպիսով հնարավորություն է բացվում մշակել համապատասխան քաղաքականություն դրանից բխող ռիսկերի հակազդման մասով: Աչքի է զարնում, որ ռիսկերի գնահատման մեջ չկա Թուրքիան, ինչը կարծում եմ լուրջ բացթողում է եւ դրան վաղ թե ուշ հարկավոր է վերադառնալ: Առկա ու հնարավոր ռիսկերի նվազեցման մասով բացակայում է պահեստազորի ակտիվացման տեսլականը որպես քայլ ի պատասխան նոր մարտահրավերների ու տարածաշրջանում ընթացող զարգացումների:

Վերադառնալով 4-րդ գլխին՝ Արդիականացման նպատակներ եւ դրանց հասնելու ուղիներ, ապա հեղինակները այստեղ առանձնացրել են 9 նպատակ, որոնք տարբեր կարեւորության են եւ միեւնույն չափով չեն արտահայտում այս փաստաթղթի տեսլականը: Առաջին նպատակը վերնագրված է՝ **Զսպման համակարգ:** Այստեղ թերեւս արժե շեշտել, որ զսպումը որպես ԶՈՒ արդիականացման փաստաթղթի նպատակ մատնանշելը արդարացված չէ, քանի որ զսպումը ավելի գլոբալ քաղաքականության՝ ոչ միայն ռազմական, այլեւ տնտեսական ու քաղաքական (թե՛ արտաքին եւ թե՛ ներքին) գործընթացների արդյունք է: Կասկածելի է ինչում պնդումը «ռազմական գործողությունների հնարավորինս վաղ փուլում դադարեցման» մասին նշումը: Նախ պատերազմական գործողությունների սկսելը արդեն իսկ նշանակում է, որ զսպման քաղաքականությունը տապալվել է եւ հետո անպայման չէ, որ պատերազմի դադարեցումը լավագույն լուծումն է, երբեմն այն հարկավոր է ոչ թե դադարեցնել, այլ ավարտին հասցնել, ինչը նոր ռազմաքաղաքական իրողություն կթելադրի տարածաշրջանում:

Ընդհանրապես բոլոր նպատակներն էլ կարեւոր են, որոնցից թերեւս արժե շեշտել 3-րդը՝ **Արժեքների եւ կրթական չափանիշերի վրա հիմնված անձնակազմի կառավարման համակարգը**: Ռազմական կրթությունը, ռազմական հետազոտական ու գիտական ուղղությունները թերեւս մեր պաշտպանական համակարգի ամենախոցելի կետերից են, հետեւաբար դրա հզորացումը իսկապես ռազմավարական նշանակություն ունի ՀՀ-ի համար, այս առումով մեր պետությունը պետք է ձգտի առաջատարը լինել աշխարհում, այլ հնարավորություն մենք ուղղակի չունենք:

Նպատակ 5-րդը՝ **Կայացած ռազմարդյունաբերական համալիր**, կարելի է ասել 3-րդ նպատակի շարունակությունն է, եւ դրանք կարող են գոյություն ունենալ միայն միասնաբար: Թերեւս կարեւոր նպատակներից է 6-րդը՝ **Զինվորական ծառայության այլընտրանքային լուծումներ եւ ակտիվ պահեստազոր**:

Ընդհանրապես իմ համոզմամբ պահեստազորն է, որ կարող է դառնալ իսկական ազգ-բանակ գաղափարի առանցքը. առանց այս ինստիտուտի ստեղծման եւ կայացման, այս գործընթացը կիսատ է: Հասկանալի է, որ պահեստազորը չի կարող զարգանալ գոյություն ունեցող օրենսդրական բազայի հիման վրա, քանի այն ոչ այնքան նպաստում, որքան վնասում է պահեստազորի գաղափարը, հետեւաբար շատ կարեւոր է, որ փաստաթղթում խոսվում է նորմատիվ իրավական բազայի ձեւավորման մասին:

Քննարկվող փաստաթղթի կարեւորագույն մասը 3-րդ գլուխն է՝ **Արդիականացման տեսլականը՝ ազգ-բանակ**: Այստեղ մանրամասն անդրադարձ կա այս տեսլականի հիմնական գաղափարներին՝ **առաջնորդություն, օրինապաշտություն եւ մարդակենտրոնություն, առաջադիմություն, նորարարություն եւ ներառականություն**: Այս գաղափարների առաջադրումը միավորում ու ուժեղացնում է ազգ-բանակ հայեցակարգի մոտեցումները՝ նրան տալով իրական ժողովրդական արժեք, իսկ պետության բնակչության մեծ մասի գիտակցական աջակցությունը այս ծրագրին՝ ռազմավարական նշանակություն ունի ու կարող է ապահովել դրա հաջողությունը:

Վերը նշվածների մեջ թերեւս կարելի է շեշտել առաջնորդության գաղափարի ներմուծումը, որը ոչ միայն կարեւոր է փաստացի պատերազմում գտնվող ժողովրդի համար, այլեւ նորարարություն իր տեսակի մեջ, քանի որ այսօր ազգի «էլիտա» իրեն համարող խավը հիշեցնում է դասալիքների ամբոխ, որի առկայությունը՝ իր բացասական իմիջով, միայն թուլացնում է պետության ու նրա զինված ուժերի մարտունակության գաղափարը:

Շատ կարեւոր է նաեւ ներառականության գաղափարը, քանի որ առանց հասարակական լայն աջակցության նմանատիպ ծրագիր իրականացումն անհնար է, իսկ դրա համար հարկավոր է շուրջօրյա բացատրական ու քարոզչական աշխատանք: Սա հատկապես կարեւոր է՝ հաշվի առնելով Հայաստանում գործող օտարերկրյա հակապետական տասնյակ կառույցների առկայությունը, որոնք պացիֆիզմի ու տարբեր այլ կեղծ գաղափարների անվան տակ արդեն իսկ պայքար են սկսել ազգ-բանակ հայեցակարգի դեմ:

Չնայած իր որոշակի թերություններին, այնուամենայնիվ, պետք է շեշտել, որ սա ամենահաջողված պետական ռազմավարությունն է, որ երբեւէ ներկայացվել է, այն բավականին գործնական է եւ մատնանշում ու հնարավորություն է տալիս թիրախավորված անդրադառնալ նաեւ մարտավարական այն ծրագրերին, որոնք պետք է գրվեն արդիականացման այս նախագիծը վերջնական նպատակին հասցնելու համար: Շատ կարեւոր է, որ այն չընկալվի որպես վերջնական պատրաստ փաստաթուղթ ու դրա կատարելագործման վրա աշխատանքը լինի շարունական:

## Աթենքում տեղի ունեցավ Բեռլինի վեհաժողովի 140-ամյակին նվիրված գիտաժողով

Մարտի 26-ին Աթենքում, Կիպրոսի դեսպանատանը, դեսպանության մշակութային բաժնի եւ Հայ-հունական ուսումնասիրությունների կենտրոնի համատեղ նախաձեռնությամբ ու «Հայաստան» հ/կ կենտրոնի համագործակցությամբ կազմակերպվեց Բեռլինի վեհաժողովի 140-ամյակին նվիրված միջազգային գիտաժողով:



Գիտաժողովը կրում էր «**Բեռլինի վեհաժողովից 140 տարի անց. Մակեդոնական եւ Կիպրական խնդիրների ծագումը եւ Հայկական հարցը**» անվանումը:

Բանախոսներն էին Աթենքի համալսարանի դասախոս **Սպիրիդոս Պոլումիդիասը**, Աթենքի համալսարանի դասախոս **Անդրեաս Անտոնոպուլուսը**, գրող, հետազոտող, Հայ-հունական ուսումնասիրությունների կենտրոնի քարտուղար **Հովսեփ Քասեսյանը**, Մոսկվայից հրավիրված «Ժամ» ամսագրի գլխավոր խմբագիր, մշակութաբանության դոկտոր, Մոսկվայի պետական մանկավարժական համալսարանի



դասախոս **Աննա Գիվարգիզյանը**, Հունաստանի իրավաբանների ընկերակցության վարչական խորհրդի անդամ **Աթանասիա Ֆոտիադին**:

Գիտաժողովի համակարգողն էր գրող, պատմական գիտությունների դոկտոր **Լուկաս Աքելոսը**:

Ամփոփելով Բեռլինի վեհաժողովում հայությանը վերաբերվող հարցերը, Հովսեփ Քասեսյանը մասնավորապես նշեց Հայկական հարցի միջազգայնացման եւ Օսմանյան պետական մեխանիզմի կողմից հալածվող հայության իրավունքների ճանաչման կարեւորությունը:

Աննա Գիվարգիզյանը խոսելով Բեռլինի վեհաժողովի պատմական դասերի, Խրիմյան Հայրիկի «երկաթե շերեփ»-ի, Հայ ազգային ազատագրական պայքարի առաջին փուլի ձեւավորման մասին, իր զեկույցն ավարտեց Հայրիկի պատգամով՝ «**Ահա թողում ձեզ մշտախոս կտակ, որ հայը իր հայրենատուր հողեն չբաժնվի, զի հողն պետք է կենաց եւ մահու օր. պինդ գրկե հողը**»:

Գիտաժողովին քննարկվեցին նաեւ Մակեդոնական եւ Կիպրական խնդիրների ծագման եւ հետագա զարգացումների հարցերը:

AZG NEW SHABAT.QXD 29/03/2018 21:38 Page 4



# Հայաստանի դիվանագիտական նախաձեռնությունները՝ վերսկսվող սառը պատերազմի պայմաններում

ԵՐՎԱՆԴ ԱԶԱՏՅԱՆ
Դետրոյթ, ԱՄՆ

Թվում է, թե սառը պատերազմի ժամանակաշրջանը վերադարձել է՝ վրիժառությամբ։ Արեւմտյան պետություններն ու Ռուսաստանի Դաշնությունը մեղադրանքներ են հնչեցնում իրար հասցեին, իսկ ռուսական հետախուզական մարմինների նախկին աշխատակցի թունավորումը Լոնդոնում այնքան է ուժեղացրել սառը պատերազմի հռետորաբանությունը, որ արեւմտյան գերտերությունները իրենց միասնական ձայնն են բարձրացրել ընդդեմ Ռուսաստանի։

Միջազգային լարվածության այս սաստկացումը նպաստեց, որ երկրի ներսում նախագահ Պուտինի ժողովրդականությունը նշանակալի աճ արձանագրի ու լուրջ հաղթանակ ապահովի նրան նախագահական վերջին ընտրություններում։

Մյուս բոլոր երկրները, որոնց ճակատագրերը այս կամ այն չափով կախված են վերոնշյալ գերտերություններից, դեռեւս փորձում են հասկանալ, թե ի վերջո ո՞ւր են առաջնորդելու այդ լարվածությունները։ Հայաստանը բացառություն չի կազմում։ Բայց, ի տարբերություն այլ երկրների, Հայաստանը, ինչպես նաեւ Արցախը, հետաքրքրական նախաձեռնություններով են հանդես գալիս, որոնք նախկինում, միեւնույն պայմաններում, հնարավոր չէր իրականացնել։

Եվրոմիության արտաքին գործերի բարձրաստիճան ներկայացուցիչ **Ֆրեդերիկա Մոգերինին** հայտարարել է, որ Եվրոմիությունն ու Հայաստանը երբեք այսքան մոտիկ չեն եղել միմյանց։ Այդ սերտ հարաբերությունն արդեն իսկ իր արտահայտությունն է գտել բարձրաստիճան պատվիրակությունների փոխադարձ այցելություններում։ Եվրոպական երկրների հետ այդ զարգացող հարաբերությունները կարծես նպաստել են, որ աշխուժանան նաեւ Հայաստանի հարաբերությունները Մ. Նահանգների հետ։

Միջազգային լարված իրադրության պայմաններում, խորհրդարանական մի պատվիրակություն Հայաստանից այցելեց Ամերիկա։ Միաժամանակ, նախարարների մի այլ պատվիրակություն Արցախից, նախագահ Բակո Սահակյանի գլխավորությամբ եղավ Մ. Նահանգներում, հակառակ Բաքվի կողմից ամերիկյան կառավարությանն ուղղված զայրացկոտ դիվանագիտական նոտաների։ Մ. Նահանգների դեսպանը հրավիրվել է Ադրբեջանի արտգործնախարարություն այցի վերաբերյալ բողոքի նոտան ստանալու, իսկ Ամերիկայում Ադրբեջանի դեսպանն էլ բողոքի նոտա է ներկայացրել պետքարտուղարությանը։

Ադրբեջանի կառավարության առարկությունը հիմնված է այն ենթադրության վրա, որ Արցախի նախագահին վիզա տրամադրելով Մ. Նահանգները փաստորեն ճանաչում է այդ չճանաչված պետությունը։ Ադրբեջանի բողոքը նաեւ ներառում էր սպառնալիք. «Ի պատասխան Մ. Նահանգների այս պահվածքին, Ադրբեջանը կարձագանքի փոխադարձ համապատասխան գործողություններով»։

Նման այցելությունները քաղաքական գործոններով են պայմանավորված եւ դրանցով էլ արդարացվում են։ Բայց, կոնկրետ այս դեպքում կար նաեւ իրավական մի կարեւոր հանգամանք։ Խոսելով նախագահ Սահակյանի գլխավորած պատվիրակության հետ հանդիպման ժամանակ **Ֆրենկ Փալոնեն** ասաց. «H.Res.697» բանաձեւը ներկայացնելու պատճառներից մեկը հստակ նշելն է, որ Արցախի հետ, չնայած դեռ ճանաչված չէ Մ. Նահանգների կողմից, հաղորդակցվելն ու այցելություններ կազմակերպելը չափազանց կարեւոր են»։ Այս տարվա հունվարին ներկայացված «H.Res.697» բանաձեւի պաշտպանների թիվն աճում է։ Ներկայիս 12 հովանավոր ունի այն։ Գումարած լրատվամիջոցներում ճիշտ ժամանակին հայտնված Հայաստանում Մ. Նահանգների նախկին դեսպան Ջոն Էվանսի գրությունը, որտեղ նա Վաշինգտոնին կոչ է անում պաշտոնապես ճանաչել Արցախը։ «Ժամանակն է, որ միջազգային հանրությունը ողջունի եւ միջազգային ընկերակցության անդամ պետություն ճանաչի Լեռնային Ղարաբաղի/Արցախի Հանրապետությունը», գրել էր դեսպանը։

Դա, ինչ խոսք, իր արձագանքը գտավ դիվանագիտական շրջանակներում։ Բայց առավել հետաքրքրական էր պետքարտուղարության պատասխանը ազերի բողոքներին։ Դրանում մի քայլ առաջ գնալով հստակ արտահայտված էր ազերի կառավարությանն ուղղված ուղերձն այն մասին, որ Արցախի ժողովուրդն իրավունք ունի անկախ ու խաղաղ կյանք վարելու։




Վաշինգտոնում կայացած կոնգրեսական ճաշկերույթի եւ բրիֆինգի ժամանակ նախագահ **Բակո Սահակյանը** երախտագիտական մեդալներ հանձնեց մի շարք օրենսդիրների՝ սենատոր Ջեկ Ռիդին (դեմոկրատ՝ Ռոդ Այլենդից), ներկայացուցիչների պալատի արտաքին հարաբերությունների հանձնախմբի նախագահ Էդ Ռոյսին (հանրապետական՝ Կալիֆոռնիայից), աստիճանավոր պատգամավոր Էլիոտ Էնգելին (դեմոկրատ՝ Նյու Յորքից), պատգամավորներ Դեյվիդ Սիսիլայնին, Ջիմ Կոստային, Բրեդ Շերմանին, Ադամ Շիֆին եւ Դեյվիդ Վալադոյին։ Նրանք բոլորը նշանակալի դերդրում ունեն Արցախի հարցում եւ մի քանիսն էլ անձամբ այցելել են այդ չճանաչված հանրապետությունը։ Շնորհակալություն հայտնելով բարձրաստիճան հյուրերին, նրանք իրենց ջերմ զգացմունքներն արտահայտեցին Արցախի ժողովրդի եւ նրա քաղաքական ապագայի հանդեպ։

Ճիշտ է, նախագահ Սահակյանի այցելության օրակարգում նախատեսված չէր հանդիպումներ վարչակազմի ներկայացուցիչների հետ, բայց իր հանդիպած օրենսդիրներից շատերը պետության շարժիչ ուժերն էին։

Արցախի պատվիրակության Վաշինգտոն կատարած այցելության օրերին, մեկ այլ պատվիրակություն Հայաստանից, կազմված իշխող կոալիցիայի անդամներից եւ ընդդիմադիր պատգամավորներից, նույնպես Մ. Նահանգներում էր գտնվում եւ հանդիպումներ ունեցավ ամերիկացի գործընկերների, քաղաքային կազմակերպությունների եւ հայկական համայնքային կենտրոնների ներկայացուցիչների հետ։ Այս վերջինի մասին ամերիկյան մամուլը չարձագանքեց, որովհետեւ Մ. Նահանգները ճանաչում է Հայաստանին եւ նման հանդիպումները համարվում են նորմալ՝ միջազգային հարաբերությունների շրջանակներում։ Հանդիպման արդյունքում ստեղծվեց մի հանձնախումբ, որն զբաղվելու է Հայաստանում բիզնեսի աշխուժացման եւ ամերիկահայ գործարարների ներգրավման հարցերով։

Այս բոլորը խոսում է այն մասին, որ մթնոլորտը փոփոխվել է։ Անցյալում արեւմտյան իշխանությունները չէին ողջունում նման այցելությունները, հատկապես արեւելք-արեւմուտք հարաբերությունների վատացման պայմաններում, որովհետեւ Հայաստանը համարվում էր ամրորեն կապված ռուսական ճամբարին։ Բայց ներկայիս, երբ Արեւմուտքի քաղաքական եւ ռազմական հնարավորություններից օգտվող թուրքական կառավարությունը իր անձնական շահն է առաջ մղում, Մ. Նահանգներն ու Եվրոմիությունը պարտավոր են իրենք տնօրինեն իրենց սեփական շահերը։ Այդ շահերի շրջանակներում է գտնվում Հայաստանին եւ Կովկասին դուրս բերել ռուսական ազդեցությունից եւ խրախուսել տարածաշրջանային իշխանություններին հարգել Իրանի դեմ կիրառվող պատժամիջոցները։ Պետքարտուղար Ռեքս Թիլլերսոնին պաշտոնազրկելը կարծես փոխել է Վաշինգտոնի առաջնահերթության դիրքորոշումը Իրանի միջուկային զենքի նկատմամբ եւ առաջիկա օրերին երեւի ավելի հստակ քաղաքական փոփոխություններ պետք է ակնկալել այդ տարածաշրջանում։

Ինչ վերաբերում է հայ-ռուսական հարաբերություններին, ապա որոշ տեղաշարժ նկատվում է նաեւ այստեղ։ Մինչեւ վերջերս Մոսկվան Հայաստանին վերաբերվում էր միապետական դիրքերից եւ այդ առումով Արեւմուտքի հետ Հայաստանի մերձեցումը վրդովմունք էր առաջացնելու Մոսկվայում։ Բայց ժամանակները կարծես փոխվել են, եւ Կրեմլը Հայաստանի եվրոպական ձգտումներին զգուշավորությամբ է վերաբերվում։

Մինչ Հայաստանի եւ Արցախի պատվիրակությունները այցելում էին Մ. Նահանգներ, ռուսական խորհրդարանական մի պատվիրակություն Երեւանում հանդիպումներ էր անցկացնում հայաստանյան խորհրդարանի պատգամավորների հետ։ Պատվիրակությունը գլխավորում էր Ռուսաստանի խորհրդարանի վերին պալատի արտաքին գործերի հանձնաժողովի նախագահ Կոնստանտին Կոսաչեւը։

Անցյալում երկու դաշնակիցների հարաբերություններում խոչընդոտ էր հանդիսանում Ռուսաստանի կողմից Ադրբեջանին վաճառվող արդիական զենքի մեծ քանակը։ Մոսկվայի ցինիկ պատասխանը միշտ նույնն էր եղել, որ կատարվածը սոսկ բիզնես գործարք է։ Երբեմն էլ ավելացվում էր, որ եթե Մոսկվան չվաճառեր, միեւնույն է՝ Բաքուն այդ զենքը կգներ միջազգային շուկայից։

Այս անգամ, այցելող պատվիրակությունը մի փոքր մեղմացրել է իր մոտեցումը։ Միջխորհրդարանական հանդիպման ժամանակ նման մի հարցի պատասխանելով **Կոսաչեւն** ասել է. «Ռուսաստանը պարզապես կատարում է 2016ի ապրիլից առաջ Ադրբեջանի հետ կնքած պայմանագրային իր պարտավորությունները։ Բայց դա, իմ ունեցած տեղեկատվության համաձայն, չի շարունակվելու միեւնույն մասշտաբով, իհարկե, մենք արձագանքում ենք 2016-ի ապրիլյան իրադրությանը։ Կասկած չկա դրանում»։

Նման հայտարարությունը կարելի է համարել զիջում՝ Հայաստանի մտահոգություններին։ Առաջին հարցը, որ ծագում է, այն է, թե Մոսկվան ուրեմն չէ՞ր կարող գուշակել Ադրբեջանին զենք վաճառելու հետեւանքները, որոնք պարզ դարձան առաջնագծում եւ սահմանային գյուղերում ազերիների հանկարծակի հարձակման հետեւանքում հայ մարտիկների եւ քաղաքացիական անձանց զոհվելուց հետո։

Հաջորդ հարցը այդ զիջման հավաստիությունն է, կամ դրդապատճառը։ Հայաստանում շատերն են կարծում, որ քաղաքականության այդ շրջադարձը Մոսկվայի նախաձեռնությամբ չէր, որովհետեւ Ռուսաստանի դեմ կիրառվող պատժամիջոցների պայմաններում Ադրբեջանի ղեկավարներն իրե՛նք հասկացել են, որ պետք է խուսափեն Արեւմուտքի իրենց ընկերներին նեղացնելուց՝ գնելով ռուսական զենքեր ի խախտումն իրենց սահմանած պատժամիջոցների ռեժիմի։ Այդուհանդերձ, ինչ էլ լինի դրդապատճառը, այդ շրջադարձը ողջունելի զարգացում է, որը վերացնում, ի չիք է դարձնում Ռուսաստանի հետ բնականոն հարաբերությունների գլխավոր խոչընդոտներից մեկը։

Հայաստանի գործադրած դիվանագիտական համեստ նախաձեռնությունները հավանաբար առավել կգնահատվեն մոտ ապագայում՝ միջազգային երկնակամարում կուտակվող քաղաքական սեւ ամպերի համատեքստում։

Թարգմ. ՀԱԿՈԲ ԾՈՒԼԻԿՅԱՆԸ
(The Armenian Mirror-Spectator)

## Ապրիլմեկյան ցուցահանդեսներ

*Ապրիլմեկյան ուրախ տոնը սիրող հայրենակիցնե՛ր, բարեկամնե՛ր, համամոլորակայիննե՛ր*

Ամենամյա ավանդական ցուցահանդեսը այս տարի զավակ երկնեց եւ բաժանվեց երկու մասի։ Ավագ (մայր) ցուցահանդեսը տեղի կունենա ապրիլի 1-ին ժամը 14:00-ին Չարենցի տուն-թանգարանում (Մեսրոպ Մաշտոց պողոտա, 17), իսկ այ կրտսեր զավակը որոշեց նույն օրը 17:00-ին «Նոյյան տապան» գրախանութի (Աբովյան 8) ներքնահարկում բացել գործարար ցուցահանդես «Ապրիլի 1՝ վաճառվում կամ տրվում է վարձով» խորագրով։

Եղեք ակտիվ եւ բաց մի թողեք տոնական օրը ուրախ անցկացնելու առիթը։

«Նոյյան տապանը» եւ Հայաստանի երգիծանկարիչների միությունը սիրով հրավիրում են ձեզ բոլորին։

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

# Բայց իսկապես՝ Հայաստանում մակաբույծներ կան

Նախագահ **Սերժ Սարգսյանը** չորեքշաբթի գնացել էր Գիտությունների ազգային ակադեմիա: Հենց այնպես չէ, այդ օրը ԳԱԱ տարեկան ընդհանուր ժողովն էր, ինչը հասկանալի է՝ մեր երկրում հեռավոր գյուղում պանրի փոքրիկ արտադրամասի բացման պես մի բան է. առանց նախագահի մասնակցության չի կարող տեղի ունենալ: Ինչեւէ, նախագահն ու գիտնականները հանդիպել են, զրուցել տարբեր թեմաների շուրջ, ամենայն հավանականությամբ՝ բացառապես գիտական, ու հասել են փողին: Նախագահը ասել է, որ բոլորը, նկատի ունի՝ գիտնականները, այսօր գումար են ուզում, ապա շեշտել. «Գումար ո՞վ չի ուզում, ես էլ եմ ուզում»: Դահլիճում բոլորը ծիծաղել են, ի դեպ դահլիճում բոլորը գիտնական են եղել:

Բայց սա չէ կարեւորը: Գիտնականներից մեկը՝ ակադեմիկոս **Սերգեյ Մովսիսյանը**, ներկաներին ներկայացրել է իր նոր գիրքը՝ հիմնված իր իսկ ուսումնասիրությունների վրա: Ակադեմիկոսը նշել է, որ գիրքը 230 տեսակի մակաբույծների մասին է ու շեշտել է. «Գիտենք, որ Հայաստանում մակաբույծներ կան, որոնք շատ վտանգավոր են»: Էլի բոլորը ծիծաղել են դահլիճում, այս անգամ՝ գիտնականներից բացի նաեւ նախագահը: Հետո գիտնականներն ու նախագահը շարունակել են շփումը: Ակադեմիկոս Մովսիսյանին ոչ ոք մինչեւ վերջ չի էլ լսել, ապա նախագահը հեռացել է, գիտնականները մնացել են յուրայիններով, եւ կրկին՝ առանց փողի, իսկ պարոն Սերգեյ Մովսիսյանին են մոտեցել մի խումբ լրագրողներ, որպեսզի հասկանան, թե «Հայաստանում մակաբույծներ կան» ասելով մարդը ի՞նչ նկատի ունի: Ակադեմիկոսը սիրով պատասխանել է. «Նախագահը ծիծաղեց, ես ուզեցի ասել, որ եթե վարակվենք, չենք ծիծաղելու, լաց ենք լինելու... Ես ասացի, թե Հայաստանում ինչքան լայն տարածում ունեն պարազիտները, եւ նա ծիծաղեց իմ այն ասածից, որ բացի կենսաբանական պարազիտներից, կան սոցիալ պարազիտներ: Այդ մակաբույծները ամբողջ շրջաններում կան, կենդանիների մոտ կան, մարդկանց մոտ էլ կան»: Հետո ակադեմիկոսն ավելի կոնկրետ նշել է, որ ամենավտանգավոր մակաբույծները, որոնց մասին իրեն այդպես էլ հնարավորություն չեն տվել խոսելու, Աստված գիտի, թե ինչեր հասկանալով կամ պատկերացնելով, լինում են խոզի հում մսի մեջ. «Եթե դրանք մտնեն մկանների մեջ, կոպսուլա կստեղծեն: Մարդու ոտքերը, կուրծքը, մեջքը կսկսեն ցավալ ու նա չի իմանա, թե դա ինչից է: Եթե ախտորոշումը ճիշտ լինի՝ հնարավոր կլինի բուժելը», ասել է Մովսիսյանը: Գիտնականը նշել է, որ 600 տեսակի մակաբույծներից մի քանիսն են, որ մարդու համար շատ վտանգավոր են, օրինակ՝ կանաչու վրա կան մակաբույծներ, որոնք կարող են առաջացնել լյարդի քաղցկեղ: Բայց ամենավտանգավորը հենց խոզի մսի մեջ հանդիպողն է: Լրագրողները ճշտել են ակադեմիկոսից, թե արդյոք նա պատրաստվո՞ւմ է ՀՀ նախագահին խորհուրդ տալ, որպեսզի նա խոզի մսից խորոված չուտի, գիտնականը պատասխանել է. «Նրանք գիտեն՝ ինչ կուտեն, չմտածենք նրանց մասին»:

Դրանից հետո ակադեմիկոսը խորհուրդ է տվել քաղաքացիներին խորոված անելիս միսը լավ խորովել՝ մակաբույծների վտանգը չեզոքացնելու համար:

Այնպես որ, գիտնականին փող տալու պես, նույնիսկ դրանից ավելի շատ կարեւոր է՝ նրան լսելը: Շատ հնարավոր է, որ նա նախ փող չի ուզում, երկրորդը՝ ունի կարեւոր ուսումնասիրություն՝ ուշագրավ բացահայտումներով, որոնք կարեւոր են, որպեսզի մենք երկար ու առողջ ապրենք եւ... շատ փող ունենանք, որպեսզի ոչ մեկից չուզենք:

Բոլոր պարագաներում ԳԱԱ հաջորդ տարեկան ընդհանուր ժողովը 2019-ին կլինի: Եթե մինչ այդ Ակադեմիան ինչ-որ միջոցառում չանի, նախագահը մեկ էլ հաջորդ տարի կհանդիպի գիտնականների հետ:

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

# Կապտահեր կինը՝ «սեւ այգում»

Եթե «Կարմրահեր կինը» վեպի հեղինակ, Նոբելյան դափնեկիր ազգությամբ թուրք Օրհան Փամուկը որոշի այցելել Արցախ, ապա հայկական երկրորդ հանրապետության համար դա մեծ պատիվ կլինի, չի բացառվում, որ նախագահ Բակո Սահակյանն էլ նրան ընդունի, իսկ ոստիկանապետը պատվի առնի Փամուկին Արցախում տեղափոխող մեքենան: Ավելին, որեւէ թուրք կարող է հանգիստ այցելել Արցախ, ճիշտ է, պետական անցակետերում նրան ճշտող որոշ հարցեր կտան, գուցե մերկացնեն, որպեսզի տեսնեն, թե մարմնի վրա արդյոք կա՞ գորշ գայլի պատկերով դաջվածք, եթե չլինի՝ նոր միայն ներս թողնեն, ճիշտ է, նախագահ Բակո Սահակյանը որեւէ թուրքի չի ընդունի անձամբ, բայց փաստն այն է, որ աշխարհում չկա մի ազգի ներկայացուցիչ, որը չի կարող մուտք գործել Արցախ: Նույնիսկ ադրբեջանցիները, համաձայն մադրիդյան սկզբունքների, որոնք դեռ ոչ ոք չի չեղարկել, կարող են, ավելին՝ իրավունք ունեն վերադառնալ Արցախ: Այնպես որ, Արցախի մուտքը բաց է ցանկացածի առջեւ՝ անկախ նրա ազգությունից, սեռից, տրամաբանում եմ՝ նաեւ սեռի բացակայությունից, կրոնից ու գույնից: Նկատի ունեմ՝ մաշկի, քանի որ օրինակ կապույտ մազերով աղջիկների մուտքը Արցախ... էլի կարելի է, բայց...




19-ամյա Ասյա Խաչատրյանը տարբերվող տեսակ է: Աղջիկը, անկեղծ ասած, չգիտեմ, թե ինչով է զբաղվում, բայց հաստատ գիտեմ, որ ծխում է եւ մազերը ներկում է՝ ամենատարբեր գույներով: Վերջին անգամ, երբ մեկնել էր Արցախ, ինչպես ինքն է ասում՝ «տեսնելու եւ աշխատելու», մազերը կապույտ է ներկած եղել: Կապույտը, ինչպես գիտենք, երկնքի, ծովի, խաղաղության եւ... ոստիկանի համազգեստի գույնն է: Ասյան ասում է, որ իրեն Արցախում շատ լավ ընդունել են եւ, ուշադրություն, տուն են տվել: Հետո նա սկսել է աշխատել (չի ասում, թե ինչ), եւ օրերից մի օր էլ, ավելի կոնկրետ՝ այս տարվա փետրվարի 1-ին, անձնական պատճառներով պատրաստվել է վերադառնալ Երեւան, գիշերվա ժամը մեկին: Հենց փողոցում էլ նրան է մոտեցել 2 ոստիկան, եւ հարցրել՝ «ամեն ինչ կարգի՞ն է»: Նա էլ պատասխանել է՝ «այո, ինչո՞ւ եք հարցնում»: Ոստիկաններն էլ ասել են, որ «դե գիշերվա այս ժամին, փողոցում մենակ աղջիկ, այն էլ սիգարետով ու կապույտ մազերով»...Մի խոսքով, ժպտացել են, միմյանց հաջողություն մաղթել ու հեռացել: Բայց գիշերը Ասյան չի վերադարձել Երեւան (ինչո՞ւ, չի ասում): Հաջորդ օրը նա գնացել է սրճարան, վառել է սիգարետը, սկսել է մի կողմից վայելել արցախյան մաքուր օդը, մյուս կողմից՝ թունավորել սրճարաններում նստածների օդը, եւ նրան են մոտեցել ոստիկաններ, պահանջել են անձնագիրը, ինչպես ինքն է ասում՝ կոպիտ, հետո նրան տարել են բաժին: Բաժնում Ասյային, իր խոսքերով, հարվածել են, հայհոյել են, ձեռք են առել... մի խոսքով՝ բաժնում, ինչպես բաժնում, կապ չունի արցախյա՞ն ոստիկանության, թե՞, օրինակ, մոլդովական կամ նույնիսկ՝ ամերիկյան: Ասյան, քանի որ ինչպես ինքն է ասում՝ ներվոզ ունի, սկսել է հեկեկալ, այդ ընթացքում ներս է մտել ոստիկան Ջոնը, կրկնում եմ՝ Արցախում աշխատող ոստիկան Ջոնը, որն, ի դեպ, միակն է Ասյային հանդիպած ոստիկաններից, որը ներկայացել է անունով, եւ Ասյային սկսել է ինքը հարցաքննել: Պարզվում է, որ Ասյան ծխում է կապույտ հաստ Winston կամ կարմիր Bond եւ, որ նա ամենեւեին էլ Բաքվում չի եղել ու «շպիոն» չէ: Ոստիկան Ջոնը Ասյային հորդորում է վերադառնալ Երեւան ու հանգիստ ապրել, Ասյան էլ ասում է, որ ուզում է մի քանի օր էլ մնալ Արցախում եւ չի ուզում փախչել, Ջոնն էլ ասում է, որ «եթե այդպես է, ապա աշխատիր փողոցներում գիշերվա մեկին չզբոսնել ու չծխել, ուզում ես ծխել, մտիր շքամուտքում ծխիր»: Ասյան էլ թե՝ «ծխել եմ ու ծխելու եմ, ավելին, եթե այստեղ որեւէ մեկի կարծիքով ծխող աղջիկը վատ բան է, որի գլխին կարելի է քարով հարվածել, ապա դուք, հարգելի ոստիկան, պարտավոր եք ինձ այդ մարդուց պաշտպանել, ոչ թե ինձ բերել բաժին ու ծեծել»: Ոստիկանն ասում է՝ «հա լավ, հանգստացիր, ներողություն»: Ասյան էլ ասում է՝ «OK»:

Հաջորդ օրը Ասյայի տուն են գալիս քաղաքացիական հագուստով երկու ոստիկան եւ առանց ներկայանալու փորձում են ներս մտնել: Եվ մտնում են: Ապա, առանց խուզարկելու թույլտվության, սկսում են աղջկա տունը զննել, որտեղ նա ապրում էր իր ընկերուհու հետ: Հետո երկուսին էլ տանում են բաժին...

Մի խոսքով, այս պատմությունը չափազանց երկար է, որպեսզի մեկ հոդվածում տեղավորվի: Հիմա Ասյան Երեւանում է, նա բողոք-դիմում է ուղղել դատախազություն, եւ ոստիկանության 6-րդ վարչությունից Դավիթ անունով ինչ-որ քննիչ նրան իր իսկ դիմումի համաձայն հեռախոսով կանչել է զրույցի, Ասյան էլ խորհրդակցել է իր փաստաբանի հետ ու որոշել, որ մինչեւ քննիչը համապատասխան ծանուցագիրը չուղարկի, ինքը ոչ մի տեղ էլ չի գնալու: Ի դեպ, այս պատմության թերեւս ամենակարեւոր մասը. Ասյան մազերը գունաթափել է, դրանք այլեւս կապույտ չեն եւ ուշադրություն չեն գրավում:

Աղմուկը՝ կապույտ մազերով աղջկա հետ կապված, ընդհանուր առմամբ սա է, եթե իհարկե չմանրամասնենք, թե ինչպես են Արցախում ոստիկանները Ասյային ասել՝ «կգնաս էս օրենքներովդ Հայաստանումդ կխոսաս»... Ոմանք պնդում են, որ աղջիկն ինքն է իր մազերի գույնով, սիգարետով ու վարքով, հատկապես գիշերներն աչքի ընկնելով մեղավոր, քանի որ այդպես սադրել է ոստիկաններին: Ոմանք պնդում են, որ Արցախն իրականում մարդկությունից եւ առաջընթացից կտրված կղզյակ է, որտեղ ոչ մեկին չեն թողնում, եթե նա տարբերվում է կամ տարբերվող կարծիք ունի: Կան ֆեմինիստներ, ովքեր հրաշալի առիթ են գտել՝ կանանց իրավունքների մասին խոսելու, ինչը հատկապես Արցախում, ինչպես իրենք են ասում՝ աղետալի է...

Իրականում այստեղ երեք խնդիր կա՝ էթիկական, իրավական եւ անձնական: Եթե, օրինակ, Քիմ Քարդաշյանը գնա Հորդանան եւ որոշի այցելել Աբու Դարվեշի մզկիթը, ապա չի կարող դա անել՝ բարեմասնությունները ցույց տալով կամ սիգարետով (ի դեպ, Քարդաշյանը չի ծխում), քանի որ դա դեմ է տեղի օրենքներին, եւ ինչն ավելի կարեւոր է՝ բարքերին: Ու նշանակություն չունի, որ Քիմը ազատ աղջիկ է կամ տարբերվող տեսակ. նա ինքը չի ցանկանա խախտել տեղի բարքերը: Մյուս կողմից, եթե Ասյա Խաչատրյանը Ստեփանակերտի գիշերային փողոցներում փորձել է ապացուցել, որ ինքն ավելի ազատ է, քան Արցախը, ապա դա չի նշանակում, որ նրան պետք է (կարելի է) հարվածել, հայհոյել եւ վախեցնել (հարցաքննել եւ պարզել ինքնությունը կարելի է, հաշվի առնելով Արցախում իրադրությունը): Հենց սա է այս պատմության ամենակարեւոր դրվագը, եթե մենք ամբողջ աշխարհին համոզում ենք, որ Արցախ ներթափանցած ադրբեջանցի դիվերսանտներին մատով անգամ չենք դիպչում, որպեսզի նրանց գլխից մի մազ անգամ չպակասի (անկախ նրանից, թե ինչ գույնի է այդ մազը), ապա ինչո՞ւ եւ ինչպե՞ս ենք հարվածում ոչ ադրբեջանցու, ավելին՝ հային, որն ընդամենը մերժում է բարքերը, ոչ թե օրենքը:

Եւ վերջապես, անձնական խնդիրը. Ասյան իսկապես լավ կանի թարգի ծխելը, ընդ որում ոչ թե Արցախում կամ փողոցում, այլ առհասարակ, ամենուր, մեկընդմիշտ. ոչ թե տգեղ է կամ անօրինական, այլ պարզապես վնասակար է:

Իսկ Ասյայի մորը, խորհուրդ եմ տալիս, հանգիստ թողնել. կինը վաղուց արդեն խուլ ու համր է, գուցե այդ պատճառով էլ Ասյան ծխում է...

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

*__Հ. Գ.__-Ի դեպ, Ասյա Խաչատրյանի հետ հարցազրույց է ունեցել եւ այն տարածել է epress.am կայքը, որը մեկ այլ առիթով հրապարակել էր հետեւյալ վերնագրով հոդված՝ «Հայ զինվորի նամակը՝ ադրբեջանցի ընկերոջը»:*

AZG NEW SHABAT.QXD 29/03/2018 21:38 Page 6



# Էրդողանը հազարավոր թուրքերի ծագումնաբանությունն է հրապարակել: Ո՞րն է դրդապատճառը:

***Ստորեւ թարգմանաբար միջազգային ճանաչման արժանացած լրագրող Ռոբերտ Ֆիսքի հոդվածը անգլիական «Ինդիփենդենտ» օրաթերթից:***



Որեւէ քաղաքացու ինքնությունը միայն Թուրքիայում է ազգային անվտանգության խնդիր համարվում: Այդ պատճառով էլ մինչեւ հիմա բնակչության գրանցման մատյանները փակ են եղել, դրանցում պարփակված մանրամասնությունները՝ պետական գաղտնիք: Ըստ Քեմալ Աթաթուրքի, որեւէ մեկը թուրք էր համարվում, եթե «որպես քաղաքացի թուրքական պետության հետ էր կապված»: Թուրքերը համարվում էին մաքուր էթնիկական ինքնություն ունեցողներ, չարատավորված այլ ռասսայական փոքրամասնությունների հետ խառնվելուց: Դրա համար նացիստները գովաբանում էին Աթաթուրքի հանրապետությունը, եւ թերթերը սեւ շրջանակներով լույս տեսան նրա մահվան կապակցությամբ:

Դրա համար էլ նախքան Լեհաստան ներխուժելը Հիտլերը հարցրել էր. «Ո՞վ է հիշում հիմա հայերին»: Աթաթուրքը ենթադրաբար ժառանգել էր հայերից զուրկ մի պետություն, ճիշտ այնպես ինչպես Հիտլերն էր մտադիր դարձնել Եվրոպան՝ հրեաներից զուրկ:

Քսաներորդ դարի առաջին Հոլոքոստի ժամանակ մեկուկես միլիոն քրիստոնյա քաղաքացիներ ոչնչացվեցին: Հայկական համարյա ամբողջ համայնքը կոտորվեց: Այո, համարյա: Երեք շաբաթ առաջ ծագումնաբանական տվյալների առցանց շտեմարանում անակնկալորեն հրապարակված բնակչության գրանցման մատյանների բովանդակությունը ցնցեց թուրքերին: Ամբողջ համակարգը կարծես փուլ եկավ: Պարզվեց, որ մեծ թվով թուրքեր իրականում հայեր են, կամ մասամբ հայեր, կամ մասամբ հույներ ու հրեաներ: Եվ արեւելյան Անատոլիայի լեռներից այն կողմ, Ստամբուլ, Իզմիր, Էրզրում, Վան եւ Գազի Այնթեպ քաղաքների շրջակայքում, ինչպես նաեւ դեպի Սիրիա ձգվող մահվան ճանապարհի ամբողջ երկայնքին մեկդարյա գերեզմաններից ուրվականներ դուրս եկան հաստատելու համար իրենց հայկական ներկայությունը Թուրքիայի պատմության մեջ: Մատյանների բովանդակությունը ապացուցում էր, որ նրանցից շատերը, ըստ իրենց նախկին ընտանիքների, դեռեւս կենդանի են:

Մինչեւ հիմա, մոտ երկու տասնամյակի ընթացքում, կամ առնվազն մինչեւ Սուլթան Էրդողանի հետհեղաշրջման փորձի բռնատիրության հաստատումը, հազարավոր թուրքեր ազատորեն, թեկուզ ոչ հրապարակային, խոսում էին իրենց նախնիների ինքնության մասին: Նրանք գիտեին, որ հայերի զանգվածային կոտորածների եւ բռնաբարությունների ժամանակ քրիստոնյա շատ ընտանիքներ կամ անհատներ իրենց կյանքը փրկելու նպատակով դավանափոխ էին եղել, ընդունելով մահմեդականությունը, իսկ տասնյակ հազարավոր երիտասարդ հայ կանայք եւ աղջիկներ կնության էին տրվել թուրք եւ քուրդ տղամարդկանց: Նրանց զավակները մեծացան որպես մահմեդական եւ իրենց համարեցին թուրքեր, բայց հաճախ գիտակցում էին, որ կիսով չափ հայեր են: Տասնյակ հազարավոր հայ որբեր մահմեդական դպրոցներ սկսեցին հաճախել, ստիպված եղան խոսել թուրքերեն եւ փոխել իրենց անունները: Դպրոցներից ամենամեծը Բեյրութում էր գտնվում՝ կազմակերպված Թուրքիայի ֆեմինիստական շարժման առաջնորդներից մեկի կողմից, որն հետագայում գրեց իր փորձառության մասին եւ մահացավ Ամերիկայում:

Հայ սփյուռքը, Թուրքիայից եւ Հայաստանից դուրս ապրող 11 միլիոն հայերը, որոնք 1915-ի ցեղասպանության զոհերի կամ վերապրողների հետնորդներն են, առաջինը արձագանքեց եւ հասկացավ նորահայտ մատյանների բովանդակության նշանակությունը: Այնտեղ տեղեկություններ կային, որ վերաբերում էին 1800-ականների վաղ շրջանին: Մոտ 4 միլիոն թուրք քաղաքացիներ 48 ժամվա ընթացքում իրենց ընտանեկան ծառի ակունքներն էին սկսել որոնել: Հետագա օրերին այդ թիվն ավելացել էր եւ ըստ թոշակառու վիճակագիր եւ ժողովրդագիր **Ջորջ Աղջայանի**՝ մոտ 8 միլիոն թուրքեր փորձել են պարզել իրենց տոհմաբանական ծառի իրական պատկերը: Դա արդեն Թուրքիայի բնակչության 10 տոկոսն է կազմում:

Փաստաթղթերը ամբողջական չեն եւ կարող են ոչ հստակ կամ ոչ պարզորոշ լինել: Դրանցում կան օրինակներ որպես մահմեդական նշված հայ նախնիների, որոնց ինքնությունը չի բացահայտված: Դավանափոխվածների անունները մահմեդական անուններ են, բայց որոշ դեպքերում նշված են նաեւ նրանց ծնողների քրիստոնեական անունները: Անհստակություններ միշտ էլ լինում են եւ լինելու են: Օսմանցի մատենագիրները միշտ չէ, որ ճշգրիտ տվյալներ (ծննդյան թվեր, եւայլն) են գրանցել: Թուրք գրագիրները հավանաբար ամիսը մեկ էին այցելում որեւէ գյուղ եւ նորածինների մասին գրանցում կատարում իրենց այցելության օրվա ամսաթվով կամ տարեթվով: Լիբանանում եւ Սիրիայում, օրինակ, հարյուրամյակը բոլորած մարդիկ կան, որոնց ծննդյան ամսաթվերն ու տարեթվերը նույնն են:

Բայց հարցը հետեւյալն է: Ինչո՞ւ է Թուրքիան հիմա բաց անում այդ մատյանները: Որոշ դիտորդներ նշում են, որ Էրդողանը մի ժամանակ բողոքում էր, որ թուրքերին «մեղադրում են հրեա, հայ կամ հույն լինելու մեջ»: «Ջումհուրիեթ» թերթի սյունակագիր **Թայֆուն Աթայը** գրել էր, որ իրեն «ընկերաբար խորհուրդ էին տվել չխոստովանել, որ ինքը վրացի է: Իսկ ինչպե՞ս վարվեն նրանք, ովքեր իմանում են, որ իրենք հայկական ծագում ունեն, կամ հավատափոխ են եղել: Պարզապես պատկերացրեք. կարծում եք, որ զտարյուն թուրք եք, իսկ պարզվում է, որ մաքուր հայ եք», նշել էր նա:

Լրագրող **Սերդար Քորուչուն «Ալ-Մոնիտորին»** ասել էր, որ «եթե մի քանի տարի առաջ կատարվեր, այս (մատյանների բաց անելը), երբ ավելի հանդուրժող էինք, դավադրական տեսությունները այսքան ուժեղ չէին ինչի, որքան այս օրերին, երբ պետությունը հավատում է, որ մենք կենաց-մահու պայքար ենք մղում: Այս ձեւով է Թուրքիան զորացնում Անկախության պատերազմի ոգին», հայրենասիրություն եւ կառավարամետ մտածողություն ներշնչելով:

Հայկական «Ակօս» թերթը, որի խմբագիր Հրանտ Դինքն սպանվեց իր աշխատավայրի առաջ, տեղեկացնում էր 2003-ին, որ թուրքական կառավարությունը իր մատյաններում գաղտնի կոդավորում էր փոքրամասնություններին:

Ըստ թերթի, հույներն առաջին համարի տակ էին, հայերը՝ երկրորդ, հրեաները՝ երրորդ, եւայլն: Քորուչուն վերհիշել էր, թե ինչպես 2007-ին թուրքական պատմական ընկերակցության տնօրենը սպառնացել էր փոքրամասնություններին ասելով. «Ինձ մի զայրացրեք: Ես դավանափոխ եղածների ցուցակն ունեմ եւ կարող եմ նրանց բնակավայրերը մեկ-մեկ մատնանշել»: Տնօրենը հետագայում դարձավ աջակողմյան «Նացիոնալիստական գործողություն» կուսակցության քաղաքագետներից մեկը:

Հայ լրագրող **Հայկո Բաղդատն** այս դիպվածն օգտագործել է «Ալ-Մոնիտորի» կայքին պատմելով մի առանձին հայ ընտանիքի պատմությունը, որը կարող էր ծիծաղելի թվալ, եթե ողբերգությամբ պատված չլիներ: «1915-ի ցեղասպանության օրերին, զանգվածային դավանափոխներից բացի կային նաեւ հազարավոր երեխաներ, որոնք պտարանդիներ դարձան: Հասարակությունը դեռ պատրաստ չէ առերեսվելու այս իրականության հետ»: Պատկերացրեք, ասել է Բաղդատը, որ Թուրքիայի կրոնական հարցերի տնօրեն **Լութֆի Դողանը**, եղբայրն էր Հայոց (երջանկահիշատակ) պատրիարք Շնորհք Գալուստյանի:

«Գալուստյանը, որ 1961-ին Բեյրութից Թուրքիա վերադարձավ, հայոց պատրիարքարանում հիշատակվում է որպես սուրբ եւ որպես 1915-ից հետո դժվարին ժամանակներում ծառայած անձնավորություն: Ասում են Ցեղասպանության օրերին երեխաներին իրենից հեռացնելով, մայրը դավանափոխ է եղել եւ հետագայում ամուսնացել Դողան անունով հասարակության մեջ բարձր դիրք ունեցող մի անձնավորության հետ, որն արդեն ուներ երկու դուստր եւ մեկ որդի: Այդ որդին Լութֆի Դողանն էր: Երբ մայրը, որ այդ ժամանակ «Նացիոնալիստական գործողություն» կուսակցության անդամ էր, մահացել է, Բեյրութից մի կղերական է եկել եւ մասնակցել հուղարկավորությանը: Ոչ ոք ոչինչ չի կարողացել ասել»:

Այս իրավիճակը հրաշալիորեն ներկայացված է **Ֆեթհիյե Չեթինի** մեծ մորը նվիրված հուշագրության մեջ: Նրա իսկական անունը Հրանուշ էր, ով կորցրել էր իր ամբողջ ընտանիքը, մոռացել էր իր մայրենի լեզուն եւ ստացել նոր անուն: Միայն մահվան սնարի մոտ իր թոռնուհուն բացահայտել էր, որ ծնունդով հայ է եղել: Նա հիշել էր իր մորը, հորը եւ այն գյուղը, որտեղ ծնվել էր: Ֆեթհիե Չեթինը «Ակօս» թերթում էր տեղադրել իր մեծ մոր մահազդը: Ազգականներն Ամերիկայում կարդացել էին, եւ Հրանուշի քույրը, որ ողջ էր դեռ, Չեթինին էր զանգահարել, եւ ընտանիքը վերամիավորվել էր:

Միգուցե երկու միլիոն թուրքեր նույնպես հայ տատիկներ ունեն, բայց նրանք պետք է շարունակեն հավատալ, որ... Ցեղասպանություն տեղի չի ունեցել:

Թարգմ. ՀԱԿՈԲ ԾՈՒԼԻԿՅԱՆԸ

## Արձագանքելով այլ նկարիչների ճակատագրերին



«Նկարիչներ կան, որոնք ոչ միայն գնահատում են այլ նկարիչների ոճն ու տաղանդը, այլեւ իրենց կտավներում անմահացնում նրանց ու նրանց գործերը», գրում է «Միրոր-Սփեքթեյթրի» խմբագիր **Ալին Գրիգորյանը**: Նա ներկայացնում է 1947-ին Բաքվում ծնված նկարիչ **Անդրեյ Ալլախվերդովին**, ում կտավները ներկայիս վաճառքի են հանվել իր իսկ կայքում (www.allakhverdov.com):

«Նկարիչների կյանքը շատ ողբերգական է եղել երբեմն: Նրանք շատ վաղ են մահացել: Արշիլ Գորկու նման նկարիչներ ավելի երկար են ապրել եւ ապրում իրենց կտավների շնորհիվ, քան իրենց ապրած տարիներով: Իմ նպատակն է նրանց հիշատակը հավերժացնել», նշել է նա վերջերս կայացած հարցազրույցի ժամանակ:

Ալլախվերդովի ծնողները Շուշիից են (Արցախ): Տեղափոխվել են Մոսկվա, որտեղ Անդրեյը հաճախել է Արվեստի պետական համալսարանը: 1979-ից Մոսկվայի նկարիչների միության, իսկ 1988-ից ԽՍՀՄ նկարիչների միության անդամ է: Աշակերտել է (եւ հետագայում բարեկամացել) նկարիչ Դմիտրի Նալբանդյանին: Վերջին 4 տարում ապրել է Բոստոնում եւ Մոսկվայում, որտեղ արվեստանոց ունի: Ամուսնացած է, ունի 3 զավակ, երկուսը՝ Ամերիկայում, մեկը՝ Մոսկվայում:

«Ուզում եմ միաձուլել հայկական, ռուսական եւ ամերիկյան ժանրերը, եւ ոչ միայն դրանք», ասել է նա ներկայացնելով հատկապես երկուսին իր կտավներից: Առաջինում Գուստավ Կլիմտն (1962-1918) է (ավստրիացի նկարիչ, 1897-ին Վիեննայում կազմավորված անջատողական գեղարվեստական միության համահիմնադիրներից), իսկ երկրորդում՝ Արշիլ Գորկին իր ամենահայտնի հայտնի կտավի հետ:

Հ.Ծ.

AZG NEW SHABAT.QXD 29/03/2018 21:38 Page 8



# «Արդարացումներն արդարադատության հայելին են, սակայն հանուն ցուցանիշների անհիմն արդարացումները վտանգավոր են»

## *Հարցազրույց ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահի, ՀՀ վաստակավոր իրավաբան Սերժիկ Սերգեյի Ավետիսյանի հետ*

***ՀՀ դատարանների կողմից 2017 թ. 180 անձի (4,7 տոկոս) վերաբերյալ կայացվել է 143 դատական ակտ, որից 142 անձ ձեռք է բերել լրիվ արդարացվածի կարգավիճակ, իսկ 38 անձ` մասնակի արդարացվածի կարգավիճակ: Այս տվյալներն նշում է ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահի, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ վաստակավոր իրավաբան Սերժիկ Ավետիսյանը` ավելացնելով, որ Արդարացման դատավճիռները մարդու հիմնարար իրավունքի պաշտպանության, նրա արդար դատաքննության իրավունքի ապահովման, դատարանների անկախության դրսեւորման գործուն միջոց են:***

**-Պարոն Ավետիսյան, ամփոփել եք արդյոք քրեական արդարադատության ոլորտին առնչվող ՀՀ դատարանների 2017 թվականի գործունեությունը, ինչպիսի՞ն են արդյունքները:**

-2017 թվականին ՀՀ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններում ստացվել է 5027 քրեական գործ, իսկ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ոլորտին ու դատական ակտի կատարման հետ կապված հարցերի վերաբերյալ` 20675 միջնորդություն (ընդհանուրը` 25694): Համեմատության կարգով նշենք, որ 2016 թվականի ընթացքում ՀՀ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններում ստացվել է 22316 քրեական գործ եւ միջնորդություն, այսինքն վարույթների քանակն ավելացել է 3378-ով (15,1 տոկոս):

2017 թվականին ՀՀ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների կողմից դատական ակտ է կայացվել 3919 անձի վերաբերյալ: Դատապարտված 2410 անձանցից` ազատազրկման ձեւով պատիժ է նշանակվել 1410 (58,5 տոկոս) անձի նկատմամբ, կալանքի ձեւով` 181 (7,5 տոկոս) անձի նկատմամբ, տուգանքի ձեւով` 752 (31,2 տոկոս) անձի նկատմամբ: Պատիժը պայմանականորեն չի կիրառվել 859 անձի նկատմամբ (53,9 տոկոս):

Հարկ է փաստել, որ աճել են` տուգանքը որպես պատժի տեսակ կիրառելու եւ պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպքերը:

Սակայն ազատությունից զրկելու հետ կապված, պատժատեսակների (ազատազրկում, կալանք) կիրառումը շարունակում է գերակշռել: Պատահական չէ, որ մենք այս առումով միջազգային կառույցների քննադատության թիրախում ենք:

Քրեական պատժողական քաղաքականության եւ իրավակիրառ պրակտիկայում շոշափելի արդյունքների կարելի է հասնել միայն համակարգված մոտեցմամբ, մասնավորապես անհրաժեշտ է արմատական բարեփոխումների ենթարկել պատիժ նշանակելու գործող օրենսդրության կանոնները, վերանայել սանկցիաները` դրանք համահունչ դարձնելով ՀՀ Սահմանադրության պահանջներին, այն առումով, որ օրենքով սահմանված պատիժը, ինչպես նաեւ նշանակված պատժատեսակը եւ պատժաչափը պետք է համաչափ լինեն կատարված արարքին (71-րդ հոդված):

Ուշագրավ է, որ կտրուկ նվազել են խուլիգանության, խարդախության, վաշխառության, ծեծի եւ այլ հանցատեսակները, ինչին նպաստել են նաեւ քրեական պալատի նախադեպային որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները:

**-Ինչպես հայտնի է, դատարանների իրական անկախության մասին խոսելիս կարեւոր է հաշվի առնել արդարացված անձանց թիվը: Ի՞նչ կարող եք ասել այդ մասին:**

-Արդարացման դատավճիռները մարդու հիմնարար իրավունքի պաշտպանության, նրա արդար դատաքննության իրավունքի ապահովման, դատարանների անկախության դրսեւորման գործուն միջոց են: Դրանք վկայում են դատավորների անկախության, անաչառության, սկզբունքայնության եւ պրոֆեսիոնալիզմի մասին:

Արդարացումներն արդարադատության հայելին են: Սակայն ակնհայտ անհիմն արդարացման դատավճիռները հանուն ցուցանիշների վտանգավոր են եւ հեղինակազրկում են կոնկրետ դատավորին եւ արդարադատությանը: Անհրաժեշտ է ընդգծել, որ ինչպես անմեղ անձանց դատապարտումը, այնպես էլ մեղավորների արդարացումը նույն չափով վտանգավոր են եւ հեղինակազրկում են արդարադատությունը: Այլ խոսքով` մենք դեմ ենք հանուն ցուցանիշների անհիմն եւ չպատճառաբանված արդարացումներին եւ պատահական չէ, որ դրանց մի մասը բեկանվում է:

Ինչպես նշվեց ՀՀ դատարանների կողմից 2017 թ. 180 անձի (4,7 տոկոս) վերաբերյալ կայացվել է արդարացման դատական ակտ:

2016 թվականի ընթացքում լրիվ կամ մասնակի արդարացվել է 187 անձ: Օրինակ` 2009 թվականին արդարացվել է 25 անձ (0,7 տոկոս): Վերջին 10 տարիներին Հայաստանում արդարացվել է 1000-ից ավելի անձ:

Համեմատության համար նշենք, որ հետխորհրդային երկրներում արդարացված անձանց թիվը չի գերազանցում 2 տոկոսը, օրինակ` Ռուսաստանի Դաշնությունում, Ուկրաինայի Հանրապետությունում, Բելառուսում, մի շարք Եվրոպական երկրներում այդ ցուցանիշը 1 տոկոսից պակաս է:

Հարկ եմ համարում նշել նաեւ, որ ձեռք բերված նվաճումների հարցում մեծ է նաեւ Վճռաբեկ դատարանի ձեւավորած նախադեպային իրավունքի դերակատարությունը: Այսօր դժվար է գտնել որեւէ վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք, ինչու չէ նաեւ դատական ակտ, որի հիմնավորումները կառուցված չլինեն Վճռաբեկ դատարանի այս կամ այն իրավական դիրքորոշման վրա: Մեր վերլուծությունները ցույց են տալիս, որ քրեական պալատի որոշումները հսկայական ազդեցություն ունեն ոչ միայն կանխատեսելի եւ արդյունավետ դատական պրակտիկայի, այլեւ ողջ քրեական արդարադատության, ինչպես նաեւ օրենսդրության զարգացման գործընթացների վրա:

**- Դուք նշեցիք, որ դատարանները ծանրաբեռնված են մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ոլորտին եւ դատական ակտի կատարման հետ կապված հարցերին վերաբերող միջնորդությունները քննության առնելու առումով: Խնդրում եմ մանրամասնեք:**

-2017 թվականի ընթացքում ՀՀ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններում ստացվել է 20675 միջնորդություն, որից 2363-ը (14,1 տոկոս) հանդիսացել է կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին միջնորդություն: Կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին 2363 միջնորդություններից 2220-ը (93,9 տոկոս) բավարարվել է:

Նույն ժամանակահատվածում ՀՀ դատարաններում ստացվել է գրավը որպես կալանավորման այլընտրանքային խափանման միջոց կիրառելու մասին 788 միջնորդություն, որից 125-ը (15,9 տոկոս) բավարարվել է:

Այսպիսով, 2017 թվականին ՀՀ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններում ստացված միջնորդությունների թիվն աճել է 2958-ով (16,7 տոկոս):

Հատուկ ուշադրության է արժանի կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու եւ կալանքը գրավով փոխարինելու հիմնահարցը:



Ինչպես նշվեց, քրեական հետապնդում իրականացնող մարմինների` կալանք կիրառելու կամ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու միջնորդությունների 92-94 տոկոսը բավարարվում է: Այս ցուցանիշները բոլորին են մտահոգում, չնայած, որ շատ երկրներում պատկերը նույնն է: Հաճախ տարբեր ամբիոններից եւ լսարաններից կարելի է լսել, որ առկա վիճակը պայմանավորված է դատարանների ոչ արդյունավետ գործունեությամբ: Կարծում եմ, որ պատճառները տարբեր են, եւ առաջին հերթին կապված են առկա օրենսդրական թերի կարգավորումներով:

Այսպես, գրավը համարվում է կալանավորման այլընտրանքային, այլ ոչ թե ինքնուրույն խափանման միջոց եւ կիրառվում է միայն այն դեպքում, երբ ստացվել է դատարանի որոշումը մեղադրյալին կալանավորելու մասին (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 134-րդ հոդվածի 4-րդ մաս): Այդ պատճառով, դատարանները հաճախ ստիպված են լինում մեղադրյալին կալանավորել այն հաշվառմամբ, որ հետագայում կարող է գրավ կիրառելու միջնորդություն լինի: Բացի այդ, գրավը դատարանի որոշմամբ կիրառվում է քննիչի կամ դատախազի միջնորդությամբ, իսկ սեփական նախաձեռնությամբ` միայն դատարանում գործը քննելիս (նույն օրենսգրքի 136-րդ հոդվածի 2-րդ մաս): Ժամանակն է նախատեսել այլ այլընտրանքային խափանման միջոցներ (տնային կալանք, վարչական հսկողություն, պաշտոնավարման կասեցում եւ այլն):

Կալանավորման վերաբերյալ միջնորդությունների քննության արդյունքում կայացված դատարանների որոշումների ամփոփումը վերլուծելիս, պետք է նկատի ունենալ եւս մի օբյեկտիվ բնույթի հանգամանք, որն ազդում է տվյալ ցուցանիշների վրա, այն է` հանցագործության մեջ մեղադրվող տասնյակ անձինք դիմում են փախուստի եւ նրանց նկատմամբ հայտարարվում է հետախուզում, որի պարագայում կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելը դառնում է պարտադիր պայման, քանի որ հետախուզման մեջ գտնվող անձանց հայտնաբերելու, ձերբակալելու եւ Հայաստանին փոխանցելու նախապայմաններից մեկը` կալանքը որպես խափանման միջոց ընտրված լինելն է:

Հարկ եմ համարում նշել, որ քրեական պալատը բազմաթիվ որոշումներ է կայացրել կալանավորման հիմքերի, հիմնավոր կասկածի չափանիշների, կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու, կալանքը գրավով փոխարինելու իրավաչափության եւ խափանման միջոցներին առնչվող այլ հարցերի վերաբերյալ: Արդյունքում կարող ենք փաստել, որ նախադեպային որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումներով իրավակիրառ պրակտիկան ընդհանուր առմամբ համահունչ ենք դարձրել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի պահանջներին եւ Եվրոպական դատարանի որոշումների ստանդարտներին:

Ճիշտ եւ նպատակահարմար կլիներ, որպեսզի մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնող մասնագիտացված դատարաններ ստեղծվեին, ինչը նախատեսված էր դատաիրավական բարեփոխումների հայեցակարգում: Այս տեսակի մեծաքանակ միջնորդությունները ներկայումս քննության են առնում միայն քրեական գործեր քննող դատավորները, ինչն առաջացրել է գերծանրաբեռնվածություն, ուստի այդ հարցում անհրաժեշտ է գտնել արդյունավետ լուծումներ:

**-Տարբեր ամբիոններից խոսվում է ՄԻԵԴ-ում «Արզումանյանն ընդդեմ Հայաստանի» գործով որոշման մասին եւ նշվում, որ ՀՀ վճռաբեկ դատարանը կալանավորման որոշումները բողոքարկելու տեսանկյունից իրավական պաշտպանության արդյունավետ միջոց չէ: Ի՞նչ կարող եք ասել այդ մասին:**

-Հարկ եմ համարում նշել, որ դիմումատուն ձերբակալվել եւ կալանավորվել է 2007 թվականի մայիսին: Այդ ժամանակահատվածում քրեական դատավարության

օրենսգրքով նախատեսված ընթացակարգի համաձայն` կալանավորման որոշումները ուժի մեջ էին մտնում Վերաքն-

AZG NEW SHABAT.QXD 29/03/2018 21:38 Page 9



նիչ դատարանի դատական ակտով եւ ենթակա չէին բողոքարկման վճռաբեկության կարգով: Այդ առումով ՀՀ կառավարությունը Եվրոպական դատարան ներկայացրել է առարկություն պնդելով, որ դիմումատուն խախտել է Եվրոպական դատարան դիմելու ընթացակարգը եւ չի դիմել Վճռաբեկ դատարան: Եվրոպական դատարանը նշված առարկությունը չի ընդունել, պատճառաբանելով, որ ՀՀ վճռաբեկ դատարան նշված որոշումների դեմ բողոքարկելու ընթացակարգ նախատեսող՝ հստակ ձեւակերպված որեւէ դրույթ դատավարության օրենսգիրքը այդ ժամանակաշրջանում չի պարունակել:

Ելնելով վերոգրյալներից, Եվրոպական դատարանը արձանագրել է, որ ՀՀ վճռաբեկ դատարանը կալանավորման որոշումները բողոքարկելու տեսանկյունից խնդրո առարկա ժամանակաշրջանում չի եղել ներպետական իրավական պաշտպանության արդյունավետ միջոց, հետեւաբար նաեւ կարիք չկար Եվրոպական դատարան դիմելուց առաջ վճռաբեկ բողոք ներկայացնելու:

Գործող օրենսդրական կարգավորումները այսպիսի խնդիրներ չեն պարունակում եւ խափանման միջոցների վերաբերյալ որոշումները առանց որեւէ սահմանափակման կարող են բողոքարկվել Վճռաբեկ դատարան: Ուստի, Եվրոպական դատարանի դիրքորոշումը չի վերաբերում ՀՀ վճռաբեկ դատարանի ներկայիս պրակտիկային:

**- Ի՞նչ կարող եք ասել ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի 2017 թվականի գործունեության վերաբերյալ:**

-ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատում 2017 թվականին ստացվել է 1911 վճռաբեկ բողոք, որոնցով բողոքարկվել է Վերաքննիչ դատարանի 1454 դատական ակտ (47,7 տոկոս):

Բերված 1911 բողոքներից 100-ը (5,2 տոկոս) ընդունվել է վարույթ:

Վարույթ ընդունված 100 բողոքներից 76-ը՝ բավարարվել է:

Ընդ որում, ամբողջությամբ բավարարված հիշյալ 51 բողոքներից 27-ով բեկանվել է ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի դատական ակտը եւ օրինական ուժ է տրվել առաջին ատյանի դատարանի դատական ակտին:

Արձանագրենք, որ 2017 թվականի ընթացքում՝ 2016 թվականի համեմատությամբ, ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատում ստացված ընդհանուր բողոքների քանակն ավելացել է 130-ով (7,3 տոկոս), բողոքարկված դատական ակտերի թիվը՝ 122-ով (9,2 տոկոս), իսկ բավարարվածների թիվն աճել է 24-ով (86,3 տոկոս):

Վերջին երեք տարվա ընթացքում վճռաբեկ բողոքների թիվը աճել է 32 տոկոսով:

Հարկ եմ համարում նշել, որ մինչեւ 2017 թվականը քրեական պալատի հիմնարար որոշումների քանակը չի գերազանցել 60-ը: 2017 թվականին քրեական պալատը կայացրել է 82 հիմնարար որոշում, իսկ 13 բողոք փոխանցվել է քննության 2018 թվականին:

Այս դրական ցուցանիշները վկայում են, որ էապես բարձրացել է դատավարության մասնակիցների վստահությունը մեր նկատմամբ, նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի հայտնաբերված էական խախտումներն առանց հետեւանքի չեն մնում:

Այսպիսով, քրեական գործերով եւ միջնորդություններով ընդհանուր կայունությունը ՀՀ դատական համակարգում կազմում է 97,1 տոկոս:

*Հարցազրույցը՝*
*ՀԱՍՄԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ*

# Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանում մշակվել է ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության վերանայված նախագիծը

ԱՌԼԵՆ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
**Մայոր, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի ավագ սպա, ՊԱՀՀ-ի հայցորդ**

2018 թ. ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանը (ՊԱՀՀ) ձեռնամուխ եղավ ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության (ՀՀ ԱԱՌ) վերանայված նախագծի մշակմանը եւ մեթոդաբանական իմաստավորմանը՝ հաշվի առնելով աշխարհում անվտանգության գիտության եւ պրակտիկայի ինտենսիվ նորացումը, թվային դարաշրջանում ՀՀ անվտանգության ապահովման անհրաժեշտությունը՝ ՀՀ ԱԱՌ-ի սկզբունքների եւ հիմնադրույթների հաշվառմամբ:



Այդ գործընթացի հիմքում ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի (ՊԱՀՀ) հիմնադիր-պետ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, գեներալ-լեյտենանտ Հայկ Քոթանջյանի գիտական ստաժավորումն էր ԱՄՆ-ի Պաշտպանական ազգային համալսարանում (ԱՄՆ-ի ՊԱՀ): Ստաժավորման ընթացքում նա նախանշել էր այն հիմնական նորարարական ուղղությունները, որոնց վերաբերյալ հետազոտություններն առանցքային նշանակություն ունեին ՀՀ ԱԱՌ-ի վերանայման համար: Հատկանշական է, որ դեռեւս 2006 թ. ԱՌՀԻ-ն՝ ԱՄՆ-ի ՊԱՀ-ի գիտական խորհրդատվություններով, ամերիկյան մեթոդաբանության կիրառմամբ, ինչպես նաեւ ռուսաստանյան ուղեղային կենտրոնների փորձի ադապտացմամբ դարձել էր ՀՀ ԱԱՌ-ի միջգերատեսչական մշակման գիտական համադասողը եւ, ըստ էության, ՀՀ ԱԱՌ-ի վերանայումը նույնպես մտնում է ԱՌՀԻ-ի առաքելության մեջ:

ԱՌՀԻ-ն պլանավորել էր իրականացնելու ՀՀ ԱԱՌ-ի վերանայման գործընթացը դեռ 2013 թվականին, սակայն այն հետաձգվեց՝ ԱՄՆ-ի եւ ՌԴ-ի հետ հավասարակշիռ անվտանգային հարաբերությունների պահպանման ուղիների վերաիմաստավորման անհրաժեշտությամբ: ԱՄՆ-ի եւ ՌԴ-ի միջեւ ռազմավարական հակասությունների խորացման հետեւանքով վերցված դադարի ժամանակ, ՀՀ ԱԱՌ-ի վերանայման խնդրի իմաստավորման նպատակով ՊԱՀՀ-ի վեց երիտասարդ գիտնական-վերլուծաբաններ 2013-2016 թթ. գիտամեթոդաբանական ստաժավորումներ անցան ԱՄՆ-ի ՊԱՀ-ի Տեխնոլոգիաների եւ ազգային անվտանգության քաղաքականության կենտրոնում, Միջազգային անվտանգային հարաբերությունների քոլեջում, Տեղեկատվական ռեսուրսների կառավարման քոլեջում եւ Ազգային անվտանգության ու ռեսուրսների ռազմավարության Էյզենհաուերի անվան դպրոցում՝ կատարելով ոլորտային հետազոտություններ:

Վերջին տարիներին պրոֆեսոր Քոթանջյանի՝ ԱՄՆ-ի, ՌԴ-ի, ԳԴՀ-ի, ՉԺՀ-ի եւ Իսրայելի ուղեղային կենտրոններում գիտական ստաժավորումների ընթացքում ձեռք բերված անընդհատ նորացվող մեթոդաբանական գիտելիքները եւ գիտնական-վերլուծաբանների հետազոտական արգասիքները հաջողությամբ ներբերվեցին ՀՀ ԱԱՌ-ի վերանայման գործում՝ հիմքում դնելով ՀՀ-ում հասարակության եւ տնտեսության կայուն զարգացումը անվտանգային հետազոտությունների ու թվայնացման հիման վրա:

Որպես ՀՀ ԱԱՌ-ի վերանայման նորամուծական ուղի՝ 2015-2016 թթ. ՊԱՀՀ-ում մշակվեց Ազգային կիբեռանվտանգության ռազմավարությունը: Տվյալ մոտեցման հիմնավորումն այն է, որ կիբեռանվտանգությունը ծածկում է ազգային անվտանգության տիրույթների ամբողջ համալիրը (կիբեռպաշտպանություն, կիբեռտնտեսություն, կիբեռդիվանագիտություն եւ այլն): Ազգային կիբեռանվտանգության ռազմավարության նախագիծը մշակվել է ՊԱՀՀ-ի կողմից եւ փորձաքննվել ամերիկյան պետական գերազանցության կենտրոն հանդիսացող ԱՄՆ-ի ՊԱՀ-ի Տեղեկատվության եւ կիբեռտարածության քոլեջի, ինչպես նաեւ ՆԱՏՕ-ի Գհխ-ի Կոնսորցիումի աշխատանքային խմբի կողմից: Թվարկված հաստատությունները այն գերազանցության կենտրոններն են, որոնք ծածկում են անվտանգության՝ ամենադինամիկ զարգացող տիրույթները:

ՀՀ ԱԱՌ-ի համակարգաստեղծ հատվածների վերագնահատման նպատակով ՊԱՀՀ-ում մշակվել են կիբեռանվտանգությանը, կիբեռռեսուրսների կառավարման նորամուծական համակարգին, ՀՀ-ում պաշտպանական էկոնոմիկայի ռազմավարական ուղենիշներին եւ ՀՀ ԶՈՒ-ի արդիականացմանն ու կառավարման արդյունավետության բարձրացմանը վերաբերող չորս կոլեկտիվ մենագրություններ: Նշված ժամանակահատվածում ՊԱՀՀ-ը կոլեկտիվ մենագրություններ է մշակել նաեւ տարածաշրջանային անվտանգության դինամիկայի վերաբերյալ՝ ՀՀ ԱԱՌ-ի առաջնահերթությունների համատեքստում, այդ թվում՝ պետության ղեկավարությանը փոխանցել գիտավերլուծական մի շարք զեկուցագրեր:

ՀՀ ԱԱՌ-ի նախագծի վերանայման գործում հաշվի է առնվել նաեւ պրոֆեսոր Քոթանջյանի կողմից ՀՀ ազգային անվտանգության խորհրդի կերպափոխման մշակումը՝ խորհրդարանական կառավարման համակարգում Իսրայելի ռազմաքաղաքական կաբինետի (Նեղ Կառավարություն) փորձի ուսումնասիրմամբ:

2018 թ. մարտի 21-ին ՀՀ ՊՆ վարչական համալիրում, ՀՀ Զինված ուժերի ղեկավար կազմի ամենամյա օպերատիվ հավաքի շրջանակներում անցկացված նիստում պրոֆեսոր Հայկ Քոթանջյանը հանդես է եկել զեկուցում-դասախոսությամբ, որի ընթացքում ներկայացրել է ՊԱՀՀ-ում ՀՀ ԱԱՌ-ի վերանայման նորամուծական ուղենիշները: Իսկ մարտի 24-ին, ՀՀ ԱԱՌ-ի վերանայման ամբողջ գործընթացը եւ դրա նորամուծական ուղենիշները պրոֆեսոր Քոթանջյանը համակարգված կերպով ներկայացրել է Քաղաքական գիտության Հայաստանի ասոցիացիայի համաժողովին մասնակցած ավագ եւ երիտասարդ քաղաքագետների ու միջազգայնագետների հանրույթին:

# Դոկտ. Թյուրքյըլմազը հայկական երաժշտության մասին

Ֆրեզնոյի պետական համալսարանի գարնանային կիսամյակի համար վերջերս այցելու դասախոս նշանակված դոկտ. **Եկտան Թյուրքյըլմազը** (տես «ԱԶԳ-ի» հունվարի 19-ի համարը) սկսելով իր դասախոսությունների շարքը, մարտի 7-ին համալսարանի բիզնես կենտրոնի դահլիճում խոսել է «Հայերը ձայնագրություններում: Երաժշտական հորինումները հայրենիքում (բնօրրանում) եւ Սփյուռքում (1900-1938)» թեմայի շուրջ:



Օսմանյան կայսրությունում եւ սփյուռքի տարբեր անկյուններում թողարկված ձայնասկավառակների օրինակով եւ իրական պատմություններով նա մանրամասնորեն ներկայացրել է երաժշտության հորինման բնագավառում կատարվող ոճային, բովանդակային եւ լեզվական փոփոխությունները, որոնք տեղի են ունեցել տեղանքի, տրավմայի եւ նոր մշակույթների հետ առերեսման հետեւանքով:

Թյուրքյըլմազը դոկտորական է պաշտպանել Դյուք համալսարանի մշակութային մարդաբանություն ֆակուլտետում: Ներկայիս Բեռլինի (Գերմանիա) «Forum Transregionale Studien-ի» գիտաշխատող է եւ աշխատում է իր «Վերաիմաստավորելով ցեղասպանությունը: Բռնությունից տուժածները արեւելյան Անատոլիայում 1913-1915 թթ.» մենագրության վրա:

Վերոնշյալ դասախոսության ավարտին երաժշտական իր գերազանց կատարումներով հանդես է եկել ուդի անզուգական վարպետ, արեւելյան երաժշտության մասնագետ **Ռիչարդ Հակոբյանը**:

Հ.Ծ.

# Հայաստանի Առաջին Հանրապետության 100-ամյակին նվիրված համաժողով Անթիլիասում

**ՍՈՒՐԵՆ Թ. ՍԱՐԳՍՅԱՆ**

*պգդ, գիտաժողովի մասնակից*

Մարտի 21-23-ին Մեծի տանն Կիլիկիո կաթողիկոսությունը Համահայկական գիտաժողով էր կազմակերպել, որը նվիրված էր Հայաստանի Առաջին Հանրապետության 100-ամյակին: Հրավիրվել էր Հայաստանի եւ Սփյուռքի ժամանակակից պատմագիտական մտքի գրեթե ողջ սերուցքը: Խորհրդանշական էր, որ համաժողովին մասնակցում էին ավագագույն սերնդի ներկայացուցիչներ Ռիչարդ Հովհաննիսյանն ու Երվանդ Փամբուկյանը:

Ընդհանրապես շատ հագեցած ծրագիր էր: Բեյրութ հասնելուց անմիջապես (ի դեպ հաճելի անակնկալ էր օդանավակայանում իմ լավագույն բարեկամներ ակադեմիկոս Աշոտ Մելքոնյանի եւ Լիբանանում ՀՀ դեսպան, մեր բաժնի նախկին աշխատակից Սամվել Մկրտչյանի կողմից մեզ դիմավորելը) հետո մեկնեցինք Զմմառի հինավուրց վանական համալիր: Վանքի խաղողի այգում աշխատելուց վերադարձող բարեհամբույր վարդապետն իմանալով մեր ով լինելը, կամավոր ստանձնեց զբոսավարի պարտականությունները: Նա մանրամասն ներկայացրեց վանքի հիմնադրման եւ գոյատեւման տարիների պատմությունը, անթաքույց հպարտությամբ ցուցադրեց բոլոր սրահները, թանգարանային նմուշներն ու մասունքները: Իսկ վերջում «չմոռացավ» հիշեցնել իրենց մեծահամբավ գինու մասին:

Հյուրանոցում կարճ դադարից հետո մեկնեցինք Լիբանանում ՀՀ դեսպանատուն, որտեղ տեղի ունեցավ Երեւան քաղաքին նվիրված լուսանկարների ցուցահանդեսի բացումը: Դեսպանատանը բավական թվով հարազատ դեմքեր տեսա: Ուրախ էի հանդիպելու ՌԱԿ վետերան գործիչ ու բարերար Կարո Պապահեքյանին` տիկնոջ հետ, ԱՄՆ-ից ժամանած անսպառ եռանդի ու աշխատասիրության տեր մտավորական Հակոբ Վարդիվառյանին, «Զարթօնքի» նախկին խմբագիր Պայծիկ Գալայճյանին եւ էլի շատերի:

Առավոտյան հյուրանոցում նախաճաշելուց հետո մեզ սպասող ավտոբուսով մեկնեցինք Անթիլիաս: Բավական մեծ թվով հյուրեր կային: Հնչեցին ՀՀ, ԱՀ հիմները, ապա` Անթիլիասի օրհներգ դարձած «Կիլիկիան»: Այնուհետեւ ելույթ ունեցավ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա կաթողիկոսը: 100-ամյակի առթիվ սրբատառ կոնդակն ընթերցելուց հետո նա նշեց, որ ազատ ու անկախ ապրելու «տենչը եւ կամքը, նոյնիսկ իմացեալ մահով, հայ ժողովուրդի դարաւոր պատմութեան ամենէն յատկանշական երեւոյթներէն մէկը դարձած է` Հայկ Նահապետէն սկսեալ»: Նշելով, որ մեր պատմությունը հարուստ է բռնակալության դեմ հերոսական մարտնչումներով, Արամ կաթողիկոսը շեշտեց. «Այսպէս եղաւ 28 Մայիս 1918 թուականը մեր ժամանակակից պատմութեան մէջ, որ հայ ժողովուրդը հզօր հաւատքով թրծուած եւ վճռականութեամբ զինուած, վերահաստատեց ինքնուրոյն պետականութեամբ իր հայրենի հողին վրայ ազատօրէն ապրելու իր հաւաքական կամքը»: Շարունակելով խոսքը Արամ Ա-ը հակիրճ պատմական էքսկուրս կատարեց եւ ցույց տվեց, որ չնայած բազմաթիվ դժվարություններին, հայ ժողովուրդն ի դեմս Հայաստանի Առաջին Հանրապետության, կարողացավ պետականություն կերտել եւ սերունդներին փոխանցել այն պահպանելու սրբազան պատգամը: Պատգամ, որն իմ կարծիքով այսօր եւ առհավետ միշտ տեղ ունենա յուրաքանչյուր հայի սրտում:

Այնուհետեւ ընթերցվեցին ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի, ԱՀ նախագահ Բակո Սահակյանի, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն հայոց կաթողիկոսի, Ամենապատիվ Տ. Գրիգոր Ի. Պատրիարքի, Վերապատվելի Մկրտիչ Գարակէօզյանի ուղերձները:

«ՀՀ պատմության ուսումնասիրության եւ արժեւորման անդրադարձ» վերտառությամբ ելույթ ունեցավ **Ռիչարդ Հովհաննիսյանը**: Նա նախ հուզված նկատեց, որ երբեք հույս չի ունեցել տեսնել ՀՀ-ի 100-ամյակը եւ այն էլ այստեղ ու այստեսակ գիտաժողովի տեսքով: Ապա նշեց, որ իրեն առաջին անգամ Լիբանան հրավիրողը Սիմոն Վրացյանն է եղել, որը հորդորել է հայերեն չիմացող երիտասարդին ուսումնասիրել 1918 թ. մեր պետականության վերակերտման պատմությունը: Վաստակաշատ պատմաբանը Առաջին Հանրապետությունը նմանեցնելով անավարտ սիմֆոնիայի նշեց, որ Աստծո



մասը խառն է, թե չէ մենք շարունակվելու ոչ մի շանս չունեինք:

Հաջորդը ելույթ ունեցավ ակադեմիկոս **Աշոտ Մելքոնյանը**: Նա մասնավորապես նշեց, որ չնայած մենք տեւական ժամանակ կորցրել էինք պետականությունը, սակայն այն անթեղված էր յուրաքանչյուր հայի սրտում եւ ազգային կուսակցությունների ծրագրերում: Եվ բոլորովին էլ պատահական չէր, որ առաջին իսկ հնարավորության ժամանակ իրականություն դարձավ ի դեմս ՀՀ-ի:

Երվանդ Փամբուկյանի զեկուցումը նվիրված էր Արամ Մանուկյանին: Զեկուցողը նկատեց, որ չնայած Էջմիածնի Գեւորգյան ճեմարանը եկեղեցական հիմնարկ էր, որ այնտեղ տիրում էին վանական կայուն եւ պահպանողական բարքեր, բայց XIX վերջերին եւ XX դարի սկզբներին այստեղ տեղի են ունեցել լուրջ խմորումներ: Ամենեւին էլ պատահական չէ, որ այդ պատերի ներսից են դուրս եկել հայ հեղափոխականներ եւ ազատագրական պայքարի շատ գործիչներ:

Հաջորդ նիստի ընթացքում «Հայաստանի Հանրապետության հռչակման նախադրյալները եւ 1918 թ. հերոսամարտերի պատմական նշանակությունը» թեմայով զեկուցեց պգդ **Վահան Մելիքյանը**, «Հայոց պետականաշինության գործընթացը Վան-Վասպուրականում 1915-1918 թթ»` պգդ **Ռուբեն Սահակյանը**, «Բաքվի 1918 թ. ինքնապաշտպանության դերը ՀՀ-ի կայացման գործում»` պգդ **Գեւորգ Ստեփանյանը**:

Առաջին օրվա վերջին նիստում զեկուցումներով հանդես եկան` **Արարատ Հակոբյանը** «ՀՀ-ի պետական կառուցվածքը», **Վահրամ Բալայանը**` «Պետականության վերականգնման գործընթացը Արցախի մեջ», **Սուրեն Սարգսյանը**` «Հայ Ժողովրդական կուսակցության գործունեությունը Հայաստանի մեջ 1918-1920 թթ.» թեմաներով: Վերջում հնարավորություն ընձեռվեց զեկուցողներին հարցեր տալ եւ ծավալվեց մտքերի աշխույժ փոխանակություն: Նկատենք, որ բոլոր զեկուցումներն էլ փաստառատ էին եւ գիտական մակարդակ ունեին: Լրացման կարգով ավելացնեմ, որ բավական հետաքրքրություն էր առաջացրել նաեւ տողերիս հեղինակի զեկուցումը: Այն, ինչպես նկատեց Ռիչարդ Հովհաննիսյանը, շատ նորություններ պարունակող ու ծեծված թեմա չէ եւ խորհուրդ տվեց անպայման շարունակել ու ավարտին հասցնել սկսած գործը:

Երեկոյան ԱՀ նախագահ **Բակո Սահակյանի** մասնակցությամբ տեղի ունեցավ կաթողիկոսարանի բակում կառուցված եռաթեւ հուշարձանի բացումը: Հուշարձան, որի խորհուրդը Հայաստան-Արցախ-Սփյուռք եռամիասնության գաղափարն է եւ գալիք սերունդներին ուղղված կոչ` անխաթար պահել, իսկ հնարավորության դեպքում միաձուլել այդ երեք բաղադրիչներն ապագայում:

Հաջորդ օրը նույն եռանդով գիտաժողովը շարունակվեց: Այս անգամ զեկուցումների ատաղձը կազմում էին Հայկական հարցին ու ՀՀ-ի արտաքին քաղաքականությանը նվիրված դոկտորներ **Ռուբեն Սաֆրաստյանի, Գեղամ Պետրոսյանի, Արմենուհի Ղամբարյանի, Կարեն Խաչատրյանի** եւ **Վարդան Ոսկանյանի** ելույթները:

Գործնականը հաճելիին զուգակցելով գիտաժողովի կազմակերպիչները մասնակիցներիս ուղեկցեցին դեպի Ջիբեյլ` Ցեղասպանության որբերի «Արամ Պեզիքյան» թանգարան եւ Թռչնոց բույն: Մաքուր ու կոկիկ էր ամեն ինչ, ճաշակով հարդարված, բայց նաեւ` շատ ազդեցիկ: Հենց մուտքից սկսած բետոնե հասակի մանկական ոտնահետքերն ու շարքով ծալապատիկ նստած ողորմություն մուրացող որբուկների արձանիկները կարծես իսկական լինեին` սովալլուկ մանուկների օգնություն աղերսող հայացքները` կենդանի... Իսկապես, մեծ ցավ ու տառապանք կար օդում եւ ամեն տեղ:

«ՀՀ-ի դերը հայկական իրավունքների հետապնդման գործում» ընդհանուր վերտառությամբ, սակայն տարբեր հիմնախնդիրներին նվիրված զեկուցումներ կարդացին պրոֆեսորներ **Համլետ Հարությունյանը, Վլադիմիր Վարդանյանը, Արմեն Մարուքյանը, Արման Կիրակոսյանը**:

Հաջորդ օրվա զեկուցումների առաջին բաժինը` «Անկախությունից անկախություն (28 մայիսի 1918-21 սեպտեմբերի 1991) իրենց հետաքրքրական եւ բովանդակալից զեկուցումներով ներկայացրին ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ **Զավեն Մսրլյանը**, դոկտոր **Ամատունի Վիրաբյանը** եւ **Միքայել Հաճյանը**: Ունկնդիրները ոչ պակաս հետաքրքրությամբ լսեցին «Հայասաանի անկախության գաղափարախոսության պահպանումը Հայաստանի եւ Սփյուռքի մեջ» բաժնի զեկուցողներ **Եղիկ Ճերեճյանին**, **Նազարեթ Բերբերյանին**, պրոֆեսոր **Էդիկ Մինասյանին** եւ դոկտոր **Խաչատուր Ստեփանյանին**: Բավականին նորություններ էին պարունակում նաեւ «Անկախության գաղափարախոսության պահպանումը հայ մշակույթի մեջ» բաժնի զեկուցողներ **Գուրգեն Վարդանյանի, Երվանդ Տեր-Խաչատրյանի, Մովսես Հերկելյանի**, **Կարո Հովհաննիսյանի**, **Ռուբինա Փիրումյանի** զեկուցումները:

Գիտաժողովի վերջին ակորդը եղավ «Հայ եկեղեցու դերակատարությունը Հայաստանի անկախության կերտման, պահպանման ու հզորացման գործում» բաժնի զեկուցողներ **Վարդան Դեւրիկյանի, Սեպուհ արք. Սարգսյանի, Մեսրոպ ծ. վրդ. Թոփալյանի** փաստառատ ելույթները:

Գիտաժողովի ավարտից հետո փակման խոսքով ելույթ ունեցավ Արամ Ա կաթողիկոսը: Նա նշեց, որ գիտաժողովն արգասաբեր եղավ եւ ամբողջությամբ ծառայեց իր նպատակին: Այնուհետեւ Կիլիկիո կաթողիկոսության բարձրագույն պարգեւ-շքանշաններով պարգեւատրեց Երվանդ Փամբուկյանին եւ Ռիչարդ Հովհաննիսյանին:

Իսկ վերջում մեկնեցինք Բիքֆայա` կաթողիկոսարանի ամառային նստավայր: Վեհափառի ուղեկցությամբ եւ որոշ դեպքերում նաեւ տեղեկատվությամբ շրջեցինք մաքուր ու գեղեցիկ ձեւավորված բակում: Լուսանկարվեցինք «Վերածնունդի» հուշարձան-կոթողի մոտ, ապա` ընթրեցինք դպրեվանքի հյուրընկալ ճաշարանում եւ ունկնդրեցինք դպրեվանքի սաների երգչախմբի հոգեթով ելույթը:

Հրաժեշտն ավելի ջերմ ստացվեց: Բաժանվեցինք կրկին հանդիպելու հաստատ որոշմամբ եւ նոր լիցքերով ու ծրագրերով ոգեւորված:

Վերադարձի ճանապարհին ինքս ինձ համար ամփոփում էի գիտաժողովն ու դրա հետ կապված տպավորություններս: Կարճ` դրանք այսպիսի տեսք ունեն.

1. գիտաժողովը միանշանակ հաջողված եւ արգասաբեր իրողություն էր,
2. ամեն ինչ կազմակերպված էր բարձր մակարդակով եւ անթերի,
3. աշխատանքային ջերմ, ստեղծագործական մթնոլորտ էր ամենուրեք,
4. ուշադրության կենտրոնում էինք բոլորս եւ բոլոր հարցերում,
5. միակ տարակարծությունս այն եղավ ու ինձ համար անհասկանալի մնաց, թե ինչու արտոնված չէր, որ գիտաժողովի ընթացքին կարողանային հետեւել նաեւ ոչ հրավիրյալ ցանկացողները:

Հայոց պետականության վերակերտման 100-ամյակին նվիրված Անթիլիասի գիտաժողովն ավարտվեց, բայց շուտով սկսվելու է գիտաժողովների հայաստանյան շարքը:

# ԵՄ-Թուրքիա գագաթաժողովը եւ Անկարայի քայլերի գնահատականը

## *Արդի աշխարհում ի՞նչ է վճռում Թուրքիան*

Բուլղարիայի վարչապետ **Բոյկո Բորիսովը** երկուշաբթի օրը հայտարարեց, որ Վառնայում անցկացված Եվրոմիություն-Թուրքիա գագաթաժողովը կատարել է իր խնդիրը՝ հաստատելով, որ Թուրքիան փակել է իր սահմանը դեպի ԵՄ ձգտող գաղթականների համար: Միեւնույն ժամանակ, Անկարայի եւ Բրյուսելի միջեւ գոյություն ունեցող առավել սուր խնդիրները մնացել են չլուծված:

Գագաթաժողովից առաջ Բուլղարիան խոստացել էր երաշխավորել Եվրոմիության արտաքին սահմանի անվտանգությունը եւ կատարեց այդ խնդիրը: Գագաթաժողովի արդյունքների հիման վրա Բուլղարիայի վարչապետը հայտարարեց, որ գաղթականների հետ կապված համաձայնագիրը կշարունակի գործել:

Եվրոմիությունը Թուրքիային լիակատար աջակցություն հայտնեց գաղթականների հոսքի կասեցման հարցում: Եվրոպայի խորհրդի նախագահ **Դոնալդ Տուսկը** իր հերթին հայտարարեց, որ տվյալ հարցի քննարկումը կշարունակվի հունիսին կայանալիք հերթական հանդիպման ժամանակ:

Ըստ որում, գագաթաժողովի մասնակիցները Թուրքիայի հետ փոխզիջման չհասան Կիպրոսի եւ Սիրիայի առնչությամբ: Դոնալդ Տուսկի խոսքերով՝ Եվրոմիությանը Թուրքիայի անդամակցության հարցում առաջընթացը հնարավոր է միայն հիշյալ խնդիրների լուծման պայմաններում: Միեւնույն ժամանակ Տուսկն արտահայտվեց Թուրքիայի հետ երկխոսությունը շարունակելու օգտին՝ ընդսմին ընդգծելով, որ Անկարան մնում է Բրյուսելի կարեւոր գործընկերը: Տուսկը ընդգծեց, որ գագաթաժողովում ԵՄ-ը մտահոգություն է արտահայտել Աֆրինի իրադրության, ինչպես նաեւ մի կողմից Թուրքիայի եւ մյուս կողմից Կիպրոսի, Հունաստանի ու Իտալիայի միջեւ Կիպրոսին մերձակա ծանծաղուտում գազի արդյունահանման շուրջ ծագած վեճերի կապակցությամբ: Մտահոգություն է արտահայտվել նաեւ Թուրքիայի կողմից երկու հույն սահմանապահների կալանավորման առնչությամբ:

Հունվարին թուրքական ռազմանավերը շրջափակել էին իտալական Eni ընկերությանը պատկանող գազահորատման Saipem 12000 հարթակը, որը պետք է հետախուզական աշխատանքներ իրականացներ Կիպրոսի բացառիկ տնտեսական գոտում: Ավելի վաղ, Նիկոսիան իտալական ընկերությանը տրամադրել էր ածխաջրածինների հետախուզման ու մշակման արտոնագիր: Թուրքական կողմը մտահոգություն էր արտահայտել Կիպրոսում իտալական էներգետիկ ընկերության գործունեության առնչությամբ՝ գտնելով, որ այդ աշխատանքները հակասում են Անկարայի շահերին:

Փետրվարի 5-ին Իտալիա այցելելուց հետո, Թուրքիայի նախագահ **Էրդողանը** թուրք լրագրողներին հայտարարել էր, որ Իտալիայի նախագահ Սերջո Մատարելլայի եւ վարչապետ Պաոլո Ջենտիլոնիի հետ հանդիպման ժամանակ ինքը բարձրացրել է Eni ընկերության հարցը եւ նախազգուշացրել, որ Թուրքիան այդ շրջանում գազի արդյունահանումը վտանգ է համարում ինքնահռչակ Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետության համար, եւ գտնում է, որ իտալական ընկերության ընտրությունը սխալ էր: Տվյալ հրավիճակը մարտի 22-23-ը քննարկվեց Բրյուսելում: Հանդիպման մասնակից ԵՄ պետությունները աջակցություն հայտնեցին Աթենքին եւ Նիկոսիային:

Վառնայի գագաթաժողովի ավարտից հետո Թուրքիայի նախագահը հայտարարեց, որ իր երկիրը Եվրոմիությունից օգնության հերթական փաթեթն է սպասում, քանի որ Անկարան առայժմ միայն 1,8 մլրդ եվրո է ստացել գաղթի վերահսկման համար Եվրոմիության խոստացած 3 մլրդ եվրոյից: Ներկայումս Թուրքիայում գրեթե 4 մլն սիրիացի գաղթականներ կան: Ստացվող գումարը պետք է նպաստի գաղթականների վիճակի բարելավմանը:

Էրդողանը Եվրոմիությանը նաեւ կոչ արեց արագացնել իր երկրի քաղաքացիներին ԵՄ անայցագիր մուտքի իրավունք տրամադրելու աշխատանքները, «քանի դեռ Թուրքիայի քաղաքացիները չեն կորցրել հավատը ԵՄ հանդեպ»:

Եվրոհանձնաժողովի ղեկավար **Ժան-Կլոդ Յունկերը** արգասավոր բնութագրեց գագաթաժողովի աշխատանքը: «Մենք ուզում ենք, որ Թուրքիան լինի ԵՄ ռազմավարական գործընկերը: Մենք պետք է շարունակենք անկեղծ երկխոսությունը: Կարծում եմ՝ Եվրոմիությունը եւ Թուրքիան մեծ սխալ են թույլ տալիս, երբ խոսում են ոչ թե ընդհանրությունների, այլ տարբերությունների մասին: Մենք շատ ընդհանուր շահեր ունենք մեր թուրք բարեկամների հետ», ընդգծեց Յունկերը:

Նա շեշտեց գաղթականների հետ կապված համաձայնության կատարման փաստը եւ Թուրքիային շնորհակալություն հայտնեց, որ սեփական տարածքում ապաստան է տվել մոտ 3,5 մլն մարդու: «Դա ցույց է տալիս, որ Թուրքիան կարող է համերաշխվել Եվրոմիության հետ: Հենց դրա համար մենք երախտապարտ ենք նրան», ասաց Յունկերը: Նա խոստացավ, որ Եվրոմիությունը կկատարի գաղթականների օգնությանն ուղղված գումարի հատկացման բոլոր պարտավորությունները:

Թուրքիայի նախագահը հայտարարեց, որ իր երկիրը փոխզիջման չի դիմի Բրյուսելի կողմից ահաբեկիչների աջակցման հարցում: Նույնպիսի անզիջում ռազմատենչություն նա դրսեւորում է Սիրիայում ԱՄՆ-ի դիրքորոշման հանդեպ: Ստամբուլում կառավարող Արդարության եւ զարգացման կուսակցության համահավաքի ժամանակ Էրդողանը հայտարարել էր, որ Աֆրինի գրավումից հետո թուրքական զորքը կշարունակի հարձակումը սիրիական Մանբիջ քաղաքի ուղղությամբ, որտեղ, հիշեցնենք, ամերիկյան ռազմահենակետ գոյություն ունի:

Վառնա մեկնելուց առաջ նա պատրաստվել էր եվրոպացիներին ցույց տալ, թե նրանք ապաստան են տրամադրում ահաբեկիչներին, որպիսիք են քրդական կազմակերպությունները եւ քարոզիչ Ֆեթուլլահ Գյուլենի կողմնակիցները: Այդ մասին հաղորդեց բուլղարական bTV ազգային հեռուստաալիքը՝ վկայակոչելով թուրքական ԶԼՄ-ներ: Տրապիզոնում իր կուսակցության համագումարում Էրդողանը խոստացել էր ազնիվ լինել՝ նշելով, որ ինքը ասելիք ունի ամեն ինչի մասին:

Ըստ քաղաքագետ **Լեոնիդ Կրուտակովի**՝ Правде.Ру կայքին տված հարցազրույցի, Էրդողանը որպես Աստանայի գործընթացի եւ ՆԱՏՕ-ի անդամ երկրի եւ աշխարհի ամենաուժեղ բանակներից մեկի ղեկավար, հավակնում է «կարկանդակի իր բաժինը կորզել Սիրիայից»: Կայքի փորձագետի կարծիքով, Մերձավոր Արեւելքը թեւակոխել է վերաբաժանման նոր փուլ, եւ ուժեղ խաղացողներից յուրաքանչյուրը կհայտարարի սեփական իրավունքների մասին: Քաղաքագետը հռետորական հարց է տալիս, որ եթե ԱՄՆ-ին կարելի է խախտել միջազգային իրավունքի նորմերը, ապա ինչո՞ւ նույնը չի կարելի Թուրքիային:

Ինչ վերաբերում է ԵՄ-Թուրքիա հարաբերություններին, եվրոպացիների պահանջները զայրացնում են թուրքերին, որոնք իրենց հերթին ներկայացնում են հակընդդեմ պահանջներ: Ներկայումս Եվրոմիության եւ Թուրքիայի բոլոր համաձայնությունները ժամանակավոր են: Երկու կողմերը ձեւացնում են, թե իրենք համաձայնության են գալիս:

Ըստ քաղաքագետի, Թուրքիան ու ԵՄ-ը լուծում են տարածաշրջանային խնդիրներ, նրանք չեն դիմի գլոբալ համաձայնությունների: Նոր աշխարհակարգի հարցը պետք է լուծեն ուժեղ տերությունները՝ ԱՄՆ-ը, Մեծ Բրիտանիան, Գերմանիան, Ռուսաստանը, Չինաստանը, Իրանը: Անցյալում դա տեղի էր ունենում աշխարհամարտից հետո, բայց ներկայումս գոյություն ունի միջուկային զսպման գործոն: Ամենքը կբանակցեն եւ համաձայնության կգան այն ժամանակ, երբ Արեւմուտքը գիտակցի, որ հիբրիդային պատերազմը իրեն ավելի շատ վնաս է պատճառում, քան օգուտ բերում: Այդ ժամանակ կլուծվի թե՛ Սիրիայի, թե՛ Ուկրաինայի, եւ թե՛ ԿԺԴՀ-ի հարցը, եզրակացնում է Լեոնիդ Կրուտակովը:

Աֆրինի դեպքերի կապակցությամբ Թուրքիային քննադատել է Գերմանիայի կանցլեր **Անգելա Մերկելը**: «Անվտանգության ոլորտի շահերը չեն կարող արդարացնել Թուրքիայի գործողությունները Աֆրինում: Բյուրավոր խաղաղ բնակիչներ ենթարկվեցին հալածանքների, սպանվեցին կամ ստիպված դիմեցին փախուստի: Մենք ամենայն վճռականությամբ դատապարտում ենք դա», ասել է նա: Ցավոք, ո՛չ Եվրոմիությունը, ո՛չ էլ միջազգային մյուս խոշոր խաղացողները չդատապարտեցին Թուրքիայի գործողությունները:

Էրդողանի արարքներին օժանդակում է Ռուսաստանը: Դա հասկանալի է. Թուրքիան որպես խաղազինվոր է հանդես գալիս Ռուսաստանի մեծ խաղի մեջ: Մոսկվան շահարկում է թուրքերի հպարտությունը եւ Օսմանյան կայսրության երբեմնի փառքը վերականգնելու Էրդողանի հավակնությունները: Եթե Թուրքիան շարունակի իր ուղին, նա կարող է բախվել Մանբիջում քրդական կազմավորումներին աջակցող ԱՄՆ-ի հետ: Քրդերն ամերիկացիների հետ մարտնչել են «Իսլամական պետության» դեմ: Քրդերին Թուրքիային հայեցողությանը հանձնելու դեպքում ԱՄՆ-ը կդառնար դավաճան եւ մի նոր թշնամի կունենար տարածաշրջանում, որտեղ առանց այդ էլ քիչ բարեկամներ ունի:

Ըստ երեւույթին, Ռուսաստանը հույս ունի, որ քրդերի եւ ամերիկացիների հետ կապված հակամարտության դեպքում Թուրքիան կարող է դուրս գալ ՆԱՏՕ-ից եւ ընդհուպ կհայտնվի Մոսկվայի ազդեցության տակ: Վաշինգտոնն Անկարային պահելու համար կարող է օգտագործել նրա կախվածությունը Արեւմուտքի ֆինանսական օգնությունից (2014 2020թթ. միայն ԵՄ-ից Թուրքիան պետք է ստանա 5,4 մլրդ դոլար):

Ըստ ռուս վերլուծաբան **Սաֆրոն Իսաեւի**, իբր ահաբեկչությունից պաշտպանվելու նպատակով Սիրիա ներխուժած Թուրքիան խախտում է միջազգային իրավունքը եւ բավարար հիմք չունի օտար պետության տարածքում ուժ կիրառելու համար:

Պ.Ռ.

# Երեւանին նվիրված նոր գիրք

***Լույս է տեսել «Երեւան քաղաքի փողոցների լուսավորության պատմություն» գրքույկը: Այն նվիրված է Երեւան քաղաքի փողոցների լուսավորության ավելի քան մեկ դարյա պատմությանը:Գրքույկի հեղինակը էներգետիկայի բնագավառի անվանի գիտնական, տեխնիկական գիտությունների թեկնածու Ստեփան ՊԱՊԻԿՅԱՆՆ է:***




**Գրքույկից կարող ենք տեղեկանալ հետեւյալը:**

**Մինչեւ 20-րդ դարի սկզբները Երեւան քաղաքի փողոցների լուսավորումը կատարվում էր նավթային լապտերներով: 1870-ական թվականներին լուսավորության հարցերը տնօրինում էին քաղաքային իշխանությունները: Քաղաքի լուսավորությունը 1897 թ. սկսած տրվում էր կապալով՝ մեկ կամ երեք տարի ժամկետով: 1878 թ. Երեւան քաղաքի փողոցներում 74 լապտեր կար, 1880 թ.՝ 85, 1881 թ.՝ 100, 1906 թ.՝ 722, 1913 թ.՝ 228: Ինչպես երեւում է բերված թվերից, Երեւանում նավթային լապտերների թիվը մինչեւ 1906 թ. գնալով ավելացել է, իսկ դրանից հետո՝ կտրուկ անկում ապրել: Այս հանգամանքը պայմանավորված է 1907 թ. «Ամպեր» ընկերության էլեկտրակայանի շահագործման հետ: Երեւանի կենտրոնական մասերում գտնվող նավթային լապտերների մեծ մասը փոխարինվեց էլեկտրական էներգիայով աշխատող լապտերներով: Չնայած էլեկտրակայանի առկայությանը, նավթային լապտերները շարունակեցին գոյություն ունենալ մինչեւ 1920-ական թվականները:**

**Երեւանում օգտագործվում էին երկու տեսակի լապտերներ՝ հասարակ եւ «Գալկինի»: 1880 թ. կապալառուն 83 վառվող լապտերի համար ստացել է 2058 ռուբլի 50 կոպեկ, 1889 թ. փողոցների, պուրակների լուսավորության ծախսերը կազմել են 4784 ռուբլի, 1913 թ.՝ 2451 ռուբլի:**

**Նավթային լապտերները միացվում էին մութն ընկնելուց հետո՝ մինչեւ ժամը 23-ը: Աստաֆյան փողոցում (այժմ՝ Աբովյան) 1913 թ. 1500 մետր երկարության վրա կար երկու լապտեր, իսկ քաղաքի ծայրամասերը մութն ընկնելուց հետո խորասուզվում էին խավարի մեջ: Նորքի փողոցները չէին լուսավորվում: Թաղամասի լուսավորության վիճակը ծանր էր նաեւ 20-րդ դարի սկզբներին: 1905 թ. Նորքի փողոցներում կար ութ հին նավթային լապտեր, որոնք չէին լուսավորում նույնիսկ մի քանի մետրի վրա:**

**Երեւանի արտաքին լուսավորության ցանցը շահագործման է հանձնվել դեռեւս 1954թվականին: Մինչեւ 1992թ. այն գործել է 928 փողոցներում,մայրուղիներում, հրապարակներում եւ այգիներում: Նրանց ընդհանուր երկարությունը կազմում էր 795կմ: Տարբեր մակնիշի 49909 հատ լուսատուներ՝ տեղակայված էին 31279 հենասյուներին:**

**Մայրաքաղաքի արտաքին լուսավորությունը Խորհրդային Միության տարիներին լավագույններից մեկն էր: Խորհրդային Միության փլուզումից հետո մթությունը տիրեց ամենուր: Փողոցներում մնացին քաղաքը լուսավորող հատուկենտ լամպեր: Միայն 2000թ. սկսեց աստիճանաբար բարելավվել արտաքին լուսավորությունը:**

**Ներկայումս Երեւանում լուսավորված է 895 փողոց: Բոլոր 105 գլխավոր փողոցները լուսավորվում են մինչեւ լուսաբաց: Ամբողջությամբ լուսավորված մնում են Իսակովի եւ Մաշտոցի պողոտաները: Մայրաքաղաքային լուսավորությունը երեք ռեժիմ ունի՝ նորմալ, գիշերային եւ տոնական:Քաղաքը բաժանված է յոթ տեղամասերի: Մայրաքաղաքի լուսավորության վրա ծախսվում է ժամում 13 հազար ԿՎտժ էլեկտրական էներգիա:**

**Գրքույկը տպագրված է սահմանափակ քանակով, թեեւ նախատեսված է ընթերցող լայն շրջանների համար:**

AZG NEW SHABAT.QXD 29/03/2018 21:38 Page 12



# Անպատասխան հարցեր՝ անվտանգության թեմաներով

⇨1

Ավելի լավ է միանգամից ասել. ինչ տարբերություն՝ հի՞ն զենք է, թե՞ նոր Ադրբեջանին վաճառվածը, այդ հին զենքից կամ ականներից հենց երեկ չզոհվեցի՞ն ու վիրավորվեցին ականազերծողները Արցախում: Կամ ի՞նչ նկատի ունեն ռուսները, երբ հասկացնում են, թե Հայաստանն էլ Ռուսաստանի Իսրայելն է այս տարածաշրջանում, դրա համա՞ր են ուզում ռազմական ոստիկանության ջոկատ բերել Գյումրիի ռազմաբազա եւ անգամ Երեւան:

Առհասարակ՝ ՌԴ դումայական երկու պատվիրակությունների վերջին այցերը Հայաստան թվում էին իշխանության փոփոխությունից առաջ ճշտումներ անողի ու ճշգրտումներ մտցնողի այցեր: Հրապարակային մասում մի կողմից վստահեցում կար ապրիլյան դեպքերի կրկնության անթույլատրելիության վերաբերյալ (իբր ռուսները հետեւություն են արել, մինչդեռ՝ հայ զինվորի արյան գնով են հասկացել, որ խաղեր թույլ չենք տալու), Ադրբեջանին նոր զենք չվաճառելու կիսահավաստիացում, իսկ ավելի վաղ ՌԴ միջազգային գործերի կոմիտեի նախագահ **Կոնստանտին Կոսաչովը** հաստատորեն էր ասել անցած այցին, թե ապրիլյան պատերազմից հետո էլ նախկին ծավալով զենք Ռուսաստանը չի վաճառում Ադրբեջանին: Հայաստանի անվտանգությանը սպառնացողը գործ կունենա Ռուսաստանի հետ, ասում էին ռուս խորհրդարանականները: Հայերիս տառապանքն այդ առումով փորձ ունի, ընդհուպ՝ վերջին ապրիլյան պատերազմի դառը փորձը: Իսկ ռուսների համար Արցախն ի՞նչ է, Հայաստան չէ՞, որի դաշնակիցն էլի ինքը պիտի լիներ, թե միայն Հայաստանի Հանրապետությունն է իր դաշնակիցը, իսկ Արցախի մասով ոչ ոք ոչինչ չի խոստանում:

Բացի այդ՝ զատուլինները, կոսաչովները Հայաստանում մի հայտարարություն կանեն, Ադրբեջանում՝ մի այլ, պաշտոնական Ռուսաստանն իր ԱԳՆ-ով՝ լրիվ այլ բան կասի, իսկ զենքն էլ առաջվա պես կվաճառեն՝ հո զենքի բիզնեսը չե՞ն կանգնեցնելու: Հիմա զատուլինները մեզ քննադատում են, որ ինչ անեն: Թե՞ իրենց խնդիրն այս պահի հավաստիացումներն էին, որ ոչ մի քայլ Հայաստանը չանի Արցախի հարցում առանց Ռուսաստանի, մանավանդ՝ հաշվարկված, թե՞ պատահաբար մեր խորհրդարանում արդեն հնչել էր Նախիջեւանի մի հատված՝ Հայաստանի զինված ուժերի վերահսկողության տակ գտնվելու հայտարարությունը: Լելե Թեթեի դիմա՞ց: Ինչի՞ հետ էր կապված վերջին այդ հայտարարությունը երիտասարդ ՀՀԿ-ական կողմից, Սերժ Սարգսյանի գլխավոր հրամանատար լինելու դրական շեշտադրմանն ու նրա ապագա վարչապետությունն այդով համեմելու՞ն, թե՞ պլանավորված հետագա քայլերը նախապատրաստելուն: Կա՞ ռուսական ծրագիր Արցախի հարցում: Հիշենք միայն Մինսկի համանախագահ երկու երկրի՝ Ռուսաստանի եւ ԱՄՆ-ի բարդ հարաբերությունները այս պահին: Չեմ կարծում, թե Հայաստանի զինվորականությունը ձեռքերը ծալած համաձայնի ինչ-որ բանի՝ ինչ-որ բանի դիմաց, այսինքն՝ արկածախնդրության: Ողջ Նախիջեւանն էլ վերցնենք, Արցախի անվտանգության գոտին վտանգի տակ դնել չենք կարող: Սա պատասխան՝ եթե մեր տրամադրություններն են ուզում շոշափել զատուլիններն ու կոսաչովները: Այնպես որ հանգիստ կարող ենք քննարկել Զատուլինի մի այլ հայտարարություն՝ Հայաստանի նկատմամբ ցանկացած հարձակում Ռուսաստանը դիտարկելու է որպես սպառնալիք իր նկատմամբ, մենք դա հասկանում ենք Հայաստանի կողքին Արցախի անունն էլ ստորակետով տեղադրված: Մանավանդ՝ պատժամիջոցների տակ ընկած Ռուսաստանի ոչ գործընկերները մեզ նույնպես կարող են նույնացնել Ռուսաստանի հետ՝ իրենց պատիժները կիրառելիս: Ընդ որում՝ Ռուսաստանին անբարյացակամ տրամադրված պետություններից շատերը մե՛ր գործընկերներն են, նրանցից ԱՄՆ-ի հետ մենք վերջերս բավական ջերմ խորհրդարանական երթուղարձ ունեցանք: Միգուցե իրո՞ք այս պահին արժե, որ Հայաստանը ճանաչի Արցախի Հանրապետությունը: Ռուս խորհրդարանականների այցի հրապարակային մասին զուգահեռ՝ ոչ հրապարակային մասի բովանդակությունը կարող էր շատ հարցերի պատասխանը տալ, բայց այդ տեղեկությանը հասարակ մահկանացուներս չենք տիրապետում:

Իսկ տարածաշրջանում մեծ շարժեր են՝ Սիրիայում հարձակումներ գործող Թուրքիան մեկուսանում է Եվրոպայից, մերձենում Ռուսաստանի հետ, Ռուսաստանի երկու դաշնակիցները՝ Հայաստանն ու Թուրքիան, գումարած՝ Ադրբեջանը, այս պահին ամենեւին էլ միմյանց դաշնակից չեն:

Աշխարհի տարբեր երկրներից վտարված ռուս դիվանագետների թիվը հարյուրից անցնում է արդեն, իսկ ռուսական կողմն էլ հայտարարում է , որ անպատասխան չի թողնի սա: Մեծ Բրիտանիայում իրավապահները մոտեցել են ռուսական սրբության-սրբոցին՝ անգլիական տաքուկ անձեռնմխելիությամբ արբեցած ռուս օլիգարխների ունեցվածքի օրինականությանը, նույնը կարող է տեղի ունենալ ԱՄՆ-ում, Գերմանիայում, ուր հայտնվում են օֆշորներում լվացված ռուսական մեծ փողերը:

Ռուսաստանը ստիպված կլինի ավելի խորը դաշնակցել Սիրիա մտած ու արդեն հայաբնակ Ղամիշլին սպառնացող Թուրքիայի հետ՝ տարածաշրջանային միայնակության պատճառով, իսկ մեր դաշնակցի ու մեր ոչ բարեկամի միասնությունից Հայաստանը միայն ու միայն պիտի զգուշանա՝ Պուտինն Անկարա է գնում մի քանի օրից:

Ինչպես չհայտնվենք, ուրեմն, Ռուսաստան- Արեւմուտք հակադրության մեջ՝ ահա մի գլուխկոտրուկ, որ այժմ ներկայանում է Հայաստանին՝ իշխանության նորացմանը զուգահեռ: Արդյոք հայ-թուրքական հարաբերությունների համար մշտապես նախապայման համարվող Արցախի խնդրում վտանգներ կարո՞ղ են լինել:

Իսկ մենք միամտորեն թույլատրում ենք, որ Շենգենյան վիզաների տրամադրումը մեր երկրում իրականացնի ռուս -թուրքական ընկերություն՝ «ՎիզաՄետրիկը»: Որքան էլ հավաստիացումներ հնչեն, թե անձնական տվյալները պաշտպանված են լինելու, այդ ընկերությունում հայեր են աշխատելու՝ դա միայն միամիտներին կարող է համոզել: Պատկերացրեք՝ այդ ընկերության թուրք բաժնետերերը, իրենց տանը նստած՝ համակարգչով անպայման մուտք ունեն ընկերության տվյալների բազա եւ կարող են հետեւել տվյալների հոսքին. ասենք՝ պետական կարեւոր պաշտոնյայի կամ որեւէ մեծահարուստի այցը Բելգիա չի կարող, հա՞, այդ տվյալներից օգտվող թուրք պատասխանատուների հետաքրքրության ծիրում լինել, ինչպիսի միամտություն: Հեռուն գնացող հետեւությունները թողնում ենք ընթերցողին: Հետո էլ լուրջ-լուրջ խոսում ենք Ֆեյսբուքում անձնական տվյալների արտահոսքերից, ընդհանրապես՝ ազգային անվտանգությունից:

Մտահոգիչ է նաեւ ՌԴ Զինված ուժերի հարավային ռազմական շրջանի շտաբի այն հաղորդագրությունը, ըստ որի Երեւանում եւ Գյումրիում պետք է տեղակայվեն ՌԴ ԶՈւ Ռազմական ոստիկանության ստորաբաժանումներ: Ո՞ր պայմանագրով: Ինչի՞ համար: Ոնց է կարգավորվելու նրանց գործողությունների հստակ կանոնակարգումը մեր պետության կողմից: Եթե միայն Գյումրիի ռուսական ռազմաբազայում լիներ, այն եւս հստակ կանոնակարգով՝ սա միգուցե քննարկելի կարելի էր համարել, բայց վերը մանրամասն քննարկված ժամանակաշրջանի առումով եւ հատկապես Երեւանում հրազենով ռուս ռազմական ոստիկանների ներկայությունը հակասում է մեր երկրի օրենքներին, հարցեր է ծնում եւ առասպելների թեմա դառնում: Մանավանդ միջպետական համաձայնագրերով այդպիսի ստորաբաժանման՝ Հայաստանում լինելը նկարագրված չէ, ու այդպիսի քայլը նախ պետք է համաձայնագրի կետերի լրացմամբ արվի, որը, մեր կարծիքով, նկատի ունենալով ներկա տարածաշրջանային իրավիճակը, պետք է որ մեր քաղաքական ուժերի համար տասն անգամ չափելու ու նոր կտրելու առիթ դառնա: Եւ պետության արժանապատվության խնդիր եւս կա՝ ի՞նչ է, ռուսները մեր ռազմական ոստիկանությանը չե՞ն վստահում, այդ դեպքում մե՞նք ինչու պիտի ռուս զինված ոստիկանին վստահենք, ի վերջո հենց նա իր զենքով կարող է հանցագործություն կատարել: Համենայնդեպս՝ Պերմյակովի կատարածը Գյումրիում եւ հետագա գործընթացները դառը հուշեր են արթնացնում:

Հետաքրքրական է, որ այդ ամենին հետեւել է Հայաստանում ԱՄՆ դեսպան **Ռիչարդ Միլզի** այն հայտարարությունը, թե իր երկիրը Հայաստանում չի աջակցում իշխանությունն անօրինական տապալելու եւ բռնությամբ իրենց քաղաքական օրակարգն առաջ տանելու ծրագրեր ունեցող այնպիսի խմբերին, ինչպես օրինակ «Սասնա Ծռերն» են: Ռուսներն ո՞ւմ են աջակցում, համենայնդեպս՝ տեսանելի հատվածում նրանք միայն իշխանության հետ են շփվում: Հըմ: Վարչապետի նշանակումից առաջ կենացները քաղցրանում են:

Այս ֆոնին ապրիլի 9-ին կառավարությունը հրաժարական կտա, իր պաշտոնավարման ժամկետը կավարտի Սերժ Սարգսյանը, կերդվի նոր նախագահը, իսկ մինչ այդ պաշտոնապես ՀՀԿ-ն վարչապետի թեկնածու կառաջադրի:

## ՑԱՎԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Տիկին **Սեդա Գաբրիելյանի** վաղաժամ մահվան կապակցությամբ ՌԱԿ Կենտրոնական վարչությունը եւ «Ազգ» թերթի խմբագրությունը խորապես ցավակցում են նրա ամուսնուն՝ Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի պրոռեկտոր Մհեր Մելիք-Բախշյանին եւ հանգուցյալի մյուս բոլոր հարազատներին:

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կարիքներն ապահովելու նպատակով A4 ֆորմատի թուղթ ձեռքբերելու համար կազմակերպության ընտրության երկու փուլով բաց մրցույթի նախաորակավորման գործընթացի ժամկետի երկարացման մասին**

**Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը իրականացնում է երկու փուլով բաց մրցույթի նախաորակավորման գործընթաց՝ ՀՀ կենտրոնական բանկի կարիքներն ապահովելու համար՝ A4 ֆորմատի թուղթ ձեռքբերելու նպատակով:**

**Նախաորակավորման գործընթացին կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետության եւ օտարերկրյա իրավաբանական եւ ֆիզիկական անձինք, որոնք բավարարում են սույն հայտարարությամբ եւ հրավերով սահմանված որակավորման չափանիշներին եւ ունեն գնման պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող իրավունք, տեխնիկական եւ ֆինանսական միջոցներ:**

**Նախաորակավորման գործընթացին մասնակցել ցանկացող անձինք պետք է բավարարեն հետեւյալ պահանջներին՝**

**Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝**

**1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը.**
**2) մասնագիտական փորձառություն.**
**3) տեխնիկական միջոցներ.**
**4) ֆինանսական միջոցներ.**
**5) աշխատանքային ռեսուրսներ:**

**Հայտերն անհրաժեշտ է ներկայացնել թղթային ձեւով, Հայաստանի Հանրապետություն կենտրոնական բանկ՝ ք. Երեւան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6 հասցեով:**

**Հայտերը պետք է ներկայացվեն հայերեն լեզվով:**

**Մասնակիցները կարող են իրենց հայտերը ներկայացնել մինչեւ 2018 թ. ապրիլի 09-ի ժամը 16:00 «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ» ք. Երեւան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6 հասցեով:**

**Հայտերի բացման նիստը անց է կացվելու ՀՀ կենտրոնական բանկում՝ ք. Երեւան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6 հասցեով, 2018 թ. ապրիլի 09-ին ժամը 16:00:**

**Նախաորակավորման գործընթացի արդյունքների ամփոփման նիստը հրավիրվում է 2018թ. ապրիլի 16-ին ժամը 16-00:**

**Նախաորակավորման գործընթացին մասնակցելու հրավերը հրապարակված է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ինտերնետային WEB կայքում (www.cba.am): Նախաորակավորման գործընթացին մասնակցելու հրավերը, ինչպես նաեւ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար ցանկացողները կարող են դիմել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի Ներքին ծառայությունների վարչություն, հեռ. 59-28-02,59-28-05 ներքին՝ 18-02, 18-05:**

ՀՀ ԿԲ հասարակայնության հետ կապերի ծառայություն

«ԱԶԳ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԳ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azgdaily@gmail.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960, 060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի
"AZG" Weekly
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st., Yerevan, Armenia, 0010

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 04 Ա N 047261, տրուած՝ 25.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Ստորագրուած է տպագրութեան 29.3.2018, գինը՝ 200 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2:

Ազգ
ՀԱՎԵԼՎԱԾ
ՄՇԱԿՈՒՅԹ
Թիվ 12(372)
30 ՄԱՐՏ
2018

# ԶԱՊԵԼ ԵՍԱՅԱՆ
# «Մահվան քավարանեն կուգամ, աղջիկս»

Կլարա ԹԵՐՁՅԱՆ

***Երկարամյա լրագրող-արձակագիր Կլարա Թերզյանը այն քիչ անձերից է, ում երիտասարդության տարիներին հազվագյուտ բախտ է վիճակվել անձամբ ճանաչելու եւ շփվելու մեծանուն գրող, ազգային-հասարակական գործիչ, դասախոս Զաբել Եսայանին, ինչպես նաեւ նրա ընտանիքի անդամներին: Ոչ այնքան հուշագրական, որքան փաստագրական նյութերի ու վկայությունների համատեղումով գրված այս հոդվածը, որի տպագրումը կավարտենք մեր առաջիկա համարում, կարող է նոր լույս սփռել Զ. Եսայանի կյանքի հայաստանյան շրջանի, հատկապես նրա բանտային կյանքի ու դեռեւս ամբողջովին չբացահայտված հանգամանքներում տեղի ունեցած նրա դժխեմ վախճանի մասին:***

Մեծահասակի ու երեխայի մտերմության մեջ մի անբացատրելի ուժ կա: Նրանք իրար հասկանում են առանց խոսքի ու յուրովի սիրում: Այդպիսի մտերմություն կար Զաբել Եսայանի եւ իմ միջեւ, երբ նա հիսունն անց էր, իսկ ես նրանից կես դար փոքր էի:

Զաբել Եսայանը հաճախ էր լինում մեր տանը, գալիս էր եւ մենակ, եւ իր աղջկա ու տղայի հետ: Ծնողներիս հետ խոսում էին, ծիծաղում, խորհում, տխրում...

Ես ու քույրս մի անկյուն քաշված (արգելված էր մեծերի հետ սեղան նստել, նրանց զրույցը լսել)՝ հմայված նայում էինք տիկին Զաբելին: Հատկապես տպավորիչ էին աչքերը, լիքը շուրթերն ու ալեխառն մազերը, որ միշտ հավաքված էին ծոծրակին, բայց չէին ենթարկվում, ու գանգուրները դուրս էին պրծնում՝ արծաթե պսակի պես շրջանակելով դեմքը, որ լույս ու բարություն էր ճառագում:

Մի անգամ նա ականատես եղավ, թե ինչպես, սեղանը դաշնամուր դարձրած, նվագում եմ ու երգում: Դեմս Կոմիտասի երգերի նոտաներն էին, որ միշտ հենում էի մի որեւէ առարկայի: Եսայանը շոյեց գլուխս ու ասաց. «Պզտիկս աղջիկս, ես քեզ անպայման դաշնակ կնվիրեմ: Երբ «Բարպա Խաչիկ» գիրքս տպվի, քեզ անպայման գեղեցիկ դաշնակ կգնեմ»:

Ուրախությունից տեղիցս վեր թռա ու փարվեցի նրան: Դաշնամուրն այն տարիներին անհասանելի երազանք էր: Մինչեւ օրս էլ համոզված եմ, եթե գիրքն այդ ժամանակ լույս տեսներ, Եսայանն անպայման իր խոստումը կկատարեր:

Մեր տունը Խորհուրդների փողոցում էր՝ երեսնական թվականների Երեւանի կենտրոնում: Նրա շրջակայքում էին Լենինի հրապարակը, Կառավարական տունը, բանկը, թատրոնը, դեղատունը, «Տորգսինը», Քսանվեց կոմիսարների զբոսայգին, «Անաստված» կինոթատրոնը, բաղնիքը... Բոլոր ճանապարհներն ասես անցնում էին մեր տան միջով: Սուրճի, թեյի սեղանի շուրջը մեզ մոտ հավաքվում էր մտավորականության ծաղիկը: Մեր ընտանիքին մոտ մարդիկ հիվանդ հորս նկատմամբ ուշադիր էին. մի երեկո անգամ նրան մենակ չէին թողնում: Նրանց այցելությունը ոչ միայն ծնողներիս, այլեւ քրոջս ու ինձ համար էլ արտաքին աշխարհի հետ կապ էր:

Մի երեկո Զաբել Եսայանը մեզ մոտ էր ամբողջ ընտանիքով: Երկար մնացին եւ երբ գնացին, տատս նկատեց, որ սեղանին մոռացել են իրենց տան բանալիները:

Իսկ տունը բավականին հեռու էր՝ Աբովյան փողոցի «մասնագետների» շենքը: Մինչեւ մերոնք մտածում էին՝ ինչ անել, անձկաս վերցրի բանալիներն ու դուրս թռա: Ամառային գիշեր էր, վազում եմ մթության մեջ. ահա Աբովյան փողոցը, որ քիչ թե շատ լուսավորված էր... Նրանց հասնում եմ դեղատան մոտ ու տալիս բանալիները: Մինչ նրանք անսպասելիությունից չգիտեն ինչ անել՝ ես արդեն հեռվում եմ: Տանը, իհարկե, ստացա հասանելիք պատիժը, բայց հայրս նաեւ գովեց համարձակությունս:

1935 թվականին հայրս վախճանվեց. Զաբել Եսայանը մեր ընտանիքին ավելի մտերմացավ: Նրա որդին՝ Հրանտը, խառնվածքով մորից տարբեր էր, միշտ լռակյաց, գլուխը կախ, բայց շատ բարի ժպիտ ուներ: Նրան բոլորը սիրում էին ու ասում, որ լավ ֆիզիկոս է: Քույրը նրա հակապատկերն էր՝ մինչեւ հիմա էլ ականջիս Սոֆիի ծիծաղն է. այնքան կենսուրախ էր:

Եսայանների ընտանիքում երջանիկ իրադարձություն եղավ. Սոֆին ամուսնացավ Սարիբեկ անունով մի երիտասարդի հետ, որը գյուղից էր եւ, եթե չեմ սխալվում, բանասեր էր, համալսարանը նոր էր ավարտել:




***Փարիզ, Զ. Եսայանի անվան ծեմուղու բացման արարողություն***

Սոֆին աղջիկ ունեցավ, անունը Զաբել դրեցին: Կապույտ աչքերով, սպիտակամաշկ, սիրուն երեխա էր եւ շատ նման էր իր տատին:

Զաբել Եսայանը մեծ ոգեւորություն էր ապրում, խանդավառված էր հայրենիքով. տպավորություններն ամբարում էր, որ հետագայում վեպեր էին դառնալու: Նա սիրված էր որպես մարդ, որպես ստեղծագործող, որպես դասախոս: Իսկ այդ տարիներին հասարակության կողմից սիրվածները միշտ շրջապատված էին մարդկանցով, հատկապես երիտասարդությամբ:

Եսայանն ամենուրեք էր՝ Գրողների միությունում, համալսարանում, վեպեր էր գրում, ելույթներ ունենում, զեկուցումներ կարդում, եռանդուն մասնակցում էր գրական վեճերին, հալածանքներից պաշտպանում տաղանդավոր գրողներին:

Մերոնք՝ մայրս եւ տատս, հիացած ու զարմացած լսում էին նրա պատմածները, թե ինչ է ասել Չարենցին, Բակունցին, Մկրտիչ Արմենին քննադատողներին: Ես լսում էի կլանված ու յուրովի ընկալելով պատմածը, առանց պատկերացնելու իրադրությունը, ուրախանում, որ Զաբել Եսայանն այդքան մեծ է:

Անցան տարիներ, հետո հասկացա, թե նրա ամեն մի ելույթն ինչ նշանակություն ու արժեք ուներ: Ահա նա ինչ է ասել Չարենցի մասին. «Եղիշե Չարենցը մեր ամենամեծ բանաստեղծն է, այդ անուրանալի է բոլորի համար, նրա տաղանդը շողշողուն լույսի պես շլացնում է մեզ... Մեզանից շատերի անուններն անհետ կկորչեն, բայց գալիք սերունդները չեն մոռանա Չարենցին: Թերեւս մեզանից ոմանց անուններն անցնեն գալիք սերունդներին միայն այն պատճառով, որ Չարենցի արժեքով մեկու մը մասին եղել ենք արդար կամ անարդար»:1

Երբ Եսայանին մեղադրել են, թե ինչո՞ւ ժամանակակից կյանքի մասին վեպ չի գրում, տարված է անցյալով, իրականությունը պատկերելուց վախենում է, Եսայանը պատասխանել է. «Ինչո՞ւ պետք է վախենանք այն կյանքից, որի մեջ ապրում ենք ուրախությունով եւ ոգեւորությունով եւ որուն կերտման մասնակցում ենք»,- եւ ավելացրել, որ չի կարող անմիջապես նոր թեմատիկայի անցնել, նշելով. «Ոչ ոք ինձ երախտապարտ չէր լինի, եթե մեկը մյուսի ետեւից հրապարակ հանեի վիժված գործեր: Իմ բազմամյա փորձառությունս եւ իմ ստեղծագործական առանձնահատուկ տվյալներս ինձ թելադրում են համբերել եւ այդ միջոցին տոգորվել մեր ներկա գրականությամբ»: Զաբել Եսայանը պաշտպանական մի անձնավորության, որ եկել էր գրողների տուն հերթական միջոցառման՝ հաստատելու, որ, իբր, Ակսել Բակունցը ժողովրդի թշնամի է, զայրույթով ասում է.

«Ես չգիտեմ, թե դուք ո՞վ եք կամ ի՞նչ կաշխատիք, բայց իրավունք չունիք Բակունցին վերաբերյալ այդ կերպ արտահայտվելու:

Ակսել Բակունցը Մոպասանին քով դրվելիք արվեստագետ մըն է»:

Եվ այս բոլորը անհասի պաշտամունքի տարիներին:

Չգիտեմ, թե գույժն ինչպե՞ս հասավ, ինչպե՞ս իմացանք, որ Զաբել Եսայանը ձերբակալված է: Արցունքը քիչ էր: Պետք էր նեցուկ լինել նրա հարազատներին, օգնել, որ ձեռագրերը չոչնչացվեն: Մայրս, վտանգի ենթարկելով իրեն, օգնեց: Սոֆիին, ամուսնուն եւ երեխային հանեցին Աբովյան փողոցի իրենց բնակարանից եւ տեղավորեցին ինչ-որ փայտաշեն տնակում: Հրանտին ազատեցին աշխատանքից, բայց այն օրը, երբ ուզում էին հանել նաեւ բնակարանից, Մոսկվայից պաշտոնական գրություն ստացվեց. Հրանտ Եսայանի գյուտն արժանացել էր հեղինակային իրավունքի եւ թույլ էր տրվում ներդնել արտադրության մեջ: Զաբել Եսայանի որդին իրավունք է ստանում աշխատել գործարանում եւ ապրել իր տանը: Բայց չկա նրանց տան հիմնական սյունը՝ Զաբել Եսայանը: Եվ հոգեկան ծանր ապրումներն իրենց գործն անում են. հիվանդությունը, մահը չոքել են Եսայանների դռներին: Մահանում է Հրանտի աղջիկը՝ Սոնան, կինը՝ Բերկրուհին, ավելի ուշ, հիսնական թվականների սկզբին, որդին՝ Վահիկը: Դպրոցի դասատուները ողբում են, ասելով, որ կորցրին ապագա մեծ ֆիզիկոսի:

Սոֆի Եսայանի մոտ հոգեկան խանգարման նշաններ են նկատվում: Ամուսինը նրան համոզում է երեխայի հետ գյուղ գնալ՝ իբր հետագա հալածանքներից խուսափելու համար: Սոֆին գնում է Գառնի, աշխատանքի ընդունվում դպրոցում որպես ֆրանսերենի ուսուցչուհի: Ամեն րոպե սպասում ենք, որ մորս էլ կձերբակալեն, նա աշխատում է հանրային գրադարանում: Երբ աշխատանքից վերադառնալուց մի փոքր ուշանում է, ես ու քույրս վախվորած դուրս ենք գալիս փողոց, սպասելով կամ նրան, կամ վատ լուրի, կարծես այդ լուրը տանը մեզ չի հասնի...

Մորս ազատում են աշխատանքից. գալիս է տխուր, վիրավորված, բայց ոչ ընկճված: Նրան ասել են. «Ռուսերեն չգիտեք, ձեզ պետք է փոխարինենք ուրիշ բաժին»: Մայրս, անգլերեն, ֆրանսերեն, մի քիչ էլ գերմաներեն գիտեր եւ իր աշխատած բաժնում հենց եվրոպական լեզուների իմացություն էր անհրաժեշտ. արտասահմանից գրքեր, պարբերականներ էին ստացվում, որ պետք է կարդար, մշակեր: Կռահելով, որ ռուսերենը սոսկ պատրվակ է իրեն աշխատանքից ազատելու համար, մայրս դիմում է տալիս ու գրադարանից հեռանում:

Պետք է նոր աշխատանք գտնել, հոգալ ընտանիքի ապրուստը. ամեն րոպե պատրաստ ավելի վատի...

Մեր ընտանիքն ապրում էր հորս մահից հետո մեզ տրվող անհատական թոշակով: Հայրս քաղաքական վտարանդի էր, Հայաստան էր եկել Ֆրանսիայից: 1925 թվականին Ֆրանսիայի կառավարությունը կոմունիստական գործունեության համար նրան երկրից վտարել էր, եւ, համաձայնություն ստանալով խորհրդային կառավարությունից, մորս հետ եկել էր Երեւան: Թերեւս այդ հանգամանքը օգնեց, որ մորս չձերբակալեցին:

Մայրս աշխատանք է գտնում սոցիալական ապահովագրության բաժնում՝ որպես մեքենագրուհի եւ ձեւացնում է, որ շատ գոհ է: Ոչինչ չի ասում, բայց ուղեղում շարունակ մի միտք է. եթե իրեն ձերբակալեն, զավակներն ու ծեր սկեսուրը ի՞նչ են անելու, ո՞վ պետք է նրանց օգնության ձեռք մեկնի: Շուրջը ոչ մի հարազատ չկա, բոլորն արտասահմանում են, աշխարհով մեկ սփռված:

Ու շարունակ լսում է. «Դուք արտասահմանում հարազատներ ունեք», հաշվի չի առնում հայի ճակատագիրը, թե հայն ինչո՞ւ է աշխարհով մեկ ցրված:

Իսկ մորս հարազատները չգիտեն իրավիճակը, շարունակ նամակ են գրում:

Հիշում եմ մորս կցկտուր պատասխանները. մենք լավ ենք, երեխաներն առողջ են, մեջբերումներ՝ մեր խոսքերից եւ, որ շատ է մտածում իրենց մասին, թե ամեն րոպե կարող են գործազուրկ դառնալ:

Միայն Ֆրանսիայում ապրող քույրն է զգում, որ նրա վիճակը լավ չէ, առիթ է փնտրում, որ մեկի միջոցով ծանրոց ուղարկի: Իսկ այդ ծանրոցը մի նոր վախի պատճառ է դառնում:

Մայրս քրոջս ու ինձ շարունակ ներշնչում էր. ինչ լավ է, որ հայրենիք եկավ, որ մենք սովորում ենք, իսկ Ֆրանսիայում չէր կարողանա մեզ ուսման տալ, ու մենք կաշխատեինք որպես կոճակ կարող կամ օղակ բաց անող բանվոր:

➡Բ

AZG NEW MSHAKUIT.QXD 29/03/2018 20:44 Page 2



**Անահիտ ՀՈՎՍԵՓՅԱՆ**
Գերմանիա

# Խեղճացած Ադրբեջան Համբուրգի Կովկասյան մեջլիսում

Համբուրգի նշանավոր Էլբֆիլհարմոնիայում մարտի 28-ից ապրիլի 3-ն անցկացվող Կովկասի ժողովուրդների փառատոնին մեր երկրից մասնակցում են Հայաստանի սիմֆոնիկ նվագախումբը՝ դիրիժոր **Սերգեյ Սմբատյանի** ղեկավարությամբ, «Գյուրջիեւ» անսամբլը, **Տիգրան Համասյանը՝** «Լույս ի լույս» ծրագրով, որի մաս են կազմում նաեւ դուդուկահար **Նորայր Քարտաշյանը**, Երեւանի պետական կամերային երգչախումբը՝ **Հարություն Թոփիկյանի,** «Գեղարդ» երգչախումբը՝ **Անահիտ Պապայանի** ղեկավարությամբ: Կովկասյան փառատոնին ուրիշ հայեր էլ մասնակցություն ունեն՝ Ինգոլշտադտի վրացական կամերային նվագախմբի գլխավոր դիրիժորը **Ռուբեն Ղազարյանն** է, իսկ «Կովկասյան մանրանվագներ» անվանյալ համերգին, որի ծրագրում հնչելու է նաեւ Կոմիտաս եւ Տիգրան Մանսուրյան, մասնակցում են դուդուկահար **Էմանուել Հովհաննիսյանը**, սոպրանո **Կարինե Բաբաջանյանը**, իսկ «Քուս» լարային քառյակի կազմում թավջութակահար **Միքայել Հախնազարյանն** է:

Գերմանացիների վրացասիրությունն այս անգամ էլ անթաքույց է՝ նրանք անհամեմատ շատ են եւ իրենց մշակույթն այս հարթակում բազմակողմանի ներկայացնելու առիթն ունեն՝ վրացական երաժշտությունն այս փառատոնում հագեցնելու է նաեւ իրենց լեզվով ներկայացվող կինոն: Ադրբեջանը ապրիլի 1-ին մեկ համերգով ներկայացնում է ժողովրդական երգիչ **Ալիմ Քասիմովը**, որ ելույթ է ունենալու երգչուհի **Ֆարգանա Քասիմովայի**, եւ քամանչա, թառ, երկու այլ նվագարաններից կազմված խմբի ուղեկցությամբ: Մեկ ելույթ էլ վերապահված է Վրաստանի Պանկիսի կիրճից չեչենական «Ացնաշ» կանանց ժողովրդական երգչախմբին: Թվում է՝ ադրբեջանցիները պիտի բողոքեին, թե բազմաշերտ, իրենց «դարավոր» մշակույթի հանդեպ խտրականություն են իրականացնում: Նման ընդվզում գերմանալեզու գրավոր հարթակում աչքովս դեռ չընկավ: Փոխարենը, մեղմ ասած՝ որքան էլ ընդհանուր առմամբ ընդունելի մտահոգություն, այդուհանդերձ զարմանալի է այն դիտանկյունը, որ ներկայացնում է գերմանական taz-ը՝ մանավանդ, երբ քննադատում է Էլբֆիլհարմոնիայի հիշյալ փառատոնի կազմակերպիչներին: Հպանցիկ ներկայացնենք ծավալուն հոդվածի առավել «սուր» հատվածները:



Թերթն իր անդրադարձում հակիրճ ձեւակերպում է, թե ցանկություն ունեին Ս. Հարության տոնին ընդառաջ զուտ ծիսական երաժշտություն ներկայացնել, բայց փառատոնի ընթացքը հուշում է, որ չեզոքություն պահպանել չի հաջողվելու, քանի որ խիստ քաղաքականացված, բարդագույն այս տարածաշրջանում ազգային երաժշտությունը, եկեղեցին ու քաղաքականությունը միահյուսված են իրար: Հայոց ցեղասպանության թեման շրջանցվում է, հին քրիստոնեական երգեցողությունը պաշտած է ներկայացվում, իսկ ուղղափառ եկեղեցու դերն՝ անտեսվում: Հայաստանից, Վրաստանից, Ադրբեջանից հրավիրյալ խմբերի կողքին Կովկասի ռուսական հատվածից հրավիրյալներ չկան: Սա միակ քաղաքական «բացթողումը» չէ, կարծիք է հայտնում թերթը: Ըստ նույն աղբյուրի, թշնամացած Հայաստանի եւ Ադրբեջանի երաժիշտների համատեղ համերգն օրինակ կազմակերպել չի լինի, որքան էլ դրա կարիքը կա. եւ մուղամի վարպետ ադրբեջանցի ժողովրդական երգիչ Ալիմ Քասիմովը բեմում միայնակ ելույթ կունենա:

Ափսոս է իհարկե, բայց ճշմարիտ է նաեւ այն, որ ադրբեջանցին եթե հայի հետ բեմ դուրս գա, պիտի ճնշումների երկյուղն մտքում ունենա: Դեռ լավ են հիշում ադրբեջանցի գրող **Աքրամ Այլիսլիի** պարագան, որ հերոսից ժողովրդի թշնամու վերածվեց, երբ ԼՂ մարտերի ժամանակ 2012-ին գրեց Բաքվում հակահայ արշավի մասին: Ազգայնական ատելության ալիքը պոռթկաց, քաղաքական գործիչները Այլիսլիին սպառնացին, եւ նա Թուրքիա փախավ: Այս տեսակետից ընկալելի է, որ Էլբֆիլհարմոնիան ռիսկի չի ուզում գնալ: Բայց Քասիմովին չեն էլ հարցրել, թե կուզենա՞ հայերի հետ ելույթ ունենալ: Հնարավոր է, նա ռիսկի դիմեր, գրում է գերմանական թերթը՝ շարունակելով. «Իսկ կազմակերպչի այն փաստարկը, թե Քասիմովը հայերի հետ չի կարող ելույթ ունենալ, քանի որ արաբական ազդեցություն կրող ադրբեջանցիների մուղամը հետեւում է այլ օրենքների, մասամբ է այդպես, քանի որ ջազում հաջողվում է: Միգուցե Էլբֆիլհարմոնիան Քասիմովի համար երաժշտական գործընկեր կարողանար գտնել», գրում է taz-ը ու հավելում՝ բայց այդպես չարվեց:

Իմ մեջ հայ ջազ երաժշտի հնչեղ անվան մի տարբերակ ուրվագծվեց, միայն այնքան էլ պարզ չէ, թե գերմանացի հոդվածագիրն իսկապես ի՞ր, թե՞ ադրբեջանցի մուղամաստեղծի չկայացած նախաձեռնության մասին է ակնարկում: Այսպես կոչված՝ հաշտության կամ ավելին՝ ստեղծագործական հարթակ է ուզում ստեղծել երկու հարեւանների միջեւ, որ վատ չէ, բայց՝ Ալիեւի բռնապետարի հրամայական եղանակի շեշտն առանց վերլուծել- քննադատելու, ուզում ես գերմանացի մեր գործընկերոջը հանգիստ հարց ուղղել՝ ինչպե՞ս: Բայց՝ շարունակենք խոստացված հատվածները մեջբերել:

Հայկական Գյուրջիեւ խմբի եւ սիրիական «Հեվար» անսամբլի միջեւ համագործակցություն կա, գրում է taz-ը: Առաջին անգամ կայացող այդ ձեռնարկի «ենթատեքստն» այն է, որ Հայոց ցեղասպանության տարիներին հայ փախստականները Սիրիայում են ապաստանել: Այսօր Սիրիայից են Հայաստան փախչում, եւ այս փոխադարձ համերաշխությունը հիշատակի եւ երախտագիտության համերգի առիթ է դառնում: Այս համագործակցությունը սակայն քաղաքական առումով դիտարժան չէ, երաժշտական առումով՝ ոչ խնդրահարույց, քանի որ հայկական ժողովրդական երաժշտությունը արաբական տարրերից զերծ չէ: «Հեղափոխական չէ» նաեւ այն հանգամանքը, որ Ռուբեն Ղազարյանն է ղեկավարում վրացական կամերային անսամբլը: Նա իրեն լավ է զգում՝ մտածելակերպով նման են, ժողովուրդներն՝ իրար բարեկամ: taz - ը համարձակ քայլ է համարում չեչենների «Ացնաշ» խմբին հրավիրելը: Պանկիսի կիրճը վաղուց ի վեր համարվում է զենքի եւ թմրամիջոցների տարանցիկ ուղի: Երբ «Իսլամական պետությունն» այնտեղ զբաղված էր երիտասարդներին իր շարքերը ներգրավելով, բնակիչները դիմադրեցին՝ Թբիլիսիի խորհրդարան նամակ ուղարկեցին, որ հաջող ընթացք ունեցավ: Հիմա խաղաղ է: Դրանից հետո կանայք սկսեցին սոցիալական ծրագրեր կյանքի կոչել, ավանդույթները վերհիշել, այդպես «Ացնաշ» խմբի կանայք հնագույն երգերը վերհիշեցին:

taz-ի հեղինակը Տիգրան Համասյանի, Երեւանի կամերայինի, «Գեղարդ» երգչախմբերի «վիրտուոզ, խորհրդավոր» երգեցողությունը գնահատելով, չի մոռանում քննադատություն հնչեցնել հայոց առաքելական, վրաց ուղղափառ եկեղեցիների հասցեին՝ առաջինի պարագայում՝ հենվելով գերմանացի կոմպոզիտոր **Ուլրիխ Քլանի**՝ ետխորհրդային շրջանում հայոց եկեղեցու մասին «կաշառակեր, ազգայնական եւ մեկուսացված» ձեւակերպմանը, երկրորդի պարագայում՝ ներկայացնելով վրաց հեղինակ **Նինո Հարաթիշվիլու** կարծիքը՝ «Պերեստրոյկայից հետո վրաց եկեղեցին մեծ իշխանություն է ձեռք բերել, նրան չի հետաքրքրում հասարակության առաջընթացը»:

Կովկասյան փառատոնի ավարտին ի՞նչ կգրեն մյուս թերթերը, ո՞ւմ ելույթը կմնա ունկնդրի, հանդիսատեսի հիշողության մեջ, կամրագրի պարագան, որ, ավաղ, առավել ու առավել է քաղաքականացվում՝ նաեւ մեր կամքից անկախ: Նորաբաց Էլբֆիլհարմոնիայում հայ երաժիշտներն արդեն հասցրել են տարբեր ելույթներով փաստել, որ հզոր ուժ ունեն: Հայաստանի մշակույթի քաղաքականությունը նրանց գերհզոր դարձնելը, թիվը բազմապատկելն է: **Հարուկի Մուրակամին** ասում է՝ «գրելիս երազիր»: Միգուցե այժմ Էլբֆիլհարմոնիայի համերգային կազմակերպիչները գալիք փառատոններին եկամտաբերության տեսակետից Ադրբեջանից որեւէ երաժշտի չհրավիրեն: Իսկ թշնամացած մեր երկրների միջեւ պատերազմն էլ... վաղուց ավարտված լինի:

Սուրբ Հարության տոնին ընդառաջ երազներն, ասում են, իրականանալու հավականություն ունեն:

# ԶԱՊԵԼ ԵՍԱՅԱՆ. «Մահվան քավարանեն...»

**Ա**

**Նրա խոսքն ընդունում ենք անվերապահորեն, հպարտանում, որ դպրոց ենք գնում, հետո համալսարան կգնանք...**

**Սկսվեց Հայրենական մեծ պատերազմը, որ նոր վիշտ ու փորձություններ բերեց միլիոնավոր մարդկանց, այդ թվում եւ մեր ընտանիքին: Մայրս մեկնում է գյուղ, աշխատում է դաշտում, որ կարողանա կերակրել մեզ:**

**1942 թվականի գարնան մի օր հնչում է դռան զանգը: Ներս է մտնում գզգզված մազերով, աղքատի հագուստով մի կին: Տատս կարծում է մուրացկան է, ուզում է հաց տալ, իսկ նա վզովն է ընկնում ու հեկեկում: Սոֆի Եսայանն է: Առանց հուզվելու հնարավոր չէ նկարագրել նրա տեսքը: Հագել էր մոր մահուդե խալաթը, որից ոչ գույն էր մնացել, ոչ տեսք: Խալաթը հասնում էր մինչեւ գետնին, մեջքին գոտու փոխարեն լվացքի պարան էր կապված, իսկ ոտքերին՝ պատառոտված կոշիկներ:**

**Երբ մի փոքր հանգստացավ, պատմեց, որ աղջիկը՝ Զաբելը, մահացել է: Երեխան կարմրուկով է հիվանդացել. ինքը չի իմացել՝ լողացրել է, տանտերերն էլ տնից են հանել:**

**Աներեւակայելի թշվառություն. խեղճ կինն իրեն լրիվ կորցրել էր: Ո՞ւր էր առաջվա ծիծաղը, մնացել էին միայն կապույտ աչքերը եւ խիտ ու գանգուր մազերը, որ արդեն ճերմակին էին տալիս:**

**Իմացանք նաեւ, որ Սարիբեկը Սոֆիին գյուղ ուղարկելուց հետո ամուսնացել է: Հետո ռազմաճակատ է մեկնել եւ այնտեղ զոհվել: Զապել Եսայանի ամբողջ ունեցվածքը, այդ թվում եւ ամուսնու՝ Տիգրան Եսայանի նկարները, մնացել են այդ կնոջը:**

**Մայրս, որ կիրակի օրերը գյուղից տուն էր գալիս, լսելով այս պատմությունը, որոշեց դատի տալ եւ այդ կնոջից Եսայանների իրերը հետ վերցնել: Բայց դատից ոչինչ չստացվեց, քանի որ կինն ամեն ինչ թաքցրել էր, ասելով, որ Սարիբեկն իրեն ոչինչ չի թողել:**

**Սոֆիին հաջողվեց տեղավորել եղբորս ապրած տան նկուղային բնակարանում, լուծվեց նաեւ նրա աշխատանքի հարցը, ընդունվեց դպրոց որպես գրադարանավարուհի: Եվ թվում էր, թե նրա կյանքը կամաց-կամաց կմտնի հունի մեջ, բայց հիվանդությունը գլուխ էր բարձրացնում: Նա մեկ տանն էր, մեկ՝ հոգեբուժարանում: Ընդ որում, հիվանդության նոպաների ժամանակ չափազանց քաղաքավարի էր: Նրա հիվանդությունը քաղաքական հողի վրա էր. սեւ ցուցակ ուներ, ուր գրանցում էր իր կարծիքով կասկածելի մարդկանց: Կարմիր ցուցակում միայն մորս անունն - ազգանունն էր՝ Ալիս Թերզյան: Նրան սիրում էր ու վստահում: Ալիսն իր սուղ միջոցներից միշտ նրան բաժինն էր հանում, միշտ նեցուկ էր, պաշտպան: Լինում էին պահեր, երբ Սոֆին ինձ ու քրոջս նախանձում էր, ուզում էր, որ մայրս իրեն ավելի շատ ուշադրություն նվիրի: Ինչ արած, հիվանդ էր եւ պետք էր համբերատար խնամել նրան: Այն, ինչ Զապել Եսայանը չկարողացավ անել իր դստեր համար, մայրս արեց պատերազմական եւ հետպատերազմյան ծանր, զրկանքներով ու դառնություններով լեցուն տարիներին:**

**Զարմանում եմ, թե մորս փխրուն ուսերը որքան փորձությունների դիմացան: Երբեմն նա ինձ պատկերվում է անվարժ լողորդի տեսքով, որը, չիմանալով, թե ծովը խորն է, նետվում է ալիքների մեջ ու լողում:**

**Չի խորտակվում, որովհետեւ չի պատկերացնում խորությունն ու իրեն սպառնացող վտանգը:**

**Բայց իրականում մի՞թե այդպես էր, մի՞թե նա չէր զգում ծովի խորությունը: Պարզապես բնությունը նրան օժտել էր հոգեկան մեծ ուժով ու պայծառ հավատով: Վիշտն ու դժվարությունը տանում էր զուսպ, նրա շուրթերից տրտունջ, դժգոհություն չէր լսվում: Միշտ մեր ընտանիքի վիճակը համեմատում էր ուրիշների հետ եւ հավատացնում, որ մերն ավելի լավ է: Ուրիշի վիշտը մեծացնում էր, մերը փոքրացնում եւ կարողանում էր ինձ ու քրոջս համոզել, որ մենք երջանիկ ենք, բախտից դժգոհելու պատճառ չունենք: Իսկ վաղը, երբ համալսարանն ավարտենք, շատ**



**լավ կապրենք: Երբ քույրս ասպիրանտուրան ավարտեց, իսկ ես՝ համալսարանը, եւ արդեն ի վիճակի էինք թեթեւացնել նրա հոգսը, ավաղ, նա կյանքից հեռացավ: Ասես ամեն ինչ ձեւել - չափել էր այնպես, որ կարողանար միայն մեզ ոտքի կանգնեցնել: Ես ու քույրս մեր որդիական պարտքը մի փոքր անգամ չկարողացանք վերադարձնել:** *Վերջը՝ հաջորդիվ*

AZG NEW MSHAKUIT.QXD 29/03/2018 20:44 Page 3



# Առանց ցեղասպանվածի «խեղճության համախտանիշի»

**Սիրանույշ ԳԱԼՍՏՅԱՆ**

Կինոգետ, արվեստագիտության թեկնածու

«Ու երբ աշխարհին Շեքսպիր, Վոլտեր, Գյոթե տված Եվրոպային կուրացրեց ռազմի արնաթաթախ մառախուղը, ինչ-որ մի հեռավոր լեռնային երկրում զոհվեց մի ողջ ժողովուրդ: Այս մասին մոռացան: Մարդկությունը մոռանում է իր խայտառակությունը: Մեծ, վախկոտ մոռացումը պաշտպանիչ լիսեռ է, որի հետեւում մարդասպանները հրեշների ատամներ են ցանում իրենց դաշտում»: Սույն մեջբերումն արվում է գերմանացի հրապարակախոս, Առաջին աշխարհամարտի տարիներին Թուրքիայում գերմանական ռազմական առաքելության պարագլուխ, գեներալ Լիման ֆոն Սանդերսի համհարզ եւ թարգմանիչ **Հենրիխ Ֆիրբյուխերի**՝ 1930 թ. հրատարակված «**Հայաստան-1915. թե ինչ է թաքցրել կայզերական կառավարությունն իր գերմանացի հպատակներից: Մշակութային ժողովրդի ոչնչացում Թուրքիայի կողմից**» գրքից:

Եվ այն հայերի ցեղասպանության ոչ միայն փաստագրում է, այլեւ ակնառու փաստարկ առ այն, որ մշտապես եւ անընդհատ չի լռություն պահպանվել XX դարի այդ սահմռկեցուցիչ ոճրագործության շուրջ (ուրիշ հարց, որ ցանկացել են մոռանալ, եւ ոմանք ամեն ինչ արել եւ մինչ օրս անում են, որ մոռացվի): Այդ հանցավոր լռությունը Ֆիրբյուխերից առաջ եւ հետո խախտողներ դարձյալ եղել են. Հենրի Մորգենթաու, Յոհաննես Լեփսիուս, Արմին Վեգներ, Ջեյմս Բրայս եւ շատ ուրիշներ: Լեհական հրեա Ռաֆայել Լեմկինն էլ «ցեղասպանություն» եզրույթը ստեղծել է՝ հիմնվելով, նախ եւ առաջ, Հայոց Մեծ եղեռնի փաստերի վրա: Այնպես որ, եթե չլինեին այս բոլոր մարդիկ եւ նրանց վկայությունները, այսօր շատ քիչ փաստեր ու փաստարկներ կունենայինք մենք՝ իբրեւ ապացույցներ ցեղասպանության միջազգային ճանաչման համար: Ուստի, ավելորդ է նշել, թե Ցեղասպանությունը վերապրածների վկայություններից բացի, որքան կարեւոր են օտարների վկայությունները: Նույնը կարելի է ասել եւ ֆիլմերի մասին:

Մի կողմ դրած այն հանգամանքը, որ ամենատարբեր պատճառներով մենք նույնպես շատ քիչ ֆիլմեր ենք նկարել այս թեմայով, պարզապես ամրագրենք օտարների կողմից նկարված ֆիլմերի կարեւորությունը: Իհարկե, այն սակավաթիվ ֆիլմերը, որ ստեղծվել են, տարբեր են թե՛ իրենց արժանիքներով, եւ թե՛ իրենց թերություններով: Ստեղծագործության, մանավանդ կինոյի լեզվով դեռեւս շատ պիտի խոսվի մեր ցավի մասին: Հոլոքոստի մասին հարյուրավոր ֆիլմեր են նկարահանվել, ընդ որում, ամենատարբեր ժանրերի, չնայած **Թեոդոր Ադոռնոյի**՝ «Աուշվիցից հետո բանաստեղծություն գրելը բարբարոսություն է» հայտնի խոսքերին: Շարունակ նոր ֆիլմեր են հայտնվում, որպեսզի մարդկության հիշողությունը հանկարծ չթուլանա, այլ ընդհակառակը՝ ժամանակ առ ժամանակ թարմացվի: Այդ հեղինակները շարունակում են նորանոր ստեղծագործական ուղիներով անդրադառնալ այդ թեմային, թեեւ պատմաքաղաքական իմաստով այդ խնդիրը ճանաչված եւ լուծված է առավել քան կես դար առաջ: Այո, սակայն մարդկային, համամարդկային իմաստով այդ խնդրին լուծում չկա, ինչպես որ Հայոց Մեծ եղեռնի դեպքում է: Այդ իսկ պատճառով, Հայոց ցեղասպանության թեման կինոլեզվով դեռեւս բավական եւ բազմակողմանի մշակվելու կարիք ունի: Եվ այդ պիտի արվի ոչ թե հանուն կինոարվեստի, նրա արտահայտչամիջոցների զարգացման, այլ առաջին հերթին՝ հանուն ողջ մարդկության իրազեկման, առհասարակ, հանուն մարդկայինի ու մարդկայնության՝ հաշվի առնելով կինոյի՝ մասսայականությամբ ընձեռված հնարավորությունները: Այս խոսքերն ասում եմ, նախ եւ առաջ, իբրեւ հայ եւ վերապրածների թոռ, ով պահանջատեր է եւ բնավ չի տառապում «ցեղասպանվածի խեղճության համախտանիշով», ու հետո միայն՝ իբրեւ կինոգետ:

Հիմա այն մասին, թե ինչպես են մեզ մոտ ընդունվում այդ թեմայով նկարված ֆիլմերը: Դարձյալ մի կողմ դնելով այն հանգամանքը, որ առհասարակ, յուրաքանչյուր գործ՝ անկախ բովանդակությունից, շատ սուբյեկտիվ է ընկալվում, փաստենք նաեւ, որ մենք ուրիշ կերպ ենք նայում եւ ընկալում այդ ֆիլմերը, օտարները՝ այլ կերպ: Սակայն տպավորությունն այնպիսին է, որ մենք (ինքներս ոչինչ չարած, «մարդաչնման-մարդաչհավան»՝ կասեր լուսահոգի տատս) սպասում ենք, թե երբ կհայտնվի պատմական եւ ազգային այդ խնդրին առնչվող որեւէ ֆիլմ, որպեսզի դժկամությամբ ընդունենք կամ նույնիսկ քարեր նետենք վրան՝ հաճախ առաջ ընկնելով ժխտողական հսկա բանակից կամ առնվազն պարզապես ջուր լցնելով նրանց ջրաղացին: Մոռանում ենք, որ անկախ օբյեկտիվ գնահատականից՝ այդ ֆիլմերի մասին, հիմնականում, նախապես գնված, պատվիրված կարծիքներ են հայտնվում օտար մամուլում եւ կայքերում, չենք էլ հասկանում, որ այս հարցն անկախ ամեն ինչից քաղաքականացվում է, եւ խանգարողներն առանց այն էլ շատ են, իսկ մենք անգիտակցաբար միանում ենք նրանց:




Ինչո՞ւ: Այն, որ այդպիսի մասշտաբ ունեցող պատմական տրավման չի կարող տեղավորվել մարդու ուղեղում, օրինաչափ է եւ հասկանալի: Եվ գուցե մեր ենթագիտակցությունն է, որ իրականում, մերժելով այդ արհավիրքն իր հիրավի անտանելի մանրամասներով, մերժում է եւ դրա պատկերման ամեն մի փորձ, քանի որ այն վերապրում է ենթադրում: Սակայն ենթագիտակցական մակարդակում տեղի ունեցող այդ բարդ ներքին պրոցեսները թողնենք հոգեվերլուծաբաններին եւ ինքներս մեզ հարցնենք՝ ի՞նչ ենք սպասում այդ թեմայով հերթական ֆիլմից:

Աշխարհին շատ քիչ հայտնի, կինոյում շատ քիչ հնչեցված այդ թեմայով հայտնված յուրաքանչյուր ֆիլմ դիտելիս արդյո՞ք մեր ակնկալիքն այն չէ, որ այդ մի ֆիլմն ամեն ինչ կասի ցեղասպանության մասին, ընդգրկելով անընդգրկելին՝ կփոխհատուցի մեր տառապանքները, կլուծի բոլոր խնդիրները եւ կտա բոլոր հարցերի պատասխանները... Այս միամտությունը թերեւս ներելի կլիներ, եթե ժամանակ առ ժամանակ չլսեի պարզունակ եւ մակերեսային կարծիքներ կամ չբախվեի պարզապես ժխտողական ընկալումների՝ առանց որեւէ լուրջ, վերլուծական հիմնավորման:

Այդ իսկ պատճառով, հասկանալով եւ, միաժամանակ, չհասկանալով մեր կինոհանրության լռությունը, չէի կարող անտարբեր մնալ եւ անարձագանք թողնել **Նաիր Յանի «Ցեղասպանվածի խեղճության համախտանիշով»** հոդվածը («**Ազգ**», 2018, մարտի 9), մարտի 5-ին «Մոսկվա» կինոթատրոնում ցուցադրված «**Ժխտման ճարտարապետները**» փաստավավերագրական ֆիլմի վերաբերյալ (ռեժիսոր՝ **Դեվիդ Լի Ջորջ**), որի պրոդյուսերներն են դերասան **Դին Քեյնը**, որն ավարտել է Փրինսթոնի (ոչ Ունսթոնի, ինչպես հոդվածագիրն է գրում) համալսարանը՝ ստանալով պատմության բակալավրի աստիճան (բնավ պետք չէ առավելապես կենտրոնանալ եւ անգամ բացասական բան փնտրել վերջինիս՝ Սուպերմենի դերում հանդես գալու փաստի մեջ), եւ **Մոնթել Վիլյամսը**, որը երկար տարիներ զբաղվում է ռազմական պատմությամբ: Ինչպես նշում է հոդվածի հեղինակը, ֆիլմն ստեղծվել է պատմաբանների եւ փորձագետների խորհրդատվության օգնությամբ, եւ աշխատանքներն էլ տեւել են 4-5 տարի: Այսինքն՝ հապճեպ արված գործ չէ, որպիսի տպավորություն է թողնում իր՝ Նաիր Յանի քննադատական հոդվածը, որտեղ բացակայում է ֆիլմի համակողմանի դիտարկումը: Դժվար է հասկանալ, թե ինչու է այդքան վրդովված եւ վիրավորված հեղինակը՝ գրելով. «Ազգային արժանապատվություն ունեցող յուրաքանչյուր հայ իրեն ոչնչացված, ջախջախված կզգա, եթե դիտի ֆիլմը: Այնպիսի զգացողություն է, կարծես 100 տարի հետո ոչինչ չի փոխվել...»: Իսկ ինչ է, շա՞տ բան է փոխվել աշխարհում, էլ չենք ասում՝ ջարդերի ենթարկվածների կյանքի պայմաններում՝ լինի 1915թ. վերապրած 109-ամյա Եպրաքսի տատը, թե Բաքվի կամ Սումգայիթի ջարդերից փրկված, սակայն իրենց ամուսիններին ու որդիներին եւ ամեն ինչ կորցրած կանայք: Եվ կամ՝ մի՞թե նույն զգացողությունը չունեցանք ապրիլյան քառօրյա պատերազմի օրերին, սահմանին տեղի ունեցող իրադարձությունների հետ մեկտեղ՝ հետեւելով «մեծ» աշխարհի տերությունների արձագանքներին... Նույնը չէ՞ր աշխարհը, ինչ եւ մեկ դար առաջ:

Իմիջիայլոց, ֆիլմում ներկայացված այլ արժեքավոր, հանդիսատեսին իրազեկող արժանահավատ փաստերի եւ փաստաթղթերի հետ միասին, հոդվածի հեղինակի ուշադրությունից զարմանալիորեն դուրս է մնացել ֆիլմում շեշտված մի հանգամանք. ապրիլյան քառօրյա պատերազմն սկսվեց Օբամայի եւ Ալիեւի հանդիպումից երկու օր անց:

Ի դեպ, ինչո՞ւ դժգոհել ֆիլմից ու նրա հեղինակներից, որովհետեւ բարձրաձայնել են, որ 1894-1896 թթ. համիդյան կոտորածներից սկսած, 1915-1923 թթ. Ցեղասպանությունը, այնուհետեւ՝ հարեւան երկրում անցյալ դարավերջի 1988-1990-ական թթ. տեղի ունեցած ջարդերը միեւնույն շղթայի օղակնե՞րն են (եւ դա այն դեպքում, երբ աշխարհն առհասարակ գրեթե ոչինչ չգիտի այդ ամենի մասին): Թե՞ որովհետեւ ֆիլմում հստակ հիմնավորվում է, թե ովքեր են «ժխտման ճարտարապետները»: Եվ այդ ոչ միայն 100-ամյա (այլ ոչ թե 120-ամյա, քանի որ ադրբեջանական պետությունն ստեղծվել է 1918 թ. միայն) «թուրք-ադրբեջանական միասնական ճակատի հաստատուն քաղաքականության» մերօրյա կրող եւ ներկայացուցիչ «Ալիեւ-Էրդողան եղբայրական» միությունն է (ինչպես միանշանակ եզրահանգում է Նաիր Յանը), այլեւ նրանց սատար կանգնող տերությունները՝ Միացյալ Նահանգները, Բրիտանիան եւ այլք: Վերապրածների ներկայությանը եւ վկայություններին զուգահեռ ֆիլմի առանցքային, տանող դրամատուրգիական գիծը Հայոց ցեղասպանության բացահայտ եւ ցինիկ ժխտումն է հանձին Ամերիկյան կոնգրեսի 31 անդամների անտարբեր պահվածքի, որ ակնհայտորեն թուրքական լոբբինգի արդյունք է, ինչի մասին նույնպես ասվում է ֆիլմում:

Այստեղ մի շարք տեսանկյուններից, մի քանի հարթություններում է ներկայացված Հայոց ցեղասպանության խնդիրը՝ թե՛ իբրեւ պատմական իրողություն, եւ թե՛ իբրեւ քաղաքական ժխտման ենթակա իրողություն, այլ ոչ թե իբրեւ զուտ «մարդու իրավունքների խախտման խնդիր», ինչպես կարծում է հոդվածագիրը: Ֆիլմի հերոսուհիներից մեկը, որ նույնպես առանցքային դեր ունի բազմաթիվ այլ խոսնակների արտաբերած կարծիքների միջեւ, ներկայումս ԱՄՆ քաղաքացի է եւ, դատելով անգլերեն լեզվի արտասանության որակից՝ կարելի է հետեւություն անել, որ բավական ինտեգրված է այդ երկրի իրականության մեջ: Սակայն վերջինս չի կարողանում մոռանալ ոչ միայն իր, այլեւ իր ընտանիքի երեք սերունդների ցավը՝ ասելով, որ երեք անգամ կորցրել են ամեն ինչ, կորցրել են այն հողը, որտեղ ապրել են դարեր շարունակ: Իսկ կադրում Թալիշ գյուղն է, ինչը նշվում է ենթագրում:

«Հայոց ցեղասպանության փաստը դարձյալ ներկայացվել է խղճահարություն առաջացնելու, արցունքներ քամելու համար: Ցնցոտիավոր որբերի շարք, մարդկային սովալլուկ խմբեր՝ 1915-ին, նույն տեսարանները Բաքվում, Սումգայիթում...»,- դարձյալ դժգոհում է հոդվածի հեղինակը: Մի կողմ դնելով արդեն իմ վրդովմունքն այս նկարագրության առնչությամբ (պատկերացնում եք, որ որեւէ հրեա երբեւէ իրեն թույլ տա նման ձեւով արձագանքել համակենտրոնացման ճամբարում արված՝ իր հայրենակիցների լուսանկարների կամ արխիվային կադրերի ներկայացմանը որեւէ ֆիլմում)՝ հետաքրքրական է իմանալ, թե ուրիշ ի՞նչ փաստագրական նյութ կարող է ներկայացվել՝ իբրեւ ցեղասպանության փաստաթուղթ եւ վավերագրություն... Եվ ինչո՞ւ չհամաձայնվել ու դարձյալ բողոքարկել, երբ ֆիլմում հնչում է, որ 20-րդ դարում եւ մեր օրերում տեղի ունեցող ցեղասպանությունները շարունակվում են, որովհետեւ Հայոց ցեղասպանությունն իբրեւ առաջին մեծ մարդկային աղետ, անպատիժ է մնացել: Դրա վկայությունն է նաեւ ֆիլմում հիշատակված «Ո՞վ է հիմա հիշում հայերին» հիտլերյան հայտնի արտահայտությունը, ինչին հետեւել է հրեաների ցեղասպանությունը: Վերջին տարիներին էլ աֆրիկյան որոշ ցեղախմբերի եւ նրանց ղեկավարների կողմից ոչնչացվել են ուրիշ ցեղախմբեր, իրենց իսկ հողի վրա՝ Ռուանդա, Դարֆուր, Սուդան եւ այլն: Մարդկային արյունը միշտ նույն գույնն ունի՝ անկախ մշակութային առանձնահատկություններից:

→Դ

AZG NEW MSHAKUIT.QXD 29/03/2018 20:44 Page 4



**Արծվի ԲԱԽՉԻՆՅԱՆ**

# Մեր պարուսույցը Հոնկոնգում



## Պարող-պարուսույց Դավիթ Վարդանյանը Մալայզիայում հայ բալետի հյուրախաղերի եւ իր գործունեության մասին

*Զրուցակիցս՝ ծնունդով երևանցի պարող եւ պարուսույց **Դավիթ Վարդանյանը**, շուտով երկու տարի կլինի, ինչ բնակվում է Հոնկոնգում: 1997-2003 թթ. նա ուսանել է Երևանի պարարվեստի ուսումնարանում, 2003-2005 թթ. ուսումը շարունակել է Գերմանիայում՝ հայտնի պարուսույց Պյոտր Պեստովի մոտ: Մասնակցել է Բոլձանոյի (Իտալիա) պարի միջազգային մրցույթին, որտեղ զբաղեցրել է 2-րդ տեղը, իսկ Ստամբուլի մրցույթին մասնակցելով՝ դուրս է եկել եզրափակիչ: Առնական եւ վայելչատես հայորդին աշխատել է Շլեզվիգ-Հոլշթայնի թատրոնում, Շթութգարդի բալետի խմբում, Դրեզդենի օպերային թատրոնում, Ամստերդամի ազգային բալետում եւ Անտվերպենի (Բելգիա) Թագավորական բալետում: Գլխավոր դերապարերով հանդես է եկել ինչպես դասական երկացանկում, այնպես էլ Կիլիանի, Ֆորսայթի, Նոյմայերի, Քրանքոյի, վան Մանենի, Էկի, Դեյվիդ Դոսոնի եւ շատ ուրիշ հայտնի պարադիրների բալետներում...*

**-Դավիթ, վերջերս Մալայզիայում էիր, որտեղ մեր բալետի խումբը հյուրախաղերի էր մեկնել...**

-Այո, չէի կարող չգնալ Մալայզիա՝ լինելով աշխարհագրականորեն մոտիկ, մանավանդ որ եկել էին ուսուցիչս՝ Արմեն Գրիգորյանը ու նրա որդին՝ Ցյուրիխում աշխատող պարող, իմ լավ ընկեր Արման Գրիգորյանը, որը նույնպես ելույթ ունեցավ խմբի հետ: Մեր բալետային խումբը հրավիրվել էր առաջին հերթին Արամ Խաչատրյանի բալետները ներկայացնելու: Մալայզիայի մայրաքաղաք Կուալա-Լումպուրում առաջին անգամ ցուցադրվեց հայկական բալետ՝ դիվերտիսմենտներ «Գայանե» եւ «Սպարտակ» բալետներից, նաեւ «Կարապի լիճը» եւ «Մարդուկ-Ջարդուկը» բալետների գլխավոր համարներից: Քանի որ Մալայզիան իսլամական պետություն է, համերգները կառավարական էին, մեր ելույթին ներկա էր նաեւ Մալայզիայի արքայադուստրը: Ինքս ականատես եմ եղել, որ չորս երեկոներին էլ շատ մարդ կար, ու շատ լավ ընդունեցին մերոնց կատարումները:

**-Տարիներ առաջ, երբ մեր արտիստները «Սպարտակը» ներկայացնում էին մեկ այլ իսլամական երկրում՝ Քաթարում, դերակատարուհիներին ստիպել էին փակել ոտքերը եւ թևերը: Մալայզիայում է՞լ նույնը եղավ:**

-Բարեբախտաբար՝ ոչ, այնտեղ դրվածքն այդքան խիստ չէ:

**-Դե ավելի լավ: Դավիթ, ինչպե՞ս եղավ, որ բալետն ընտրեցիր...**

-Ես չընտրեցի, ինձ տարան (ծիծաղում է): Մեր ընտանիքում արդեն կար պարային ավանդույթ: Պապիկս՝ Հենրիկ Վարդանյանը, Հայաստանի պարի պետական անսամբլի հիմնադիրներից էր եւ առաջին մենակատարը: Հորեղբայրս՝ Աշոտ Վարդանյանը, նույնպես ժողովրդական պարի կատարող է: Այնպես որ մի օր ձեռքս բռնած ինձ տարան պարարվեստի ուսումնարան, բալետի դասարան, ու իմ ճակատագիրը որոշվեց:

**-Եվ դու նույնպես, քո սերնդակից մյուս փայլուն տղաների պես, աշակերտեցիր Հովհաննես Դիվանյանին ու Արմեն Գրիգորյանին... Ո՞րն է պատճառը, որ միջազգային կարիերա անող մեր բալետի պարողներն աշակերտած են լինում հատկապես այս երկու պարուսույցներին:**

-Առաջինը՝ նրանք իրենց գործի մեծ նվիրյալներ են. այնպիսի էներգիա էին տալիս, որ սիրով ես զբաղվում ընտրածդ մասնագիտությամբ: Ի տարբերություն այսօրվա՝ ուսումնարանի մեր տարիներին չկար ո՛չ յութուբ, ո՛չ ինտերնետ, այնպես որ ամեն ինչ սովորում էինք մեր ուսուցիչներից: Հետագայում գալով արտասահման՝ մեր ունեցած հիմքի վրա շատ ուրիշ բաներ էլ սովորեցինք: Ինձնից մի քանի տարի մեծ իմ ընկերները, որ մասնակցել էին Լոզանի բալետի արտիստների մրցույթին, ասացին, որ հնարավոր է մեր կատարումների տեսագրությունն ուղարկել ու կրթությունը շարունակել Եվրոպայում: Ես այդպես էլ արեցի, տեսագրությունս հավանության արժանացավ եւ առաջարկներ ստացա միանգամից եվրոպական երեք բալետային դպրոցներից: Խորհրդակցեցի ընկեր Հովիկի ու ընկեր Արմենի հետ ու ընտրեցի Շթութգարդի Ջոն Քրանքոյի բալետի դպրոցը: Այնպես որ հայ բեմում չհասցրի հանդես գալ, քանի որ տասնինը տարեկանում արդեն դուրս էի եկել Հայաստանից: Երևանում հանդես եմ եկել ընդամենը մեկ անգամ՝ 2015-ին, «Կարմեն»-ում կատարելով Էսկամիլիոյի դերը:

**-Քրանքոյի դպրոցն ավարտելուց հետո սկսեցիր հանդես գալ տարբեր թատրոններում՝ Դրեզդեն, Ամստերդամ, Անտվերպեն... ու չնայած հաջողություններին՝ չմնացիր Եվրոպայում:**

-Հոնկոնգում հայտնվելս ուրիշ պատճառ ունի: Գիտես, որ պարողները հաճախ ենթակա են տրավմաների: Բելգիայի Թագավորական բալետում էի պարում, երբ որոշ խնդիրներ ունեցա մեջքիս հետ, այն աստիճան, որ ինձ խորհուրդ տվեցին մեկընդմիշտ թողնել պարը: Որոշ ժամանակ կարողացա անգամ այդ վիճակով բեմ բարձրանալ, սակայն խնդիրը պետք էր լուծել, ու ինձ խորհուրդ տվեցին գալ Հոնկոնգ՝ չինական բժշկության միջոցով մարզավիճակս վերականգնելու: Այստեղ պարեցի մի քանի ամիս ու որոշեցի, որ ժամանակն է անցնել իմ նախընտրած երկու այլ մասնագիտություններին՝ պարի ուսուցմանն ու մշակույթի կառավարմանը: Ու այդպես հրավիրվեցի դասավանդելու իմ ներկա աշխատավայրում՝ «SJ Ballet des arts»՝ Հոնկոնգի ամենահեղինակավոր բալետի դպրոցներից մեկում:

**-Այսպիսով, պատմության մեջ դու առաջին հայն ես Հոնկոնգի պարային աշխարհում: Բալետային կյանքը շատ է՞ տարբեր Եվրոպայից:**

-Եթե Եվրոպայում մենք երեք շաբաթ պատրաստվում էինք մոտ տասնհինգ ներկայացման համար, Հոնկոնգում երկու ամիս պատրաստվում էինք չորս ներկայացման համար: Այստեղ ռիթմը մի քիչ դանդաղ է: Մյուս կողմից, Հոնկոնգը Հայաստանի պես հետ է մնում ժամանակակից բալետի առումով. այստեղ բալետը միայն դասական է, միշտ նույն «Կարապի լիճը», նույն «Քնած գեղեցկուհին»... ժամանակակից բեմադրություններ առհասարակ չկան:

**-Սկսել ե՞ս չինարեն խոսել:**

-Միայն՝ մի քանի արտահայտություն. դրա կարիքը չկա, քանի որ բոլորը խոսում են անգլերեն: Ի դեպ, այստեղ աշխատող եվրոպացիները, ամերիկացիները մեծ մասամբ ջերմ ընդունելության չեն արժանանում, բայց երևի հայ լինելուս պատճառով իմ հանդեպ վերաբերմունքը շատ բարեհաճ էր, չնայած քչերը գիտեն հայերի մասին...

**-Եվ չնայած որ Հոնկոնգի պատմության ամենաականավոր դեմքերից մեկը նրա զարգացմանը մեծ զարկ տված հայազգի պետական գործիչ ու բարեգործ Փոլ Չաթերն էր՝ Խաչիկ Աստվածատրյանը...**

-Այո, այստեղ կա փոքրաթիվ հայ համայնք, մեկ անգամ հանդիպել եմ, չնայած կապ չկա ու առհասարակ Հոնկոնգում ժամանակս շատ հագեցած ու բազմազբաղ է անցնում: Անգամ շաբաթ-կիրակի ենք աշխատում: Ու չնայած շատ խիտ գրաֆիկիս՝ ինձ շատ լավ եմ զգում այստեղ, սիրում եմ աշխատանքս, ինձ շատ է դուր գալիս երեխաների հետ աշխատելը: Ինչպես նշեցի, աշխատում եմ նաեւ մշակույթի կառավարման ոլորտում ու մեծ ցանկություն ունեմ Հայաստանի բալետային արվեստը ներկայացնել այս տարածաշրջանում...

# Առանց ցեղասպանվածի «խեղճության համախտանիշի»

➡Գ

Կարելի կլիներ նախադասություն առ նախադասություն, պարբերություն առ պարբերություն քննել եւ հակափաստարկներով ջախջախել այս հոդվածը: Սակայն հեղինակն առանց այդ էլ իրեն «ոչնչացված, ջախջախված» է զգացել դիտումից հետո (անկեղծ ասած, ինքս նույնպես ոչնչացված ու ջախջախված էի ֆիլմի ավարտին, բայց ոչ այն պատճառով, որ հեղինակները «սխալ» ֆիլմ են արել, այլ՝ որովհետեւ այդ ամենը տեղի է ունեցել...):

Իսկ նրանց, ովքեր չեն դիտել ֆիլմը, պարտավոր եմ տեղեկացնել, որ այստեղ իբրեւ խոսնակներ անհերքելի եւ կտրուկ փաստերով ու փաստարկներով հանդես են եկել միջազգային իրավաբան, «Ո՞վ է հիմա հիշում հայերին» գրքի հեղինակ, ակադեմիկոս **Ջեֆրի Ռոբերթսոնը**, Վիքիլիքսի հիմնադիր **Ջուլիան Ասանժը**, Հետաքննությունների ֆեդերալ բյուրոյի (FBI) նախկին աշխատակից **Սիբիլ Էդմոնդսը**, Հայաստանում ԱՄՆ նախկին դեսպան



**Ջոն Էվանսը**, ում ընդմիշտ զրկեցին դիվանագիտական առաքելությունից միայն «ցեղասպանություն» բառը կիրառելու համար, հոլիվուդյան կինոաստղ **Ջորջ Քլունին**, թուրք պատմաբան **Թաներ Աքչամը**, թուրք-հոլանդացի գիտնական, ցեղասպանագիտության եւ զանգվածային բռնությունների մասնագետ **Ուղուր Ումիթ Ունգորը**, «Կալիֆոռնիա Կուրիեր» թերթի գլխավոր խմբագիր, ամերիկահայ գրող եւ հասարակական ակտիվ գործիչ **Հարութ Սասունյանը**, ամերիկահայ դիրիժոր **Ջորջ Փահլեւանյանը** եւ ուրիշներ: Ֆիլմում հիշատակվում է նաեւ **Ավրորա (Արշալույս) Մարտիկանյանը**, եւ ներառված են հատվածներ նրա մասնակցությամբ ԱՄՆ-ում 1919 թ. ստեղծված «Հոշոտված Հայաստան» ֆիլմից եւ շատ ու շատ այլ փաստեր: Բավական խիտ՝ հուզական ե՛ւ տեղեկատվական առումով, ե՛ւ հմտորեն ստեղծված այս ֆիլմը դժվար է միանգամից մարսել: Անցյալ տարի, «Խոստում» ֆիլմին իր աջակցությունը հայտնելիս «Ժխտման ճարտարապետները» ֆիլմի պրոդյուսեր Դին Քեյնն ասել էր. «Հայերը դարերով հալածվել են, նրանք եղել են քրիստոնեության առաջին բաստիոնը, եւ նրանք միակ քրիստոնեական միջնաբերդն են Միջին Արեւելքում»: Նման միտք հայտնողն, անկասկած, հասկացել է, որ այն ամենն, ինչ տեղի է ունեցել մոտ անցյալում եւ շարունակվում է այսօր Միջին Արեւելքում, անկախ «նավթային» եւ մնացած այլ պատճառներից ու նպատակներից, նաեւ հետապնդում է մեկ նպատակ՝ հայերին վտարել Միջին Արեւելքից: Իսկ մենք շատ բան չենք հասկանում, քանի որ չենք էլ փորձում հասկանալ: Օրինակ, այդպես էլ չենք կարողանում հասկանալ, թե որքան անհրաժեշտ են մեր այդ ողբերգության մասին փաստող ֆիլմերը, որ դրանցից ոչ մեկը երբեւէ չի կարող սպառիչ լինել, բայց եւ յուրաքանչյուրն իր չափով լույս է սփռում լռության մատնված, մոռացված ու չճանաչված մի ցեղասպանության վրա, որի հետեւանքները տակավին տարածվում են մեր ներկայի վրա: Եվ այն պիտի ճանաչվի ու դատապարտվի աշխարհի կողմից, որպեսզի չտարածվի աշխարհի ու նաեւ մեր ապագայի վրա: Այնպես որ, փնովելու եւ քննադատելու փոխարեն, շնորհակալ լինենք նրանց, ովքեր առանց նենգ ու կեղծ խաղերի խիզախում են ֆիլմեր նկարել ու բարձրաձայնել այս ամենի մասին, մանավանդ որ ինքներս ի զորու չենք եղել կամ աններելիորեն քիչ բան ենք արել: Իսկ խեղճ ու անպաշտպան չերեւալու համար՝ մեր քաջության վառ օրինակներ Մշո Սուրբ Առաքելոց վանքի կռվի, Վանի պաշտպանության կամ Սարդարապատի, Բաշ Ապարանի հերոսամարտերի մասին եւ կամ ցեղասպանության զոհ դարձած հանճարների կերպարները, մեր մշակույթը ներկայացնելու ու նաեւ պահպանելու ուղղությամբ արդեն եկեք ինքներս մտածենք՝ իբրեւ հոգու պարտք եւ հետագա անելիք:

Ներդիրը հրատարակված է ՀՀ մշակույթի նախարարության աջակցությամբ: